



ՎԵՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ԺԱՄԱՆԱԿԸ՝  
ԻՄ ՄՏԱՊԱՏԿԵՐՈՒՄ**

Ստեփանակերտ-2011

«Ժամանակն իմ մտապատկերում» գրքի հերոսների մի մասը տանջվել՝ ու շարունակում է տանջվել աղբրեջանական բանտերում... Մյուս մասն էլ, սպասելով նրանց վերադարձին, կրում է բոլոր առումներով իր ծանր բեռը: Վերջիններս պատերազմում անհայտ կորած ազատամարտիկների ծնողներն են եւ մյուս հարազատները: Այսօր էլ դեռ նրանք չեն կորցնում իրենց հույսն առ այն, որ պատերազմի այդ ուրույն գոհերից ովքեր դեռ կենդանի են, Աստծո եւ միջազգային առաքելությունների կամոքն ու ջանքերով մի օր դեռ տուն կվերադառնան...

Այդ հարազատների կազմակերպությունը, որ հապավված ԱԿԱՅՄ անունն ունի, Կարմիր խաչի եւ միջազգային այլ կազմակերպությունների օգնությամբ, անշուշտ՝ նաեւ սեփական նախաձեռնությունների ու գործնականության շնորհիվ, ամենատարբեր ձեւով նեցուկ է կանգնում կազմակերպության անդամ 710 ընտանիքների՝ հուսալով, որ դժվար սպասմանը երբեւէ կժպտա հաջողությունը...

Մենք՝ Երկիր մուրակի բնակիչներս, ազգային ու ռասայական պատկանելությունից անկախ, Աստծո ստեղծածն ենք, եւ արժանի ենք մեեզ տրված կարճ կյանքն ապրել ուրախության, ոչ թե վշտի մեջ... Կարելուր է, որ այլեւս ոչ մի տեղ, ոչ մի երկրում պատերազմ չլինի: Եթե պայքար է՝ ապա թող բոլորի պայքարն ուղղված լինի միայն խաղաղության հաստատմանն ու պահպանմանը՝ ամենուր. այս է Վերա Գրիգորյանի այս մի /թվով 13-րդ/ գրքի լեյտմոտիվը, գիրք՝ որը նախկիններից թերեւս քիչ-ինչ տարբերվում է սեփական ճակատագրի՝ ընդլայնած հյուսվածքով...ինչը կարելի է հասկանալ:

## ՅԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

### ԱՌ ԱՅՆ, ԹԵ ԻՆՉՈՒ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՄՏԱՅՂԱՑԱ ԱՅՍ ԳԻՐՔԸ

Երկար, շա՛տ երկար եմ մտածել ցավիս բալասան գտնելու մասին՝ ավա՛ղ... Ու պատեպատ եմ խփել գլուխս, Տառապանքի հորձանուտ մտել: Իմանայի՛ք՝ քանի անգամ եմ սայթաքել հուշերիս ժայռապռունկներին, խռովել ինձնից, հիասթափության նետ արձակել... ինքս իմ վրա: Սակայն որքան էլ այդպես՝ եղել է մի բան, միշտ մի բան՝ ինձ հետ, որ ետ է քաշել հոռի մտքերից, փրկել ինքնակործանումից. ՅԱՎԱ՛ՏՍ: Նրա՛ լիցքերով եմ ուշքի եկել: Նրանով՝ գիտակցել, որ պահի պահվածքս թույլ հոգիներին է պատշաճ, անվճռական ու կամագուրկ եակներին, մենակների՛ն... Իսկ ես՝ մենակ չե՛մ. մենակ չեմ իմ ցավի մեջ: Յարյուրավոր մայրեր կան շուրջս՝ նույն կորստի տեր...

Չլինեին, ա՛խ, չլինեին: Դա՛ էլ ուրույն ցավ է՝ երբ երկրումդ բախտից կսմթված այնքա՛ն տխուր մարդիկ կան: Ինքնասթափումի կոչելով ինձ, վկա է Աստված,- Տիրոջ անունը ես «հենց այնպես» չեմ տալիս-, նույնիսկ ապտակել եմ ինձ, որ «չափավորեմ» խռովքս: Եվ ի՞նչ. անագորույն ցավի պարտադրանքով սեւակյան տողն է այցելել ինձ՝ «Դոփել տեղում՝ անհարմար է, Ցավն է հաճախ առաջ մղում»... Ու ես մղվել՝ անցել եմ գործի: Գո՛րծ, գործ եւ նորից գործ: Ազատ պահերիս էլ գրիչն եմ առնում ձեռքս՝ ներսում կուտակվածս աշխարհին պատմելու: Այդպես են ծնվել գրքերս, այդպես է կյանքի ուղեգիր խնդրում եւ այս մեկը, որը, կարծում եմ, մյուսներից տարբերվելու է կենսագրական ատաղձի խտությամբ... Անցած ճանապարհս երեւի թե տալիս է, չէ՞, նման իրավունք:



Ճերմա՛կ թուղթ, թույլ տուր ապրումներիս պատկերը  
նկարեմ քո դեմքին:

Բառերո՛վ նկարեմ...

Ճերմակ թուղթ՝ իմ բարեկա՛մ:

Մտքերիս մեջ ինձ հետ են...անհայտ կորած ազատա-  
մարտիկների բոլոր հարազատները, թիկունքիս զգում  
եմ նրանց շնչառությունը, հոգուս մեջ՝ տառապանքն ու  
սպասումը:

Մենք սովորական մահկանացու չենք՝ վշտի ու ցաս-  
ման քայլող հուշարձան ենք: Մենք մեր գավակներին ենք  
պահանջում. ողջերի կյանքը եւ տանջամահ արվածների  
աճյունը: Հայրենի հողին պահ տալու համար:

Ազատեցե՛ք ինձ այս մղձավանջից. մշուշապատ հորի-  
զոնում դանդաղ վարգով ընթացող դիակառքեր եմ տես-  
նում: Տեսնում եմ, ու լեզուս բռնվում է: Ու խցանվում են  
ականջներս: Ու չեմ հասկանում՝ գիշե՞ր է, թե՞ ցերեկ,  
երկրի վրա՞ եմ, թե՞ դժոխքում:

Ինչու՛ ոչինչ չի փոխվում սպասումի մեր էջում: Ապրե-  
լը մեզ համար ունի լուկ մեկ խորհուրդ. չլինենք մենք՝ ո՛վ  
պիտի հիշի, եւ հիշեցնի, անհայտ կորած տղաների մա-  
սին՝ Սպարտակիս եւ իր բախտակիցների: Եվ, Աստվա՛ծ  
իմ, ո՞վ կդիմավորի նրանց՝ եթե չլինենք մենք, ի՞նչ կզ-  
գան՝ չտեսնելով մեզ: Ապրե՛լ, ապրել եւ նորի՛ց ապրել՝  
նրանց սպասելու համար:

Տեղս չեմ գտնում: Գուցե փորձեմ հայրենի գյուղիս,  
այնտեղ թողած օրերիս պատմություններով փոքր-ինչ  
խաղաղեցնել սիրտս: Հեռու եմ գուտ ինքնակենսագրա-  
կան շարադրելուց, ուզենայի էլ՝ չէր ստացվի. վայ թե ար-  
տասովոր նյութ չեղավ այնտեղ...

Երանի չէ՛ր անգույն ու սովորական՝ այդպես էլ շարունակվեր կյանքս՝ մինչեւ վերջ: Որպեսզի չլիներ մեզ մյուսներից տարբերող այս անվանումը՝ **պատերազմում անհայտ կորած զինվորի մայր, հայր, քույր, եղբայր, տատ, պապ...մի խոսքով՝ հարազատ:** Չլինե՛ր այս տարբերակումը, դասակարգման այս տեսակը:

Ուրեմն՝ ի՞նչ, քայլե՞մ հին-նոր կածանով, որի ինչ-ինչ ոլորաններում, դա էլ գիտեմ, Սպարտակիս հետ «կզրուցեմ»... 1994-ի հրադադարից այս կողմ ընկած մեր կյանքի անցուդարձերի մասին գուցե պատմե՞մ նրան: Չէ: Կան բաներ, որոնք նա չի ընդունի, չի ուզե՛նա ընկալել, որովհետեւ մեր «նոր» կյանքը՝ ետպատերազմյա հատվածը, միայն լավի պարունակներով չէ լցավորված, վատի մասին չեմ ասի, նրանք մտածել են /մենք էլ/, որ հետո միայն լավն է լինելու Ավելի լավ է տղայիս հետ խոսեմ մեր գալիք հանդիպման տեսլականի մասին: Ինչեւէ, առաջ անցնենք, թող ստացվի այն՝ ինչ կստացվի: Առանց հատուկ պլանավորելու, պահի առաջնորդությամբ: Եվ թող իմաստնություն ունենան տողերս՝ ինձ զոջման ճանապարհով չտանեն:

Շատ եմ ուզում, որ խոսքիս հնչերանգը լինի մեղմ ու հանդարտ, թեեւ դա դժվար է հուսալ իմ վիճակի մարդուց...

## **ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՄԱՆԿԱՐ**

Ես՝ Վերա Արմոյի Ծատրյանս (Գրիգորյանն ամուսնական ազգանունս է), ծնվել եմ 1953թ. մայիսի 15-ին, Ասկերանի շրջանի Խնածախ (այժմ՝ Լեռնավան) գյուղում, ծառայողի ընտանիքում: Մեծ չէ մեր գյուղը, բայց յուրաքանչյուր տոհմ, նույնիսկ ամեն մի ընտանիք, իր ինքնատիպ կենցաղն ու սովորույթներն ունի, հոգսերն ու նկարագիրը:

**Գյուղ չէ՝ համերաշխ ու աշխատասեր մե՛ծ ընտանիք է՝  
իր ներքին օրենքներով, հյուրընկալությամբ, համեստու-  
թյամբ, բարեպաշտությամբ: Ընդհանրապես Արցախի  
յուրաքանչյուր բնակավայր՝ գյուղ լինի, քաղաք, ավան  
թե էլ ինչ, նման է մեղվափեթակի...Եթե սխալ կամ  
անարդար «շարժում» արեցիր՝ կթափվեն վրադ՝ դարձի  
բերելու...Նեղության թե ուրախության պահին բոլորը  
քեզ հետ են:**

Հայրս՝ Արմո Գրիգորի Ծատրյանը, կոլտնտեսություն-  
նում երկար տարիներ տրակտորիստ է աշխատել: Հան-  
դարտ, մեղմաբարո, օջախին նվիրված մարդ էր ու լավ  
մասնագետ, քանիցս պարգևատրվել, մեդալներով,  
պատվոգրերով, թանկարժեք նվերներով: 2002 թվակա-  
նին հրաժեշտ տվեց երկրային կյանքին...

Մայրս՝ Նորա Ավագի Պետրոսյանը, ծննդով դարձյալ  
մեր գյուղից, երկար տարիներ բանվոր է աշխատել 26  
կոմիսարների անվան Ղարմետաքսկոմբինատում: Հիմա  
թոշակառու է:

Տանը 6 երեխա էինք՝ 4 եղբայր, 2 քույր: Եղբայրներիցս  
մեկը հիվանդացավ եւ տառապանքի դրոշմը դեմքին,  
կյանքի ծարավը սրտում վաղաժամ մահացավ:

Ավագ եղբայրս՝ Վլադիմիրը, որ ավարտել էր Երեւանի  
մեքենաշինական տեխնիկումը, դարաբաղյան շարժու-  
մից առաջ աշխատում էր Ստավրոպոլում՝ հիմա էլ ըն-  
տանյոք հանդերձ այնտեղ է ապրում:

Ես մեր ընտանիքի երկրորդ զավակն եմ, ինչպես  
ասում են՝ծնողներիս հեղինակած երկերի երկրորդ հա-  
տորը: Երրորդը միջնեկ եղբայրս է՝ Վագիֆը, որը գործուն  
մասնակցություն է ունեցել դարաբաղյան շարժմանն ու  
պատերազմին, ամուսնացած է, ունի 2 զավակ եւ շարու-  
նակում է ծառայել ԼՂՀ Պաշտպանության բանակում:  
Փոքր եղբայրս՝ Վազգենը, միջին բուժաշխատող՝ նույն-

պես ազգային-ազատագրական շարժման ու պատերազմի մասնակից է, մարտերից մեկում վիրավորվեց, հիմա գրեթե անաշխատունակ է: Սրանից հինգ տարի առաջ առողջությանը հարիր աշխատանք չգտնելով՝ տեղափոխվեց մեծ եղբորս մոտ, հենարան ունենալու համար... Շարունակական բուժման կուրսեր է ընդունում, պատերազմից մնացած վերքերն անհանգստացնում են:

Փոքր քույրս՝ Սիլվան, Շարժումից առաջ ամուսնացած էր եւ բնակվում էր Բաքվում: Հայտնի պատճառներով, բռնագաղթածի կարգավիճակով, վերադարձավ հայրենիք: Ամուսինն՝ Արամայիսը, Արցախյան պատերազմի երդվյալ ազատամարտիկներից է, մասնակցել է Շուշիի ազատագրմանը, վիրավորվել, 2-րդ կարգի հաշմանդամ է, ԼՂՀ վետերանների միության անդամ: Նրանք ունեն 2 երեխա. տղան Պաշտպանության բանակի սպա է, աղջիկն աշխատում է առողջապահության նախարարությունում:

Այսպիսին է մեր ընտանեկան համանկարը: Ավելորդ չեմ համարի ասել, որ բոլորս միմյանց հասկացող, հաշտ ու համերաշխ քույր-եղբայրներ ենք, մեկս մյուսին նեցուկ ու հավատարիմ: Ապրում՝ մաքառում ենք, արցախցու ասած՝ «քարին քացի տալով», առավելի հույսով աղոթելով Աստծուն, թեեւ... դրանից հոգսերը չեն պակասում, չէ՛:

Այդպես է. ամեն մարդ իր խաչը պետք է կրի, ինչ մեր ճակատին է գրված՝ պետք է կատարվի: Առ այսօր ոչ մի գիտության հասու չէ կարդալ «ճակատի գիրը»... Փիլիսոփայելու գայթակղությունն ինձ հեռուն կտանի, ավելի լավ է ամեն ինչ կարելվույս չափ հերթով պատմեմ: «Հերթ» ասածն էլ թեեւ նույնպես անօգուտ է, համենայնդեպս՝ իմ պարագայում...



Վերջերս ինձ համար «հայտնագործություն» եմ արել. չար ուժերը խժռում են տկարներին: Շարունակե՞մ, թե ոչ, ախր շարադրանքիս տրամաբանությունն ուզում է «գծից» դուրս գալ, ու ես պատումային վթարի հոտ եմ զգում: Ի՛նչ արած, պրոֆեսիոնալ գրող չեմ՝ մտածեմ խոսքիս կառուցվածքի, ոճի, կերպարների մասին, իմ «չոր գլուխն» ու սպասումի ցավն են ափիս մեջ Շարադրողի գրիչ դրել՝ ինձ դարձրել ե՛լ զինվոր /մաքառելու իմաստով/, ե՛լ հույսի մարմնացում, ե՛լ... լալկան ուռի: Այն եմ՝ ինչ կնոջ համար աշխարհում նախատեսված է Աստծո կողմից, բայց ամենից առաջ, ամենից շատ՝ մա՛յր եմ... Անհայտ կորած հարյուրավոր ազատամարտիկների ՄԱՅՐԸ: Մաթեմատիկայի լեզվով ասած՝ կյանքի մի հավասարում եմ՝ բազմաթիվ անհայտներով, որի լուծման եղանակները, բանալիները դեռ ոչ ոք չի գտել... Եվ ես իմ ապրած կյանքով ու կենսագրությամբ ցանկանում եմ, ավելի ճիշտ՝ փորձ եմ անում, գտնել դրանք: Իսկ կենսագրությանս էջերը մեկ-մեկու հետեւից գալիս՝ ճնշում են ինձ... Մտքերս պղտորվում են, տազնապներս՝ շերտավորվում, ես էլ հնազանդվելով նրանց իշխանությանը՝ պատեպատ եմ խփվում:

**Ո՞ւմ մեղադրեմ, կյանքս է այդպիսին ստացվել. ճակատագիրս ձուլվում է որդու ճակատագրին...**

Տեսնու՞մ եք՝ ճնշումների ինչ հորձանուտի մեջ եմ, որ չեմ կարողանում դառնալ ելման կետին. ինքնադիմանկարի վրձնահարվածների գույնի եւ գծի ամբողջական զգացողությունը կորցնում եմ, գոնե մտքիս կտրված թելի ծայրերն իրար կապեմ, որ խոսքս շարունակվի: Համբերեք, մի քիչ էլ համբերեք՝ «գիտակցության» գամ, մտովի շրջապատեմ ինձ բախտակիցներիս հայացքներով, «թելն ասեղի անցքով անցկացնեմ», մթազնած ուղեղս փոքր-ինչ լույսի ֆոն ստեղծի, որ գրիչս թաթախեմ այդ

լույսով ու շարունակեմ կենսա՞- թե՞ դժոխքա-պատումս: Չասա այս կետին եւ ինքս ինձ հարցրի. բայց ի՞նչ կապ ունեն մանկությանդ ու պատանեկությանդ անհոգ օրերը ներկայիս ողբերգական հյուսվածքի հետ, արդյո՞ք լա՞վ է, որ խառնես իրար: Չգիտեմ, ոչինչ չգիտեմ՝ բացի նրանից, որ կյանքն ինձ համար դարձել է անվերջանալի գիշեր՝ եւ կապարի պես ծանր՝ նստել-մնացել է սրտիս եւ բզկտված հոգուս: Հիմա աչքերս լոկ տամկանում են /առաջվա պես արցունքի գետեր չեն հոսում/, հիմա համատարած ամայություն է իմ գիշերը, մառախլապատ տարածք: Հիշողությանս մոխիրը մատով խառնում եմ՝ ձեռքիս փոխանցվող աննշան ջերմությունից զգում, որ չմարած կայծեր կան... Փա՛ռք Աստծուն: Ինձ այս կյանքի հետ կապող հույսի դեր են ստանձնում դրանք եւ պարտադրում կամք վերստանալ: Կամաց-կամաց վերագտնում եմ ինձ, նորից աշխարհին նայում հավատով... Առաջին գծում հայտնված կապավոր՝ հեռախոսալարի զույգ ծայրի փոխարեն իրար եմ ագուցում... հուշերս, որպեսզի անցած օրերի լավով հաղորդակցվեմ անհայտության մեջ գտնվող մեր զավակների հետ, զորակցեմ նրանց՝ չկորցնեն հոգու կորովը, մխիթարեմ ասեմ՝ վաղ թե ուշ հանդիպելու ենք՝ այս անցավոր թե մյուս՝ հավերժական կյանքում, ուր միայն հոգիներն են գրուցում: Գուցե մեկ ուրիշ լեզվով, մեկ այլ բարբառով... Այնժամ, ասեմ, հոգու տոն կլինի բոլորիս համար...

Մանկությունս նման էր շատերի մանկությանը. դպրոց եմ հաճախել հայրենի գյուղում, հայոց Այբուբենի տառերն իմ աչքին էլ են եղել զորագունդ՝ պատմության քառուղիներում, եւ ամենամեծ հրամանատարը եղել է Մաշտոցը, էլի Սեւակի տողով ասեմ՝ մեր «անվախճան երթի զավազանակիրը»: Վատ չէի սովորում, հասարակական

աշխատանքներում եւ ընդհանրապես դպրոցական առօրյայում էլ ակտիվ եմ եղել, նույնիսկ քիչ էլ չարաճճի եւ, ինչ թաքցնեմ, ինքնասածի... Ընկերասեր էի /իբր հիմա այդպիսի՞ն չեմ, գուցե անգամ ավելի շատ եմ սիրառատ՝ քան այն հեռավոր տարիներին, քանզի ետընթացի կյանքն ինձ սովորեցրել է ընկերոջ լավն ու վատը տարբերելը եւ այդ համատեքստում լավին արժանվույնս գնահատելը, նրան փոխադարձ սեր ու մտերմություն տալը/: Բարի էի, անմիջական: Սիրել էմ մանկական խաղեր խաղալ, երգել, պարել, տնային գործերում օգնել եմ մորս /ի դեպ՝ եղբայրներս էլ՝ հորս/: Քանի որ մեր դպրոցն այն ժամանակ ութամյա էր, միջնակարգն ավարտեցի հարեւան Բալլուջա գյուղում (այժմ՝ Այգեստան): Սկզբում դժվար էր նոր միջավայրում, բայց հետո ընտելացա, մտերմացա բոլորի հետ: Մեծանալով՝ այո, ես էլ առաջին սիրահարություն՝ սիրասթափություն ունեցա... Դասերից փախչելու, դասին անպատրաստ ներկայանալու, տնային աշխատանքները չկատարելու դեպքեր... շատ չէ՝ բայց ունեցել եմ՝ ինչպես, երեւի, յուրաքանչյուր դպրոցական: Այս իմաստով դպրոցական տարիները, հատկապես բարձր դասարաններում, կանվանեի երազանքի տարիներ, կյանքի օվկիանը մտնելու նախապատրաստական շրջան՝ թե գիտելիքի ձեռքբերման ու թե կյանքի ճանաչման առումով: Իսկ ավելի ստույգ՝ դրանք մի թելով երազանքի տարիներ էին, մյուսով՝ լրջանալու... Զիմա, տասնամյակների հեռվից, ինչպիսի՞ կարոտով եմ հիշում դպրոցական ընկերներիս, ուսուցիչներիս, մտովի ներդրություն հայցում նրանցից, ում «դառնություն» եմ պատճառել...

Տասնամյակն ավարտելուց հետո, բնականաբար, յուրաքանչյուրը ձգտում է կյանքում գտնել իր տեղը: Իմ ցանկություններն ու երազանքները վարդագույն էին,

փափագում էի ուսումնա իսկույն շարունակել բուհում, բայց... Այն ժամանակ Հայաստանի հետ Ղարաբաղի կապը հեղիեղուկ էր, եւ շատերը սովորելու էին գնում Բաքվի մանկավարժական ինստիտուտ: Անկեղծ ասած՝ ես էլ էի դրա թաքուն հույսը փայփայում, բայց ինձ ո՛վ կթողներ Բաքու գնալ... Այդ հարցում ծնողներս շատ էին պահպանողական ու խստաբարո: Ստիպված էի ենթարկվել նրանց վճռին՝ ավելորդ խոսքուզրույցի տեղիք չտալու համար: Բայց սովորելու ցանկությունը մեջս եռում էր, եւ ընդունվեցի Ստեփանակերտի սովխոզ-տեխնիկում՝ տեխնիկ-պլանավորողի մասնագիտություն ուսանելու: Չէի ասի, թե դա սրտիս մոտ մասնագիտություն էր: Ոչ, այն չէր բխում իմ նախասիրություններից, բայց որ ընդունվել էի, պիտի՛ սովորեի, հորս ու մորս պատիվը գետնով չտայի:

Տեխնիկումի առօրյան, ճիշտն ասած, դպրոցականից քիչ բանով էր տարբերվում: Ինձ համար միակ նորությունը մասնագիտական առարկաներն էին: Այստեղ էլ տարբեր խմբակներ էին գործում, տոնական օրերին միջոցառումներ էինք կազմակերպում՝ խորհրդային երկրին բնորոշ բովանդակությամբ ու երանգներով, կեղծ շքեղությամբ ու «ինտեռնացիոնալ խանդավառությամբ»: Բայց եւայնպէս՝ բոլորս համակված էինք այդ մթնոլորտով եւ անվերապահ հավատ էինք ընծայում մեզ մատուցվող քարոզչությանը: Ինչպէս մեծ երկրում բոլորը՝ եթե հաշվից դուրս գրենք... «դիսիդենտներին», որոնք մեզնից անհամեմատ շատ գիտեին եւ դրա համար տուժում էին իշխանություններից:

Ուսանողության տարիներին էլ ծանոթացա ապագա ամուսնուս հետ: Նա բանվոր էր կահույքի ֆաբրիկայում: Մայրս ընկերություն էր անում Շուրայի մոր հետ... Հետո, շատ ուշ, իմացա, որ մայրս որոշել էր Շուրայի քրոջը

հարս բերել մեր տուն՝ մեծ եղբորս համար, բայց ընկերուհին ավելի հաշվենկատ ու գործնական գտնվեց՝ փոխեց «սցենարը»... Կարճ ասած՝ ինքս էլ չնկատեցի, թե իրադրությունն ինչպես շրջվեց 180 աստիճանով: Ինձ համար էլ, ինչպես կարգն է, խնամախոսության եկան մեր տուն, ու քանի որ կողմերն «ըստ ամենայնի» ճանաչում էին միմյանց, առանձնապես «բանավեճ» չեղավ: Տնեցիներն ընդունված կարգով սեղան բացեցին, կերան, խմեցին, զրուցեցին, եւ համաձայնությունը կայացավ: «Խոսք առնելուց» հետո շուրջ երեք տարի Շուրան ստիպված էր սպասել՝ մինչ կավարտեի տեխնիկումը: Յետո նշանդրեք եղավ, որին հաջորդեց հարսանիքը:

Յուրաքանչյուր հարսանիք, ընդհանուր գծերով հանդերձ, երեւի ունենում է նաեւ առանձնահատուկ բնույթ: Բայց կարելուրդ ոչ թե դա է, այլ՝ զույգի հետագա ճակատագիրը. այն, թե նրանք, արդյո՞ք, երջանիկ են զգալու իրենց՝ համատեղ կյանքում: Ամուսնությունից հետո մենք ապրում էինք առանձին /ինչը երեւի լավ էր/, բայց՝ վարձով /ինչը հաստատ վատ էր/: Այդուհանդերձ՝ ամեն ինչ կարծես նորմալ հուսով էր ընթանում, քանզի կային փոխադարձ սեր եւ փոխըմբռնում, հարգանք ու ներողատություն: Շուրան հարգված տղա էր, աշխատավայրում ասում էին՝ «ոսկի մատներ» ունի: Իրոք՝ բազմաշնորհ արհեստավոր էր: Շուրջ 40 տարի աշխատել է բազմանդամ կոլեկտիվում, եւ գործընկերների ու ղեկավարության կողմից նրա հանդեպ հարգանքը երբեք չի նվազել: Բոլորն, առանց բացառության, վկայում էին, որ նա մեմենակ իր որակյալ աշխատանքով կարող է փոխարինել 10 բանվորի: Ընդամենը ութամյա կրթություն ունեւ, բայց շատ պարտաճանաչ ու պատվասեր էր եւ ցանկացած գործ (մանավանդ՝ եթե անձամբ իրեն էր հանձնարարված) ժամանակից շուտ կարող էր գլուխ բերել՝ մնա-

լով համեստության ու համբերության որակներում: Այսինքն՝ ոչ մեկից գովեստի կամ խրախուսանքի չսպասելով: Եթե գործը նրա ձեռքին է՝ ուրեմն անհանգստանալու տեղ չկա՝ ասում էր ղեկավարությունը: Հիմա էլ է այդպիսին: Այնքա՛ն պատվոգրեր, մեդալներ ու շնորհակալագրեր ունի /դեռ խորհրդային շրջանից, իսկ Արցախյան պատերազմից էլ, որպես ռազմական գործողությունների անմիջական մասնակից՝ երկու մարտական մեդալ/, բայց դրանց մասին խոսք բացվելուց ասում է՝ ուրիշ բանից խոսեք...

Դժվարություններ շատ ենք տեսել ու հաղթահարել միասին: Երիտասարդական տարիքին հատուկ դժգոհություն, խոսք ու զրույց էլ է եղել մեր միջեւ, բայց դրանք հարթվել են՝ տվյալ հարցում միմյանց հասկանալու ցանկությամբ ու ճիգով: Մեր երիտասարդ ընտանիքին բարոյապես ու նյութապես շատ է օգնել մայրս, քանի որ Շուրայենց ընտանիքը մերից էլ «համեստ» հնարավորությունների տեր էր: Յոթ բերան կար տանը՝ հազիվ էին ծայրը ծայրին հասցնում, ավագ որդին էլ՝ ինքը: Առանձին էինք ապրում, սակայն ամեն օր այցելում էինք կեսրարենց, օգնում տնային գործերում: Մի խոսքով՝ հարազատային հարաբերությունների մեջ էինք բոլորի հետ, ձգտում էի ինձ դրսևորել օջախի գաղափարն ու կանոնները հարգող հարս՝ ինչպես պահանջում է հայկական ավանդական սովորույթը:

Ստեփանակերտի կոշկի ֆաբրիկան նախաձեռնեց երկու բնակելի շենքերի կառուցման գործը՝ բանվորներին բնակարաններով ապահովելու նպատակով, ես էլ աշխատանքի անցա այնտեղ... Մեկ տարի էլ չանցած, երբ արդեն լիովին տիրապետում էի իմ նոր՝ բանվորական մասնագիտությանս, գնացի ֆիզիոլոգիական արձակուրդ: 1972-ին ծնվեց առաջնեկս՝ Սպարտակը: Հետծննդյան շր-

ջանը չավարտված՝ վերադարձա կոլեկտիվ, որովհետեւ մտավախություն ունեի, թե գործարանի դեկավարությունը կարող է այս կամ այն պատճառաբանությամբ բնակարանի հերթից ետ գցել կամ ընդհանրապես հանել: Անհանգստությունս անհիմն չէր... մասամբ. շահագործման տրվող առաջին շենքից մեզ բաժին չհասավ: Ղեկավարությունը խոստացավ երկրորդից անպայման բնակարան հատկացնել եւ խոստմանը հավատարիմ մնաց: Երբ հասավ բաղձալի պահը, արդեն ծնվել էր դուստրս՝ Ինգան /գրոց անվամբ՝ Իրենա/: Շատ էինք երջանիկ զգում մեզ մեր երե՛ք սենյականոց բնակարանում...

Ընտանիքի ընդլայնվելու հետ մեկտեղ սովորաբար շատանում են հոգսերը՝ շատացան եւ մերը: Գնալով դժվարանում էր երեխաներին լավ սննդով ու դաստիարակությամբ ապահովելը, ինչպես նաեւ այլ կարգի նորանոր ինդիքներ էին ծագում, որոնք պարտադիր կարգով պետք է լուծեինք, ինչպես ասում են՝ թեկուզ կաշվից դուրս գալու գնով: Մեր վիճակը համեմատաբար բարվոք էր այն իմաստով, որ հողամաս ունեինք, այգի էինք աճեցրել, ընտանի կենդանիներ, թռչուններ էինք պահում: Երեխաներս մեծացան առողջ, ծնողական սիրով ու հոգատարությամբ շրջապատված: Պարզապես չէինք կարող թույլ տալ, որ Սպարտակն ու Ինգան էլ տեսնեն այնպիսի դժվար օրեր՝ որպիսիք տեսել ու ապրել էինք մենք:

Երբ նրանք դպրոցահասակ դարձան եւ պետք է առաջին դասարան հաճախեին, մեր ուրախությանը չափ ու սահման չկար: Տեսնել էր պետք, թե ինչ գուրգուրանքով ու հպարտությամբ էինք նրանց ուղեկցում դպրոց: Կոկիկ ու մաքուր, ճաշակով հագնված նրանց տեսքից մեզ լավ էինք զգում, պարուրվում հպարտությամբ: Որքան հիշում եմ, չի եղել դեպք, որ ուսուցիչներից որեւէ մեկը դժգոհեր Սպարտակից կամ Ինգայից. նրանք համեստ, աշխատա-

սեր, լավ սովորող աշակերտի համբավ ունեին, կարգապահ էին եւ օրինակելի՝ շատերի համար, հարգանքով էին վերաբերվում իրենց դասընկերներին, ուշադիր էին մեծերի հանդեպ: Այդպես չափահաս դարձրինք մեր երեխաներին՝ պայծառ երազանք հյուսելով նրանց ապագայի հանդեպ:

Սպարտակն արդեն 10-րդ դասարանում էր, երբ սկսվեց Շարժումը: Ազգային վերագարթոնքի ալիքը ծառս եղավ կայսրապետության դեմ՝ եւ ժողովուրդս իր ինքնությունն ու անկախությունը հաստատելու համար անսահանջ «մարտի ելավ» սահմանադրորեն տրված օրենքների սահմաններում:

Այսօրվա պես եմ հիշում 1988-ի փետրվարի 20-ը եւ նրան հաջորդած խաղաղ ցույցերն ու գործադուլները: Ողջ Արցախն էր ոտքի ելել համազգային արդար պահանջով ու հավատով լի: Թվում էր՝ սար ու ձոր, անտառ ու կիրճ խրոխտաձայնում էին մեզ հետ: Մենք մեր պայքարի ուժն առնում էինք մեզնից առաջ ապրած սերունդների երազանքից, հայրենի վաղնջական հողից, հայոց պատմությունից եւ հայ քաջագունների մղած կռիվներից: **Ըստ էության, տնտեսական, քաղաքական ու գաղափարաբարոյական առումով Ղարաբաղյան շարժումն աննախադեպ երեւոյթ էր մեր պատմության մեջ՝ թե իր մասշտաբայնությամբ, թե համախմբվածությամբ ու անառիկ կամքով:**

Այն օրերին մեծ ու փոքր հավաքվում էին... ժողովրդի շուրթերին «Լենինից» «Ազատության» վերածվող-վերակոչվող հրապարակում /այժմ՝ Վերածննդի/ ազատության, խաղաղության ու հավատի կոչող պաստառներով, դրոշներով: Եվ օրավուր մարդկանց հոսքն ավելի էր վարարում, ստվարանում տարբեր խմբերի շարքերը՝ վե-



հանձնորեն տրված իրենց արդար պահանջին, անհող-  
դող կեցվածքով, միմյանց նկատմամբ անսահման հար-  
գանքով ու սիրով, հույսով ու հավատով առլեցուն: Եվ բո-  
լորը երգեցիկ տոնայնությամբ վանկարկում էին. «Մի՛-  
ա՛-ցու՛մ, մի՛-ա՛-ցու՛մ»... Սպարտակս էլ էր իր հասակա-  
կիցների հետ շրջում հրապարակով մեկ, կրծքին՝ Մես-  
րոպ Մաշտոցի նկարը: Թե՛ ինչու՛ ճիշտն ասած, այն ժա-  
մանակ ուշադրություն չդարձրի, մինչեւ որ տղաս չասաց,  
որ դրանով ոգեկոչել է ուզում նրա ստեղծած տառերի  
հաղթական խորհուրդը հայոց պատմության փորձու-  
թյուններում...

Ազգային Չարթունք էր ու Պայքարի վճռականություն...

Եվ հիմա հետադարձ մի հայացքով թող եւս մեկ ար-  
ցախցու աչքեր (ձեր խոնարհ ծառայի) վերատեսնեն այն  
խելահեղ եւ անուշիկ ժամանակի դեպքերն ու իրադար-  
ձությունները:

...Լեռնային Ղարաբաղում մարդու իրավունքների եւ  
ազգային ինքնության համար սկսված ազատագրական  
շարժմանը, խաղաղ ցույցերին, կոչերին ու հանրահա-  
վաքներին Ադրբեջանը պատասխանեց «սումգայիթով»,  
արյան ու պատերազմի սպառնալիքով: Շարժման հենց  
մեկնարկին ծայր առան սադրիչ ահաբեկչությունն ու ան-  
պատմելի այլանդակությունները, որոնց նպատակն էր  
վիժեցնել պայքարը, բանտել արցախցու ազատաբաղձ  
ոգին: 1988-ի վերջերին գրանցվեցին առաջին դեպքերը,  
երբ պատանդների փոխանակման դիմաց ադրբեջանցի-  
ներին խոշոր չափերի հասնող գումարներ վճարելով՝ գե-  
րուն ազատ էին արձակում: 1989-ին գրանցվեց մահացու  
ելքով 5 դեպք: Իսկ արդեն 1991-ի մայիսից Ադրբեջանի  
բանտերն ու մեկուսարանները լցվեցին հազարավոր  
ազատամատիկներով, հայրենյաց հողի ազատագրման

սրբազան գործի նվիրյալներով, որոնք 20-րդ դարի վերջալույսին պիտի վերապրեին համակենտրոնացման ճամբարների գողգոթան: Այդօրինակ նախճիր, ինչպես գիտենք, տեղի էր ունեցել Օսմանյան կայսրությունում՝ նույն դարի արշալույսին: Այդ ռազմական գործողությունները, բռնի տեղահանումներն ու ահաբեկչությունները ոչ մի կերպ չէին տեղավորվում միջազգային կոնվենցիաներով ընդունված ոչ մի օրենքի սահմաններում, եւ սակայն գործում էին: Նորագույն պատմության մեջ հակամարդկային ու գազանաբարո գործողությունն արձանագրվեց «Կոլցո» /օղակ/ անունով: Թուրք-ազերիները նույն չարամիտ կարգախոսը հնչեցրին՝ «Չայ չինի՝ հարց էլ չի լինի»...

Այդ օրերին Ադրբեջանի Կենտկոմի երկրորդ քարտուղար, Լեռնային Ղարաբաղի, այսպես կոչված, կազմկոմիտեի նախագահ Վ. Պոլյանիչկոն Ադրբեջանի Գերագույն խորհրդի նստաշրջանում 1991 թ. մայիսին հանդես եկավ կեղծուպատիր մանվածապատ մի ճառով, որից քաղված այս տողերում ակնհայտ երեւում է պաշտոնական Բաքվի հեռագնա նպատակների ողջ նողկալիությունը. «1991 թվականը հայտարարված է Ղարաբաղի տարի: Ղարաբաղի հողը մերն է, եւ մենք պետք է գրավենք այն մեր զավակների համար: Հարկավոր է ավելացնել օմոնականների թիվը»:

Տնտեսական ու քաղաքական լիակատար շրջափակում, բացահայտ կոռուպցիա՝ պետական մակարդակով, վայրագություններ, ստորացումներ, լլկանք, ազգային պատկանելության ու հավատքի ոտնահարումներ, հրոսակախմբային թալան ու ավեր, խուզարկություններ, մարդորսություն, անձնագրերի ստուգման պատրվակի տակ անօրեն ձերբակալություններ, հրկիզումներ... Մի խոսքով՝ աներեւակայելի բոլոր միջոցներով պաշտոնա-

կան Բաքուն փորձում էր կոտրել Արցախի ազատաբաղձ ոգու պոռթկումը, ծնկի բերել Հայոց Արեւելից կողմանց երկրամասը՝ պատմական Հայաստանի 10-րդ նահանգը: Ազգային-ազատագրական պայքարի այս ողբերգական էջերը պատմության մեջ արձանագրվեցին որպես 20-րդ դարավերջի հայաթափման փուլ, ազերիների վաղուց որոճած ծրագիր ու չարաղետ նպատակ:

Աշխարհի աչքի առջեւ, մարդու եւ ազգերի իրավունքների մասին հորջորջող Եվրոպային եւ միջազգային այլազան կազմակերպություններին ի տես՝ Խորհրդային կայսրապետության «դոբրո»-ով ազերի օմոսականների աջակցությամբ ու գործուն մասնակցությամբ բռնի տեղահանվում էր հայության մի հատված, որը վաղնջական ժամանակներից այս հողի ու երկրամասի օրինական տերն էր: Հարկադրաբար, բիրտ ուժի սպառնալիքի շնորհիվ դատարկված հայկական գյուղերում հապշտապ բնակության էին քշում քոչվորների: Տեղի էին ունենում սահմուկելի պատկերներ, որոնք ավել կամ պակաս չափով ասես 1915 թվականի մեծ Եղեռնի կրկնությունն էին:

Արձանագրելի է, որ 1991-ին Շահումյանի եւ Խանլարի շրջաններից որպես պատանդ գերեվարվեցին 599 խաղաղ բնակիչներ, բռնատեղահանվեց 2700 հայ՝ Գետաշենից, 300-ը՝ Մարտունաշենից, Հադրութի շրջանից՝ 15 գյուղ՝ 1491 բնակիչներով, Բերդաձորի ենթաշրջանի չորս գյուղերից՝ 570 կին ու երեխա, տարեց մարդիկ:

Ազերի խուժանը, միջոցների մեջ խտրականություն չդնելով, գիշերով կամ լուսադեմին, պարբերաբար մտնում էր գյուղերը, տներից, հանդամասերից կամ ուղղակի ճանապարհներից, առանց համապատասխան սանկցիայի, ձերբակալում խաղաղ բնակիչներին: Խուզարկությունները, բռնարարքները հասել էին անասելի չափերի, անձնական ու պետական գույքի թալանը, ավերածություն-

ներն ու ջարդարարությունները, սպանություններն ու բռնի այլ գործողություններ տագնապի ու վախի մթնոլորտ էին ստեղծել գրեթե բոլոր բնակավայրերում: Այդ էր պատճառը, որ մարդիկ հարկադրված շարժվում էին դեպի համեմատաբար ապահով վայրեր: Օրենքի եւ օրինականության մասին այս պարագայում խոսելը կամ հիշեցնելը պատասխանվում էր նոր պատժամիջոցներով: Այդ դժնդակ օրերի ու պատկերների մասին ավելի հստակ պատկերացում կազմելու համար նշենք, որ ձերբակալում, ծեծում ու ջարդում էին նույնիսկ անչափահասներին, դպրոցականներին, 80-90 տարեկան ծեր կանանց ու տղամարդկանց: Ադրբեջանի քննչական մեկուսարաններում, քրեակատարողական հիմնարկներում հանիրավի հայտնված հայ մարդիկ ենթարկվում էին դաժան հալածանքների, զուրկ՝ իրավաբանական պաշտպանվածությունից: Մարզում ստեղծված հակաօրինական իրավիճակը, քաղաքական եւ իրավական քաոսը հնարավորություն չէին տալիս դատապաշտպանների մասնակցությանը դատական գործընթացներին:

Պաշտոնական Բաքուն, խորհրդային, կայսրապետության անթաքույց աջակցությամբ, ստեղծելով խառնաշփոթ իրավիճակ՝ փաստորեն նախապատրաստվում էր պատերազմի՝ ծրագիր ունենալով Արցախը հայաթափել բնիկ տերերից: Եվ ինչպես ասում են՝ շաբաթն ավելի շուտ եկավ, քան ուրբաթը. Ադրբեջանն իրոք լայնածավալ պատերազմական գործողություններ սկսեց Արցախի դեմ: Արցախն էլ, բնականաբար, նախնյաց ոգուն անսալով, ելավ դարավոր ոսոխի դեմ՝ փրկելու սրբացած հիշատակները, գոյապահվելու, սատարելու իր տարրական իրավունքները:

Եթե մինչ այդ, հատկապես «Կոլցո» օպերացիայի ժամանակ, պատանդների կարգավիճակում էին խաղաղ

բնակիչներ, ծերեր, երեխաներ ու կանայք, ապա բուն պատերազմի ընթացքում (1992-1994 թթ.) հակամարտող կողմերում ի հայտ եկան ռազմագերիներ: Հատկանշական է, որ ողբերգությունների այդ պատկերները եղել են նաև 1917-20 թթ., որոնք արձանագրված են Հարություն Թումյանի «Դեպքերը Լեռնային Ղարաբաղում. 1917-20 թթ.» տակավին անհայտ գրքում, ինչպես վկայակոչում է Կոմիտաս Դանիելյանն իր «Արցախը չսանձած նժույգ» գրքում՝ քաղվածք բերելով երկու թուրք եղբայրների նամակից. «Տեսածդ Էրմանիստանը (Շուշիի հայկական թաղամասը.- Յ. Թ.) այրված է, 5 կամ 10 տուն պահեցին: Հազարից ավելի հայեր գերի բռնվեցին: Տղամարդկանց բոլորին կոտորեցին, մինչև անգամ Խալիֆին (Վահան Եպիսկոպոսին.- Յ. Թ.): Բոլոր մեծամեծ մարդկանց, նշանավոր հայերին կոտորելուց հետո գլուխները կտրած բազարներում պտտեցնել էին տալիս... Այս կողմերում (քաղաքում) այլևս ոչ մի հայ չես գտնի եւ ոչ էլ այնպիսի թուրքի կարող ես հանդիպել, որ հարյուր հազարից պակաս թալան բերած լինի: Այնպիսի մարդ կա, որ մեկ միլիոնից ավել ապրանք է բերել: Բոլորը եղան մեկ դասակարգ. էլ ոչ հարուստ կա, ոչ չունեւոր, բոլորը հավասարվեցին... Հայերի ողջ հարստությունը քաղաքի մուսուլման բնակիչները թալանեցին...»:

Այնպես որ, Արցախյան հերոսամարտի առաջին շրջանում իրավիճակն ամերեւույթ թե ըստ Էուբյան՝ օրհասական էր. վտանգված էր Արցախի լինելության խնդիրը, ապագան: Սակայն Շուշիի փառապանծ հաղթանակը բեկում մտցրեց Արցախյան գոյամարտում, եւ դեպքերն ու գործողությունները հաղթական շարունակություն ունեցան՝ շնորհիվ հայ քաջորդիների բազկի ու մտքի ներուժի, հայոց ոգու անպարտելիության: Ղարաբաղի ողջ տարածքով շարունակվող մարտերը բնավ էլ ադրբեջան-

ցիների օգտին չէին, եւ օրավուր նրանք լքում էին նախկինում գրաված դիրքերը՝ արհամարհելով անգամ նախագահ դարձած Յեյդար Ալիեւի հորդորները: Պաշտոնական Բաքուն սկսում էր համոզվել, որ ավելորդ ձգտումը կարող է ավելի վատթար վիճակի հասցնել Ադրբեջանին /իզուր չի ասված՝ թե բեղավորը գնաց մորուքի հետեւից՝ բեղերն էլ կորցրեց/: Ռուսական կողմը նրան զգուշացրել էր, որ հրադադարի հապաղումը հղի է արդեն Գանձակի կորստով... Եվ 1994 թ. մայիսի 16-ին Մոսկվայում ՅՅ եւ Ադրբեջանի պաշտպանության նախարարներ Ս. Սարգսյանն ու Մ. Մամեդովը եւ ԼՂՀ Պաշտպանության բանակի հրամանատար Ս. Բաբայանը, ՌԴ պաշտպանության նախարար Պ. Գրաչովի մասնակցությամբ, ստորագրեցին համաձայնագիր՝ նույն ամսվա 17-ի 00 ժամից կրակը դադարեցնելու մասին:

Մարդ չի էլ հավատում, թե այդ ամենը տեղի է ունեցել 17 տարի առաջ... Ասես երեկ էր: Եվ մեզ՝ այդ պայքարի եւ պատերազմի ականատեսներիս, այս հողի անցյալ, ներկա եւ ապագա տերերիս վիրավորում է այն հարցը, թե տեղի ունեցածով ու եղածով հանդերձ ինչո՞ւ Լեռնային Ղարաբաղի Յանրապետությունն առ այսօր չի ճանաչվել որեւէ պետության կողմից: Ինչո՞ւ հիմնավորապես չի լուծվել հիմնախնդիրը: Արդար չէ, որ պատերազմի հաղթական ավարտից 17 տարի անց երկիրս մտում է նույն «կռվախնձորը», թեւէ կայացած ինքնիշխան պետություն է՝ այդպիսինին վայել բոլոր անհրաժեշտ ինստիտուտներով...

Անդրադառնալով ռազմագերիների խնդրին՝ հարկ է հիշատակել, որ տակավին 1993 թ. մարտին ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի նախաձեռնությամբ ստեղծվեց **ռազմագերիների, պատանդների եւ անհայտ կորածների հարցերով զբաղվող պետական հանձնաժո-**

**դով**, որի կազմ մտան ԼՂՀ Գերագույն խորհրդի պատգամավորներ, ազգային անվտանգության եւ ներքին գործերի գերատեսչությունների ներկայացուցիչներ, «Յեւսիսկյան Նախաձեռնություն-92» դարաբաղյան կոմիտեի անդամներ: Հանձնաժողովը համագործակցում էր ԵԱՀԿ առաքելության, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի եւ «Բժիշկներ՝ առանց սահմանի» կազմակերպության հետ: Ղարաբաղյան կողմը որպես բարի կամքի արտահայտություն՝ 1994-ին ԵԱՀԿ միջոցով Ադրբեջանական կողմին է հանձնել 190 ռազմագերու եւ 248 խաղաղ բնակչի /որոնցից 73-ը ծերեր էին ու երեխաներ/ եւ 45 դիակ /13-ը՝ զինծառայողի/: 1996-ի մայիսին, առաջնորդվելով «Բոլորը՝ բոլորի դիմաց» սկզբունքով, ղարաբաղյան կողմը Ադրբեջանին վերադարձրեց 64 ռազմագերիների ու պատանդների: Իսկ 1997-ին Կարմիր խաչի միջոցով փոխանակման համար՝ եւս չորս ռազմագերու: 1998-ի հունիսի 11-ի տվյալներով՝ ԼՂՀ-ում էին գտնվում 3 ռազմագերի, որոնց գտնվելու վայրը հայտնի էր Կարմիր խաչի ներկայացուցիչներին: Այնինչ Ադրբեջանի կողմից մեզ հանձնված հայ գերիները ոչ մի կապ չունեին ռազմագերիների հետ. խաղաղ բնակիչներ էին, ընդ որում՝ հիմնականում ԱՊՀ երկրների եւ Իրանի քաղաքացիներ, որոնք առեւանգվել էին գնացքներից ու կայարաններից...

Ադրբեջանը միշտ էլ թաքցրել է ռազմագերիների ու պատանդների մասին ստույգ տվյալները: 1995-ի մարտ-ապրիլ ամիսներին «Կարմիր խաչը» Թբիլիսիում հանդես եկավ Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական հանձնաժողովների ներկայացուցիչներից աշխատանքային խումբ ստեղծելու նախաձեռնությամբ: Խմբի նպատակն էր կազմակերպել համատեղ այցելություններ ազատագրկման վայրեր՝ երաշխավորելու ռազմագերիների ազատ արձակման գործընթացը,

փոխադարձ վստահությունն ձեռք բերելու եւ բանակցա-  
յին ճանապարհով հարազատ ընտանիքներ վերադարձ-  
նելու պատանդներին:

Ի զարմանս բոլորի՝ ադրբեջանական կողմը վերջին  
երկու հանդիպումներին չներկայացավ: Այդ հանգաման-  
քը մի անգամ եւս ընդգծում է, որ խայտառակ պարտու-  
թյուն կրելուց հետո Ադրբեջանը փորձում է վրեժը լուծել  
ռազմագերիներից, ինչպես նաեւ՝ կախյալ վիճակում  
պահել դարաբաղյան կողմին: Ինչպիսի՜ փոքրոգություն,  
չարամիտ կեցվածք, ստոր արարք, սահման չիմացող  
անհանդուրժողականություն՝ որ վայել է թերեւս միայն  
բանականությունից զուրկ վայրենուն...

Եվ այսպես՝ 17 եւ ավելի տարիներ մենք չենք կարողա-  
նում պարզել /քանզի մեզ պարզապես զրկում են այդ  
հնարավորությունից/ մեր ռազմագերիների պահման  
վերջին վայրերը, իմանալ, թե քանի ռազմագերի ու պա-  
տանդ կա ներկայումս հակառակորդի զնդաններում, ո՞վ  
է կենդանի, ո՞վ՝ խոշտանգումներից մեռած:

Հուլյսի ցուլքերն այսօր էլ դեռ ապրում են անհայտ կո-  
րած ազատամարտիկների ծնողների, հարազատների,  
ընկեր-բարեկամների սրտերում ու աչքերում, մեր տղա-  
ները, կենդանի թե մեռած, ապրում են մեր հիշողության  
ծալքերում, բայց մի՞թե միայն դրանով մարդ կարող է  
մխիթարել իրեն... Այդ իսկ պատճառով նորից ու դարձ-  
յալ հայացքներս դարձնում ենք Հայաստանի եւ Արցախի  
իշխանություններին, ասելու՝ կյանքի բազմաճյուղ հոգ-  
սերի, քաղաքական մյուս կարելուր հարցերի լուծման ան-  
վերջանալի ընթացքում, խնդրում ենք, մի մոռացեք մեր  
անագորույն ցավի մասին... Պահանջելու պես ենք խնդ-  
րում բոլորիդ՝ դեմքով շրջվեցեք դեպի ռազմագերիներն  
ու պատանդները, օգտագործեցեք ձեզ տրված պետա-  
կան լծակներն ու դիվանագիտական խողովակները՝ վե-



րադարձնելու մեր սիրասուն զավակներին կամ էլ գո-  
նե...նրանց աճյունները:

Բայց ես շա՞տ չհեռացա Շարժման «մեկնարկից»...Այս պարագային սազում է ռուսի ասած «галопом-по Европе» արտահայտությունը, ուստի դառնամ ետ. այն օրերի մասին դեռ ասելիք ունեմ...

Հատկանշական է, որ խաղաղ հանրահավաքների մասնակիցները, որպես կանոն, հավաքվում էին նույն տեղում, որտեղ եղել էին նախորդ օրը: Եվ օրեցօր ստվա-  
րանում էին խմբերը, համալրվում նոր մարդկանցով՝ երեխաներով, պատանիներով, տարեցներով, բանվոր-  
ներով, մտավորականներով... Ասես «աշխատանքի» էին ներկայանում՝ եւ յուրաքանչյուրն իր ,գործը պիտի անի: Ազատության հրապարակն այդ օրերին կարելի էր համեմատել հսկա մեղվափեթակի հետ, որում հյուսվում էր ազատության, անկախության եւ Ղարաբաղը Հայաս-  
տանին միավորելու «մեղրանուշ առասպելը»: Ես «առասպել» ասացի...Ո՛չ, դա իրականություն էր եւ կեն-  
դանի գործ՝ առասպելից էլ ոգեղեն ու հերոսական, եւ՝ անկասելի-անընկճելի՝ իր մարդեղեն հավաքական ու-  
ժով: Ինքնակազմակերպվածության, ինքնաճանաչման, ինքնավստահության՝ նման հանպատրաստից օրինակ պատմության մեջ...դարը մեկ էլ չի լինում: Ժողովրդի՝ վե-  
րոնշյալ «բնագրները» ձուլվել էին առողջ բանականու-  
թյանն ու գորընդեղ զգացողություններին, հարազատ լեռնաշխարհի հետ դարձել մեկ մարմին՝ մեկ հոգի:

Եվ ի՞նչն էր առավել զարմանալին. որ բոլորը հավա-  
տացած էին, թե Արցախի հիմնախնդիրը արդարացի լու-  
ծում կստանա շուտով: Ոչ ոք չէր կասկածում դրանում: Որքա՞ն միամիտն էինք: Ուրեմն, 1920-ին հրկիզված Շու-  
շիով ու 1988-ի «սումգայիթով» հանդերձ՝ վատ էինք ճա-

նաչում մեր թշնամուն: Եվ ոչ այնքան թշնամուն՝ որքան որ...խորհրդային մեքենային վատ գիտեինք: Մեզ մատնողը, դավաճանողը, թիկունքից հարված հասցնողը Մոսկվան էր՝ իր ծերակույտով ու Գորբաչովով: Ինչեւէ, մենք մեզ անպարտելի էինք համարում, հավատացած էինք մեր մեջ առժամանակ լեթարգիական քնում հայտնված՝ բայց արդեն արթնացած ոգեղեն ուժի եւ վճռակա-նության մեջ, քանզի մեր գործն արդար էր ու ապագա-յամետ: Խորհրդային կայսրապետության անխորհուրդ այրերը, «ինտեռնացիոնալ» Բաքուն հատկապես, տեսնելով ու համոզվելով, որ արցախցիներին ազատաբաղձ հոգու սլացքն անկասելի է, Մոսկվայից ու Բաքվից բարձ-րաստիճան չհնովնիկներ էին առաքում Արցախ՝ հորդո-րելու եւ սպառնալու.« Դադարեցրեք ձեր հանրահավաք-ները, դրանք լավ ոչնչի չեն հանգեցնի...Դադարեցրեք, արդեն համապատասխան որոշումներ են կայացվում. լայն ինքնավարություն կտրվի Արցախին, ֆինանսական նոր միջոցներ կտրամադրվեն, նոր գործարաններ կա-ռուցվեն...»:

Եվ խոստումների այդ հեղեղը՝ այդ... ո՛չ մեր ուզածը, շարունակվում էր շարժման ողջ ընթացքում՝ մինչ իրա-դարձությունները չհանգեցրին պատերազմի:

Քաղաքական այդ քյանդիրբազությունից ու պետա-կան աճպարարությունից ժողովրդական հուզումներն ավելի էին մակընթացվում, սասանելով խորհրդային երկրի ծուռ-թեք աշտարակը, ճաք տված բետոնակուռ պատը: Սումգայիթի, Բաքվի, Գանձակ-Կիրովաբադի կո-տորածները վերջնականապես «ջրի երես հանեցին» խորհրդային երկրի բարոյական ողջ աղտեղությունը, համակարգի փտածությունն ու կրախը: Երեւանն ու Ստեփանակերտը տառացիորեն մի քանի օրվա ընթաց-քում լցվեցին բռնագաղթածներով... Իսկ որքա՞ն մարդ

ողջակիզվեց, որքան աղջիկներ ու կանայք բռնաբարվեցին, ֆիզիկական կտտանքների ենթարկվեցին՝ ստույգ չի կարող ասել ոչ-ոք: Ամենաթողության պայմաններում թուրք խուժանը գազանաբար հոշոտեց անմեղ բազում-բազում հայերի՝ ծեր ու կանանց, երեխաների ու դեռատի աղջիկների...

Բռնագաղթածներից ով բարեկամ ու ծանոթ ուներ՝ հանգրվանեց նրանց մոտ, ովքեր չունեին՝ տեղավորվեցին հանրակացարաններում: Իսկը քառասային մի իրավիճակ, որ ստեղծել էին ազատության ու անկախության թշնամիները՝ փորձելով արցախցիներիև գրկել իրենց վճռական կամքն արտահայտելու իրավունքից, մոլորեցնել, վախ ներշնչել: Եվ դա արվում էր քարոզչական հևարավոր ու անհնարին թվացող բոլոր միջոցներով, բռնարարքներով, մարդասպանություններով, թալան ու ավերով... Ըստ էության ոչ ոք չգիտեր, թե այդ ամենն ինչ շարունակություն կունենա: Մի բան, սակայն, ակնհայտ էր. Արցախյան շարժումն օրավուր գորանում՝ նոր թափ էր առնում, հակադարձելով պաշտոնական ու տեղային բնույթի բոլոր կարգի հարվածներին, դիմակայելով տարաբնույթ մարտահրավերների: Օրեցօր սրվող, ողբերգական շեշտեր ընդունող իրավիճակն, ըստ էության, թելադրում, հուշում էր, որ հեռու չէ պարտադրվող պատերազմի վտանգը: Գյուղական ու սահմանամերձ շրջաններից յուրաքանչյուր օր ու ժամ սահմնկեցուցիչ լուրեր էին հասնում Ստեփանակերտ: Մարդիկ քուն ու դադար չունեին եւ անհամբերությամբ էին սպասում որեւէ բարի լուրի՝ բարձրագույն իշխանություններից: Ավա՛ղ...

Բնականաբար, քաղաքական հեռատեսության տեր հայրենասեր ուժերը նախապատրաստվում էին վերահաս աղետին՝ ընդհատակյա կազմակերպելով ջոկատներ, հայթայթելով զենք ու զինամթերք:Քաղաքական,

տնտեսական ու գաղափարական իրավիճակի սաստկացման հետ մեկտեղ՝ պատերազմի վտանգը գնալով ավելի ակնհայտ էր դառնում, եւ՝ հալվում հավատը Մոսկվայի ու Բաքվի նկատմամբ:

Փոխվում էր մարդկանց հոգեբանությունը, բայց ոչ երբեք՝ ազատության ու անկախության համար պայքարի վճռականությունը: Ժողովուրդը չէր ընկճվում տարատեսակ ճնշումներից, նրա ոգու գորընդեղությունը նոր կերպ ու բովանդակություն էր ստանում ազատագրական ջոկատների տեսքով. հայրենի հողի ապագայի, սեփական օջախների պատվի համար սրբազան պայքարը մտնում էր նոր փուլ: Որքան կյանքը դաժան ու օրհասական էր դառնում, նույնքան մարդիկ էությամբ ու նպատակի ձգտումով ավելի էին միավորվում, նոր ուժ ու կորով ձեռք բերում, ազատաբաղձ հոգին դառնում էր ավելի դիմադրողունակ: Յետեւապես՝ մեզնից յուրաքանչյուրն ապրում, շնչում, մաքառում էր երկրի ճակատագրի համար, անբացատրելի խորն զգացումով համակվում իր հողի, իր ժողովրդի, հարազատների, օջախի նկատմամբ՝ պատրաստ մարմնեղեն ու ոգեղեն իր էությամբ պաշտպանելու հայրենի երկիրն ու նախնայաց սրբազան հիշատակները, չար ուժերին դիմակայելով «ական ընդ ական, ատամն ընդ ատաման» կարգախոսով: Վրիժառություն չէր այս վարքագիծը, ոչ էլ նախահարձակման դրսեւորում, այլ՝ սոսկ ինքնապաշտպանություն, ինքնության հաստատում՝ ազատագրական պայքարի տեսքով:

Ծայրաստիճան լարված եւ փոխնիփոխ ու ստեպ-ստեպ գրոհներով ու հակագրոհներով, սահմանամերձ շրջաններում գիշեր ու զօր հերթապահող ջոկատների մարտական գործողություններով ուղեկցվող այս խորապատկերում անգնահատելի էր համայն հայության, հատկապես Յայաստանի եւ Սփյուռքի, օգնությունը՝

Նյութականից մինչեւ անձնուրաց ներկայություն-պայ-  
քար՝ մարտադաշտերում... Թեեւ այդ ժամանակներում  
ըստ էության չէր ձեւավորված հայոց ազգային-ազա-  
տագրական բանակը:

Մեծ մտածող ու զորավար Գարեգին Նժդեհի «Ուժն է  
ծնում իրավունք» գաղափարով, փաստորեն, անցյալ  
հարյուրամյակի 90-ական թվականներից սկսյալ, ոգե-  
կոչված էին բոլոր արցախցիները՝ հավատալով ու վս-  
տահելով սեփական ուժերին, ավարայրներից ու սարդա-  
րապատներից պեղելով ինքնաճանաչման համոզմունք  
ներշնչող դասերի խորհուրդ խորինը: Ոչ հեռավոր այդ  
ժամանակներում, իմ խորին համոզմամբ, ավելի շատ  
տազնապած, ու դյուրազգաց էին հայ կանայք, որովհե-  
տեւ նրանք ի բնե ձուլված են իրենց երկրին, նրա անբա-  
ժանելի մի մասնիկն են՝ պատրաստ իրենց կյանքը զոհա-  
բերելու հանուն իրենց զավակների ու խաղաղության:  
Մայրերն են կյանքի նորոգության, սերունդ ծնելու, սնելու  
սրբազան աղբյուրը: Մայրերն են իրենց ներըմբռնողու-  
թյամբ, մի յոթերորդ զգայարանով զգում վտանգի պահն  
ու ահավորությունը: Ուրեմն՝ հավատացեք մեր սրտին,  
մայրական զգացումներին, տիեզերական նրա շնչառու-  
թյանը, արիությանն ու աստվածապարզեւ առաքելու-  
թյանը... Ինչպես մեր «Սասնա ծռեր» էպոսում է գրված՝  
«Առյուծն առյուծ է՝ էգ թե արու»: Հավատ ընծայեք, ու-  
րեմն, առանց երկմտելու, ճանաչեցեք «առյուծածին մայ-  
րերին»:

**Իմ բոլոր գրքերը մենախոսություններ են: Մարտնչող  
հոգու տվայտանքներ են: Անեծքներ են եւ աղոթքներ, թե  
ուժ հասցեագրված՝ դատեք ինքներդ: Ես ինձ էլ չեմ խնա-  
յում, դատապարտում եմ պատեհ-անպատեհ առիթնե-  
րով. չէ՞ որ սիրտ կա կրծքիս տակ, մայրական Սիրտ՝ սմ-  
բած, արյունապակաս՝ լոկ հույս-հավատով բաբախող,**

դրա համար էլ անսպառ է նրա էներգիան, եւ չի ընդհատվում նրանից սնվող հոգուս բեկբեկուն լույսը:

Այս տողերը գրելիս, ինչպես եւ նախընթաց մտքերս շարադրելիս, ընդհանրապես մտածմունքիս ու զգացողություններիս ողջ տիրույթում, ինձ հետ է Սպարտակս: Կինոժապավենի կադրերի պես ինձ պատկերանում են նրա մանկության, պատանեկության, պսակադրության քաղցրիկ պահերը, անգամ՝ խոսք ու շարժումների, զրույցների, ծիծաղի եւ տխրության, չարաճճիությունների պատկերները: Դրանք ապում են իմ մեջ, ձուլված են իմ էությանը, իմ մարմնի, սրտի, հոգու եւ մտածումների անտրոհելի հյուսվածքներն են:

Պիտի ասեք՝ շեղվեցի՞, կորցրի՞ իրականության զգացողությունս, խոսքիս տուտը: Դա նրանից է, որ ուրիշ «խմորից եմ հունցված», ուրիշ իրականությունում եմ ապրում եւ... չապրում, այնտեղ՝ որտեղ ցավին դարման չի դրվում, հույսն էլ զուգահեռվում է անվերջ՝ «պահմտոցի» խաղալով ինձ հետ:

...Թուրքերի առաջին զանգվածային հարձակումը տեղի ունեցավ Ադդամից՝ Ասկերանի վրա: Ներխուժելով նավթամթերքների ձեռնարկության տարածք, ճանապարհին ոչնչացնելով, հրո ճարակ դարձնելով ամեն ինչ, ծեծելով քրիստոնյա հայերին՝ թուրք բաշիբոզուկները հետո ավազակային հարձակումներ իրականացրին Մարտակերտ-Ադդամ, Մարտունի-Ստեփանակերտ ճանապարհներով երթելեկողների վրա: Եվ այդպիսի ահաբեկչական բազմաթիվ դեպքեր եղան տարբեր շրջաններում ու սահմանամերձ բնակավայրերում, բարձրաստիճան չինովնիկների այցելություններ Արցախ, «անձնագրային ստուգումներ», «մարտական օպերացիաներ» անձնագրային ռեժիմի ստուգման «քողի» տակ, անակն-

կալ հարձակումներ ֆերմաների վրա, անասնագողություններ... Մի խոսքով՝ զարհուրելի, սահմուկելի իրավիճակ: Բայց արցախցիներն էլի անհողդողդ էին իրենց վճռի մեջ:

Մարզի ողջ տարածքը մատնված էր եւ լրատվական սովի... Փակ օղակի մեջ էր առնված ամեն ինչ: Պատերազմի հոտը, փաստորեն, տարածվել էր լեռնաշխարհի վրա: Դիմում-բողոքներն էլ մնում էին ձայն բարբառոյ յանապատի: Արցախից Մոսկվա մեկնած պատվիրակություններին «կերակրում» էին դատարկ խոստումներով... Տագնապն ավելի ահագնացավ Զյուսիսային Արցախից ստացվող դաժան լուրերից, որովհետեւ թուրք օմօսականները, ռուսական բանակի զինվորների աջակցությամբ, քստմնելի դատաստան էին տեսնում Գետաշենի, Շահումյանի բնակչության հետ՝ խաղաղ բնակչության վրա նետելով ծանր տեխնիկա, ուղղաթիռներ: Միջազգային հանրությունն էլ համր ու խուլ էր ձեւանում, չտեսնելու տալիս դարավերջի այդ նախճիրը:

Արցախցիներին, ուրեմն, այլ ելք չէր մնում, քան՝ իրենք էլ զինվեն. ով ինչպես եւ ինչով կարող էր: Գրեթե բոլոր բնակավայրերում ֆիդայական խմբերը շուրջօրյա հերթապահություն էին իրականացնում: Պաշտպանական նպատակով մերոնք հարկադրված էին զբաղվել նաեւ զինագործությամբ: Հնարավոր բոլոր ուղիներով գեւք ու զինամթերք էին հայթայթում: Ընդհանուր իրավիճակը եթե մեկ բառով բնութագրելու լինենք, ճիշտ կլինի կոչել «տարտարոս» բառով, որովհետեւ իրականում չհայտարարված պատերազմ էր ողջ Արցախի տարածքում: Ընդ որում՝ թշնամին փորձում էր նախ Ստեփանակերտը ոչնչացնել ու հեռահար տարբեր զինքերից կրակե հեղեղ էր թափում մայրաքաղաքի վրա: Տեսնել էր պետք, թե պաշարման մեջ հայտնված ստեփանակերտցիները (Ղարա-

բաղն՝ ընդհանրապես) տեւական թերասոււմից, հոգե-  
ցունց միջադեպերից, տառապանքներից որքան էին կեր-  
պարանափոխվել, գունատվել, սմբել: Արցախի համար  
այդ գեհենային պայմաններում ծնվեց ազգային ազա-  
տագրական, կամ ինչպես հետո հստակվեց՝ Պաշտպա-  
նության բանակը, որի կորիզը հանդիսացան Ֆիդայա-  
կան ջոկատները: Առաջին բեկումնային ու հերոսական  
հաղթանակը տեղի ունեցավ 1992-ի մայիսի 8-ին՝ Շուշիի  
ազատագրումով...

Պատերազմական հետագա գործողություններով,  
որոնք տեղի էին ունենում փոխնիփոխ հաջողություննե-  
րով ու ցավալի կորուստներով, ԼՂՀ Պաշտպանության  
բանակը, խելամիտ ու համարձակ ռազմավարությամբ  
ու մարտավարությամբ, մեկը մյուսի ետեւից տարածք-  
ներ եւ կենդանի ուժ ու տեխնիկա կորցրած թշնամուն  
ստիպեց հրադադարի համաձայնագիր ստորագրել  
1994-ի մայիսին: «Ստիպել» ասելով նկատի չունենք նա-  
խաձեռնությունը, քանզի հրադադար խնդրեց Ադրբեյա-  
նը՝ խնդրի լուծման միջնորդ ընտրելով Ռուսաստանին...  
Այսպիսով՝ հայկական բանակը պարտության մատնեց  
թվային գերակշռություն եւ հզոր զինտեխնիկա ունեցող  
Ադրբեյջանին եւ տոնեց իր աննախադեպ հաղթանակը:  
Այսինքն՝ «մեր սուրը փառքով դրեցինք պատյան»:

**Ինչու՞ ընդհանուր շտրիխներով անդրադարձա՞ Ղարա-  
բաղյան պատերազմին: Նախ՝ որ բոլորս ականատեսն ու  
մասնակիցն էինք այդ արհավիրքի եւ կրել ենք դրա ավե-  
րածությունները մեր հոգում, ու երկրորդ՝ որ շարադրան-  
քիս համար այդ իրավիճակի ընդհանրական պատկերը  
պատվանդան ու ֆոն է՝ սեփական ճակատագրիս պե-  
ղումները կատարելու համար...**



...Սպարտակս մասնակցում էր Շուշիի եւ Ջամիլուի ազատագրական մարտերին: Ամեն անգամ նրա՝ տնից դուրս գալուց հետո ինձ մի անորոշ տազնապ էր պատում, հոգիս՝ կծկվում, սիրտս՝ այնպես տրոփել սկսում, որ թվում էր, թե ուր որ է՝ դուրս կթռչի կրծքավանդակից: Մինչեւ նորից տուն էր վերադառնում՝ լողանալու, հագուստը փոխելու, մի փոքր հանգստանալու, ես, ինչպես ասում են՝ «գնում էի այն աշխարհ ու գալիս»: Այդուամենայնիվ՝ այդ իրավիճակին էլ ընտելացանք եւ մոտավորապես գիտեինք, թե մեկ էլ երբ է գալու: Մի անգամ էլ սպասված օրը չերեւաց: Չեկավ նաեւ մյուս օրերին: Վախն ու տազնապը կրծում էին հոգիս, հազար վատ բան անցավ մտքովս: Այս ու այն կողմ վազեցի, հարցմունք արեցի սրան-նրան ու պարզեցի, որ տղայիս հետ է նաեւ իր ընկեր Արսենը: Ստեփանակերտում մղձավանջային կացություն էր տիրում, պատերազմական գծից իրարամերժ լուրեր են գալիս, բերում էին զոհված ազատամարտիկների, վիրավորների: Հոսպիտալներում «ասեղ օգելու տեղ չկար»... Երկինքը գլխիս մթնել էր:

Ախ ու վախի մեջ՝ մի իրիկուն էլ հարեւանս ծեծում է մեր դուռը եւ ոչ այն է նեղսրտած, ոչ այն է նախատինքով՝ ասում. չե՞ք լսում, Սպարտակը ներքեւից կանչում է: Ասես քարացա: Լեզուս կապ էր ընկել, չէի իմանում՝ երազում եմ, թե՞ արթմնի: Հետո էլ տաք սարսուռ անցավ ինձնով ու երերացի տեղում... Երբ աչքերս բացեցի, եւ գիտակցությունս լրիվ վերականգնվեց, արտասվելու ցանկություն ունեցա: Բայց արցունք չկար... Ինչ նկարագրում եմ՝ մերոնց պատմելով է, ինքս քիչ բան եմ հիշում այդ պահից: Հիմա եմ հասկանում, թե ինչ էր կատարվում այն ժամանակ ինձ հետ. **այն մի քանի օրը ինձ համար Սպարտակն առաջին անգամ հայտնվել էր... անհայտ կորածի կարգավիճակում, եւ դրա ահավորու-**

**թյունն իմ ողջ էությանը ես զգացի հենց այն ժամանակ:**

Բայց ներկայացնեմ դեպքի հետագա ընթացքն էլ:

...Վերագտնելով ինձ՝ մոտեցա մեր պատշգամբին ու տեսա՝ տղաս՝ ոնց որ ամբողջովին ճերմակ հագած Ձմեռ պապի: Կամ՝ ջրաղացից ելած ջրաղացպան: Դողում էի արդեն ուրախությունից: Շտապ իջանք բակ: Սպարտակն ինձ գրկել՝ ոչինչ չէր կարողանում ասել: Ոչ էլ արդարանում էր: Ջամիլունի կռվից էր, ուրեմն, եկել՝ Արսենի հետ: Մի ձի էլ «ավար» էր բերել. հինգ պարկ ալյուրն այլապես ինչպե՞ս կհասցվեր Ստեփանակերտ... Առանց երկար-բարակ մտածելու գիտեի, որ մեր հարեւաններից շատերի տներում հաց չկա, երեխաները սոված են, բոլորին կանչեցի՝ մի-մի դույլ վերցրեք, իջեք ներքե... Ինքներս ալյուր ունեինք եւ ընդհանրապես ողջ պատերազմի ընթացքում այդ տեսակետից քիչ նեղություն ենք կրել, նույնիսկ հաճախ ենք հաց տվել մեր դրկիցներին: Կարճ ասած՝ ամբողջը բաժանեցի: Հարեւաններս, դույլերը լցրած, չէին ցրվում տները. հա՛ հարցուփորձ էին անում Սպարտակին... Ձենս գլուխս գցեցի՝ չե՞ք տեսնում, տղան կեղտի մեջ կորած է, պետք է լողանա, մի քիչ հանգստանա... Նախատինքս բանի տեղ չդնելով՝ «բարեգործական ակցիայից» գոհ հարեւաններս Սպարտակի եւ Արսենի հասցեին օրհնանքի, քաջալերանքի խոսքեր էին ասում: Ինչ խոսք, որ դրանից մայրական սիրտս հպարտությամբ էր լցվում, նույնիսկ թվում էր, թե աշխարհը բարությանը է շնչում եւ ոչ պատերազմ կա, ոչ էլ զոհ կամ սով... Մղձավանջային այդ ժամանակներում, կենաց ու մահու ազատագրական պայքարում գիշերը բոլորս պատասպարվում էինք նկուղներում՝ անտանելի գարշահոտության մեջ, ցերեկը բարձրանում տուն:

...Երբ վերջապես մտանք մեր բնակարանը, որ 5-րդ հարկում է, Սպարտակս մտավ խոհանոց, ծանր նստեց

աթոռին: Չգում էի, որ ուզում է ինչ-որ բան ասել: Վերջապես տղաս քթի տակ մրմնջաց. «Ուզում եմ մի բան ասել, չբարկանաս... Ուզում եմ ձին պահել»: Ձին էլ կարմրաթուխ էր, ճակատին՝ ճեփ-ճերմակ մի «գարդ»: Ասացի՝ մեզ չենք կարողանում պահել, ձիուն ո՞նց պահենք: Թախանձախառը ձայնով փորձեց ինձ «կոտրել»: Յամոզվելով, որ հանձնվողը չեմ, շարունակեց. «Գունե մի գիշեր թող գարաժում մնա, առավոտ կտանեմ աներանց՝ իրենք պահեն»: Յարսիս հերանք Ակնաղբյուր գյուղում էին ապրում... Յազիվ էինք ընտանիքով բոլորել սեղանի շուրջ՝ դուռը նորից ծեծող եղավ: Անծանոթ մարդ էր, տղամարդ: Ասաց... ձին իրենն է: Բորբոքվեցի՝ տղաս թուրքերից է բերել... Յարցրի՝ կենդանին ի՞նչ նշան ունի: Միանգամից թե՛ մեջքը վերքոտ է: Գնացինք թամբը վերցրինք՝ տեսանք իրոք այդպես է... Պարզվում է՝ ամիսներ առաջ թուրքերը գողացել էին հայվանին, տարել անհայտ ուղղությամբ: Ճակատագրի հաճությամբ Սպարտակս գտել էր նրան ու հանձնեց տիրոջը: Սա գոհ ու շնորհակալ բռնեց ձիու կապն ու գնաց:

...Ազատամարտիկներին անընդհատ այս գծից այն գիծն էին տեղափոխում՝ իրավիճակով պայմանավորված. որտեղ առավել թեժ մարտեր էին գնում: Տղաները լեռնային, հիմնականում՝ Խաչեն գետի մերձակա, գյուղերն էին գնում՝ ուղղաթիռներով բերված զենքն ու զինամթերքը, պարենն ու վառելիքը նախատեսված ճակատային գոտի տեղափոխելու համար: Սպարտակս սովորաբար Քոլատակ էր գնում եւ Կիմա Ավանեսյան անունով մի մարդու տանը գիշերում: Կիման անտառապահ էր, հայրենասեր ու հարգված մարդ: Նա ծնողի նման էր վերաբերվում տղաներին: Քոլատակում Սպարտակս մի լավ ընկեր ուներ՝ Գարիկ Աղասյանը, երկուսով որոշել էին պատերազմն ավարտվելուց իրենց նշանածներին գրա-

համբռնայով տուն բերել... Այն ժամանակ նրանք Սրիս-վենդի ու Կիչանի դիրքերում էին կռվում: Ի դեպ, այդ ինք-նատիպ որոշման առթիվ դուստրս՝ Ինգան /Երաժշտա-գետ Է, դաշնակահար/ նրանց նվիրված երգ գրեց...

Դրվագը, որի մասին պիտի պատմեմ, ժամանակագ-րական առումով ավելի նախընթաց է՝ երբ Սպարտակս ընդամենը դեռ նշանված էր: Իմ գրքերում այս մասին ոչ մի տող չկա:

...Յերթական անգամ տուն վերադառնալով՝ մեկօրյա հանգիստը վայելելու, տղաս իջավ նկուղ, որ մեզ հետ մի կտոր հաց ուտի, լուր ստացվեց, թե քոլատակցի ընկերը զոհվել է նշանառուի գնդակից: Տղաս իր տեղը չէր գտ-նում... Ոչ խոսում էր, ոչ ուտում, նույնիսկ հագուստը փո-խելու ցանկություն չունեցավ: Չույգ ոտքը մի կոշկի մեջ դրեց՝ թե պետք է գնա Քոլատակ: Ասացի՝ Ես գիշերո՞վ, ինչպե՞ս, ինչո՞վ, սպասի՞ր գոնե լուսանա... Ասաց՝ մինչեւ Քոլատակ ընդամենը 40 կմ է... Կարճ ասած՝ ոտքով էլ ճամփա ընկավ: Մինչեւ բակ ուղեկցեցինք եւ նրա հորդո-րով ստիպված ետ դարձանք նկուղ: Չեմ կարող պատմել, թե ինչ ապրումներ ունեցա դրանից հետո, եւ թե ինքն ինչ չարչարանքով տեղ հասավ: Ինչպես «գել ու գազանի փայ» չդարձավ կամ կույր գնդակի զոհ՝ հայտնի է միայն ինձ ու Սպարտակիս. տղաս հետո պատմել է ինձ:

Վերջին պահին է հասել գերեզմանոց՝ երբ հերոսի դին արդեն ուզում էին իջեցնել փոսը... Վերադարձավ հոգ-նած ու հալումաշ եղած, բայց՝ խիղճը հանգիստ, որ գոնե ներկա եղավ մարտական ընկերոջ հուղարկավորությա-նը: Յաջորդ առավոտյան մեկնեց ճակատային գիծ:

Յուշերիս շղթայից առանձնացնեմ մի օղակ եւս, որը կապված է Շուշիի ազատագրման հետ: 1992-ի մայիսի 8-ին տղաս շատ ուշ եկավ, գիշերն արդեն կիսվել էր: Ձեռ-քին հրացան կար, որը ներկայումս գտնվում է մեր հուշ-

աթանգարանում. Սպարտակիս մատնահետքերը դաջված են վրան... Նրա հետ կապված ցանկացած իր, պատմություն, դեպք ու դիպված ինձ համար սրբություն է: Մի օր եկավ, թե՛ ինձ տեղափոխել են հրետանավորների գումարտակ՝ Գրադ ժորայի հրամանատարության տակ: Յենց այդ ժամանակ էլ, 1993-ի փետրվարի 5-ից 7-ը, ինչպես ասում են, երեք օր ու գիշեր տեղի ունեցավ Սպարտակիս հարսանիքը, թեեւ Արցախի տարածքի ողջ երկայնքով այդ ժամանակ կենաց-մահու մարտեր էին ընթանում: Բայց որովհետեւ նախընթացին մեր ազատամարտիկներն ազատագրել էին բնակավայրերի մեծ մասը, զգում էինք մոտալուտ հաղթանակը, վտանգը համեմատաբար հեռու էր մեր սահմաններից, ուստի որոշեցինք ամուսնացնել:

Յրետանային գումարտակից հարսանիքին ներկա էին 13 ազատամարտիկներ, մյուսները դիրքում էին: Գնե՞րալ Իվանյանը հարսանիքի կապակցությամբ նոր համազգեստ էր նվիրել տղայիս, որով եւ նկարվեց նշանածի հետ: Մի քիչ էլ սննդամթերք էր տվել եւ 10- օրյա արձակուրդ, թեեւ Սպարտակն ասել էր՝ 4-5 օրն էլ է բավական: Տղայիս հարսնացուն՝ Նինելը, համեստ ու ազնիվ վաստակով ապրող ընտանիքի դուստր էր: Երբ Սպարտակը ժամկետից շուտ վերադարձավ գորամաս, Իվանյանը գովեց, ասաց՝ օրինակելի ազատամարտիկն այսպիսի վարքագիծ պետք է ունենա, զինակիցներին մենակ չթողնի:

Տղաս դպրոցական տարիքից էր մասնակցում հանրահավաքներին: Խորհրդային Միությունը դեռ չէր փլուզվել, եւ, ինչպես արդեն նշվեց, կայսրապետության պաշտոնատարներն ամեն կերպ փորձում էին լռեցնել արցախցիների արդար ձայնը, վիժեցնել ազգային ազատագրական շարժումը: Այդ շրջանում էր, որ Սպարտակը պիտի

զորակոչվեր Խորհրդային բանակ: Մեր թաղից Կամո անունով մի տղայի բանակից սպանված էին բերել, եւ բոլորս շատ էինք անհանգստանում նորակոչիկների համար... Մեկնելուց մոտավորապես մեկ շաբաթ առաջ, գիշերվա կեսին, տղաս մեր ննջասենյակի դուռը ծեծեց: Մարդ ու կին վեր թռանք՝ խիստ անհանգստացած: Լույսը վառեցինք, Սպարտակս ներս մտավ՝ քնաթաթախ, մի քիչ գունաթափ, բայց աշխույժ աչքերով. եկավ մեր մահճակալին պառկեց ու. «Մա՛մ, ձեր 18-ամյակն ինչպե՞ս եք անցկացրել» Ասացի՛ ինչո՞ւ ես հարցնում, ի՞նչ է պատահել: Թե՛ մամ, չեմ կարողանում քնել: Երաժշտություն եմ միացնում, գլուխս կոխում եմ բարձի տակ, բայց էլի քունս չի տանում: Ասացի՛ հո չե՞ս սիրահարվել... Ասա տեսնեմ ո՞վ է: Նա էլ թե՛ չգիտեմ, տեսել եմ՝ մտքիցս դուրս չի գալիս, բայց հետը բառ անգամ չեմ փոխանակել: Ասացի՛ բա ո՞նց տեսնեմ: «Կպայմանավորվեմ ապագա քենակալիս հետ, հետո քեզ տեղյակ պահեմ»: Անողթողնող աղջիկ է երեւում»: Ասացի՛ Էնա բեր մեր տուն էլի, էլ ինչո՞ւ ես դես ու դեն ընկնում: Սպարտակը մի փոքր մտածեց, ասաց՝ իրոք, առիթն էլ կա՝ հրաժեշտի քեֆին կանչենք... Այդպես ապագա հարսիս հետ հանդիպումը կայացավ: Իրոք՝ «դոչադ» աղջիկ էր: Դե, իսկ տղաս՝ բարի, մարդու հարայի հասնող, բոյ-բուսաթով, սլացիկ ու աթլետիկ կեցվածքով, գրավիչ հայացքով... Ցանկացած աղջիկ հայիլ-մայիլ կլիներ նրա համար: Ով իրոք ճանաչում է նրան, հետն ընկերություն է արել, անգամ՝ կարճ ժամանակով ճամփա գնացել, ավելին կասի: Հարեւաններս՝ նույնպես: Ես նրան մեկ-մեկ կատակով ասում էի՝ այ տղա, դու որ ուզենաս, կարող ես պրեզիդենտի աղջկա հետ ամուսնանալ... Քեֆի օրն ասաց՝ մամ, դու իմ աչքերով նայիր՝ իմ հոգով զգա... Քեզ համար Էնպիսի հարս եմ բերելու, որ բոլորը մատով ցույց

տան: Նրա ի՞նչն ես այդքան հավանել՝ հարցրի: Ասաց՝ երբ եղա նրանց տանը, խոզ մորթեցին, տեսնե՛լ էր պետք, թե այդ աղջիկը մենակ ոնց այնքան ճարպը կտրտեց, դասավորեց, չես պատկերացնի՝ գոգնոցի վրա էլ դանակը սրելով...

Տղայիս պատմելով՝ ապագա ինամիներս ընտանի շատ կենդանիներ էին պահում՝ կով, այծ, ոչխար, եւ կթելը, կաթը տաքացնելը, մածուն մերելն ամբողջովին դրված էր այդ աղջկա վրա: Անասուններն էլ այնպես էին ընտելացել նրան, որ ուրիշ ոչ մեկին թույլ չէին տալիս մոտենալ իրենց:

-Բանակ գնալուց առաջ լավ կլիներ գնայինք «խոսք առնեինք», որ հանգիստ նամակներ գրեմ նրան,- ասաց որդիս:

Չհամաձայնվեցի՝ պատճառաբանելով, թե ամեն օր Ռուսաստանից դիակներ են բերում, ի՞նչ իմաստ ունի «խոսք առնելու» գնալը: Բայց ի վերջո համաձայնության եկանք,գնացինք: Ոսկե շղթա նվիրեցինք հարսին: Խորհրդային բանակից գրած նամակներում որդիս անընդհատ հիշեցնում էր՝ շրջապատի տղաներին ասա, թող բանակ գնան, ծառայությունը կյանքի մեծ փորձ եւ ֆիզիկական ու բարոյական կոփվածք է տալիս, բանակում իսկական տղամարդ ես դառնում: Նամակի վերջում էլ, որպես կանոն, ավելացնում էր՝ մա՛մ, հիմա մի քանի թոպեում թրաշվում եմ, բանակում այլ կերպ չես էլ կարող... Երեք ամիս ծառայելուց հետո հրամանատարությունից շնորհակալագիր ստացանք: Ափսոս, որ չկարողացանք մեկնել Կրասնոդար՝ նրա երդման արարողությանը մասնակցելու: Նկարն ուղարկել էր, վարորդ էր աշխատում բանակում: Չինվորական համազգեստն էլ այնպե՛ս էր սագում...

Իսկ Արցախում իրավիճակն ավելի էր սաստկանում, պատերազմի հոտն՝ ավելի զգալի դառնում:

Օրերից մի օր հրամանատարությունից նամակ ստացանք, թե Սպարտակը,-Տե՛ր իմ Աստված, տղայիս լավ իմանալով՝ հավատալու բան չէր,- լքել է զորամասն ու գտնվում է հետախուզության մեջ: Չէ, իրոք նման շրջադարձի երբեք չէինք սպասի: Փախե՛լ է, թե՞ վատ բան է պատահել՝ չեն ուզում անմիջապես հայտնել, կորե՞լ է, թե՞... Մի խոսքով՝ սարսափելի կռահումների մեջ էինք: Ընդ որում, պարզվեց, որ տղաս մենակ չէ՝ իր հայ ընկերների՝ Արայիկի, Արսենի եւ Արկադայի հետ է անհետացել: Ոչ-ոք չէր կարող ասել, թե դա ինչ էր նշանակում: Պատկերացնո՞ւմ եք մեր վիճակը: Տունը լցվել էր հարեւաններով, ծանոթ-բարեկամներով, տեղի-անտեղի հարցեր էին տալիս, մենք էլ չգիտեինք ինչ պատասխանել: Հոգեկան ի՛նչ տվայտանքներ քաշեցինք 15 օրվա ընթացքում՝ բառերով պատմել հնարավոր չէ: Եվ ահա հուսահատությանս տասնհինգերորդ օրը... տղաս մտավ տուն: Ի՛նչ կատարվեց մեզ՝ տնեցիներիս հետ: Ղարձյալ՝ հարեւաններ, ծանոթ-բարեկամներ, անսովոր աղմուկ, ուրախության ու լացի ձայն, եւ աղոթքներ՝ առ Երկնավորը: Իսկ պարզվեց ահա թե ինչ:

...Տեղեկանալով, որ Ղարաբաղում իրավիճակն ավելի է սրվել, բարդացել, լսելով, որ խորհրդային բանակի զինվորները բարյացակամ չեն դարաբաղցիների նկատմամբ (դա զգացվում էր նաեւ իրենց զորամասում), հարկադրված որոշել են փախչել, վերադառնալ հայրենիք, միանալ հայ ջոկատայիններին, պաշտպանել Արցախը: Ընդ որում՝ անհավատալի բան. Սպարտակիս խոսքերով՝ իրենց «փախցրել» է մի թուրք տղա, սկզբում տեղավորել քանդված մի շինության նկուղում, հետո արդեն գնացքով հասել են Թիֆլիս: Երբ մոտեցել են կառամատույցին, դեռ սպասասրահում՝ վախը սրտներում, զգուշության համար անընդհատ չորս կողմն էին նայել եւ սպասել , որ մի



քանի թույլ մնացած նոր գնացք նստել: Բայց որովհետև ձեռքներին փող չկար, հուզված ու տագնապած՝ մեր բարբառով ինքնաբերաբար Ստեփանակերտից ու փողից են խոսել, եւ հանկարծ մեկը թիկունքից գրկել է Սպարտակին. «Վայ ես ձեր ցավը տանեմ, որ գնում եք հարազատ հայրենիքը, հողը, օջախների պատիվը պաշտպանելու: Ասեք՝ ինչո՞վ կարող եմ օգնել, ինչի՞ կարիք ունեք: Չվախենաք, ես էլ եմ հայ, իմ նախնիներն էլ էին Ղարաբաղից»: Առանց որեւէ պատասխան ստանալու, այդ մարդը ծոցագրպանից հանում է մի կապ 25-անոց, տալիս տղաներին եւ նրանց ուղեկցում մինչեւ գնացք...

- Բայց մենք դեռ էլի էինք վախենում: Կասկածը կրծում էր մեր սիրտը. իսկ եթե դա սարքովի՞ գործ է... կարող է, չէ՞, այդ մարդը ԿԳԲ-ական լինի, -ծիծաղելով պատմում էր Սպարտակս:

Փողը բաժանում է 4 մասի՝ տալիս ընկերներին: Թիֆլիս հասնելուն պես նստում են մեքենա, հասնում Երեւան: Այնտեղ էլ են դժվարությունների առաջ հայտնվում. անձանոթ միջավայր, պատերազմական իրավիճակ, չգործող երթուղիներ եւ այլն:

Միջանկյալ ասեմ, որ մեր նկարահանած ֆիլմերից մեկում Արսենի, Արկադիկի եւ Արայիկի հետ կապված պատերազմական դրվագներ կան: Նրանք եւս վիրավորվել են, կազդուրվել եւ, փառք Աստծո՝ կրկին վերադարձել իրենց ջոկատները: Միայն Սպարտակս է, որ անհայտ կորավ մարտական գործողությունների ժամանակ:

Վերադառնամ Երեւանում նրանց գտնվելու օրերին: Այսուայնտեղ գլուխները մի կերպ պահելով, էլի վախը սրտներում, սրանից-նրանից հարցում անելով, տեղեկանում են, որ բեռնատարներով Երեւանից գեւք, սննդամթերք ու զինամթերք են տանում Ստեփանակերտ: Ինչ-

պես է պատահում, բեռնատարների կայանատեղիում Սպարտակը հանդիպում է հաթերքցի վարորդ եւ ամուսնուս ընկեր Սերժիկ Բալասանյանին: Վերջինս գրկելով մեր տղային՝ ուրախացած հարցնում է. «Ա՛խոխա, երկու շաբաթ է՝ դու անհայտ կորած, որտե՞ղ էիր... Ձերուք հալումաշ են եղել գլխներին վայ տալով... Գնամ նրանց աչքալուսանք տամ»: Համապատասխան մարդկանց հետ պայմանավորվելով, նա Սպարտակին ու ընկերներին նստեցնում է զենք տեղափոխող ուղղաթիռ, որը պետք է վայրէջք կատարեր հենց Սերժիկենց գյուղում, որովհետեւ այնտեղ համեմատաբար անվտանգ էր, միաժամանակ պատվիրում, թե՛ կգնաս մեր տուն, ես գիշերը գալու եմ: Հաջորդ օրը Սերժիկը Սպարտակին բերում է Ստեփանակերտ:

Ես այն ժամանակ աշխատում էի պետական համալսարանում եւ գործով Գյուլչորա Հայրապետյանի հետ քայլում էի բանկ տանող փողոցով՝ շատ մտամոլոր: Երբ հրամանատարությունը տեղեկացրեց, որ տղաս փախել՝ եւ հետախուզման մեջ է, երազում տեսա նրան՝ անթրաշ, կեղտոտ շորերով, դեմքը՝ մռայլ: Հետո էլ քույրս զանգեց, թե նրան «տեսել» է կապույտ վերնաշապիկով. «Մոտեցավ գրկեց, քեզ, ասաց՝ մամ ջան, լավ եմ, լավ»: Քայլում էի, ուրեմն, Գյուլչորայի հետ ու մտովի փորձում մեկնաբանել երազների իմաստը: Հասել էինք «կոլցեվոյի» խաչմերուկ՝ մեկ էլ մեկը թիկունքիցս գրկեց ու հեւասպառ՝ մամա ջան, չվախենաս, ես եմ... Համաձայնվեցեք, որ ցանկացած մարդ նման պահին կկորցնի ինքնատիրապետումը: Կարճ՝ երբ աչքերս բացեցի, տեսա Սպարտակս ամուր բռնել է ինձ, որ չընկնեմ: Երկու շաբթվա ընթացքում այնքան վատ բաներ էին անցել մտքովս, որ Աստծուն աղաչել-պաղատել էի, թե եթե թուրքերն սպանել են տղայիս, գոնե դիակը ինձ հասցնի... Ճակատագրի

ինչպիսի՜ հեգևանք. 18 տարի անց՝ էլի նույնն եմ կրկնում... Որտեղի՞ց իմանայի, որ ժամանակ անց որդուս ճակատագիրը հենց այդպես էլ կդասավորվի՝ կհայտնվի թուրքական գերության մեջ:

Այդ երեկո Սերժիկը եկավ մեր տուն՝ նորից բարեգործական բեռով. ալյուր, միս, բանջարեղեն... Ասաց՝ գիտեմ, որ առանց իմ ասելու էլ բաժանելու ես ժողովրդին: Իհարկե, բաժանեցի: Չանցած մի քանի օր, նա նորից երեւաց ու դեռ շեմից թե՛ ախպորս տիկին, սոված եմ, էն մսից մի բան սարքիր ուտեմք: Քրտիկները վրաս տվեց. ամբողջը բաժանել էի, մնացել էին ոսկորները, մարդամեջ հանելու բան չէր... Ծիծաղելով թե՛ այ կնիկ, գի՞ժ ես, այնքան մսից չէ՞ր կարելի մի հոգեպահուստ պահել: Ինչեւէ, տան եղած-չեղածից մի բան պատրաստեցի, սեղան նստեցինք, եւ գրույցի ընթացքում որոշեցինք տղայիս հարսնացուին տուն բերել՝ նախապես հայտարարելով, որ երաժշտություն, ազդանշաններ, կրակոցներ չեն լինելու, որովհետեւ Ստեփանակերտում, ընդհանրապես Ղարաբաղում, վիճակը ծանր է: Չասվի՜ խալխի սրտից արյուն է կաթում, սրանք զուռնա-ղավալով հարսանիք են անում...

Ես ու մեր հարեւան Կարինեն, ուրախությունից, թե ընդհանուր ծանր պայմաններից, իրար գրկած լաց էինք լինում: Կարինեն երկու տղա ուներ, ես՝ մի աղջիկ, մի տղա: Նրա Արթուրը զոհվել էր, բայց Ջոնիկը, փառք Աստծո, ողջ էր: Իր մեջ արիություն գտնելով՝ մեզ ճանապարհելուց առաջ Կարինեն ասաց՝ սպարտակները, ջոնիկները պետք է ամուսնանան, որպեսզի նոր արթուրներ ծնվեն, հայրենիքը պահեն: Այդ խոսքը հաճախ եմ հիշում՝ ամեն հիշելուց էլ արտասվում...

Ձմռան օրով մտանք Ակնաղբյուր, ժամի չափ նստեցինք: Կենացներ հիշատակվեցին, եւ ընդունված կարգով

մեր հարսին վերցրինք եկանք տուն: Ահագին մարդիկ էին հավաքվել, համալսարանի իմ գործընկերներից էլ՝ մոտ 20 հոգի: Յարսանիքին ներկա էր նաեւ մեր գլխավոր հաշվապահի ամուսինը՝ «Նաղարաչի Յամլետը»: Տեսնե- իք-լսե՛ի՛ք՝ ո՛նց էր երգում աշուղ Ջիվանու «Ձախորդ օրե- րը»... Բոլորը լացում էին՝ հուզմունքից. ու հոգեպարար երգի բառերից:

Ինչո՞ւ շեշտեցի այդ պահը: Որովհետեւ այն կապված է 1981-ին իմ «ստացած» հիվանդության հետ: Այն դժոխա- յին օրերը վերհիշելիս հիմա էլ եմ վատանում, դողում... Բժիշկները գլուխ չէին հանում իմ հիվանդությունից: Վի- ճակս օրեցօր ավելի էր ծանրանում, հույսի նշույլ չկար, մերոնք ինձ մի կերպ հասցրին Մոսկվա՝ շտապ վիրահա- տության ենթարկվեցի: Վիրահատությունից հետո ծխի նկատմամբ ավերգիա առաջացավ/ այժմ էլ ինձ մոտ ծխե- ցին թե չէ՝ համարյա ուշաթափվում եմ, ամուսինս, որ թունդ ծխող է, այդ պատճառով տանը երբեք չի ծխում/: Յետվիրահատական ստուգումներից պարզվեց, որ ինձ մոտ քրոնիկական թունավորում կա... Վերադառնամ հարսանիքին: Սկսվելուց հազիվ 10-15 րոպե անց Սպար- տակս վեր կացավ հարսին թեւանցուկ արած ու թե՛ խնդ- րում եմ սենյակում չծխել, մայրս ծխի նկատմամբ ավեր- գիա ունի, որն ուղեկցվում է վտանգավոր հետեւանքնե- րով... Յյուրերն ըմբռնումով մոտեցան ասվածին: Ով ու- գում էր ծխել, դուրս էր գալիս մուտքի հարթակ, որովհե- տեւ տղաս խնդրել էր պատշգամբում էլ չծխել:

Մեր բախտից թե Աստծո ողորմածությամբ՝ հարսանի- քի օրն, այսինքն՝ 1993-ի փետրվարի 7-ին, ռազմաճակա- տից գույժ չեկավ՝ զոհ չեղավ: Ընդրակառակը՝ մեր ազա- տամարտիկների գրոհները հաջողությամբ պսակվեցին ու հենց այդ տարվա գարնանից թուրքերը, չղիմնալով մերոնց ճնշումներին, խելամիտ գրոհներին, սկսեցին լե-

դապատառ լքել դիրքերը: Հարսանիքն ընթացավ ավանդական հունով, իհարկե՝ ժամանակի ու պայմանների համաձայն՝ ոչ այնքան ճոխ, ոչ էլ պակաս- պռատ: Ամուսնանալուց չորս թե հինգ օր անց Սպարտակի գնաց մարտադաշտ, թեեւ 10-օրյա կարճատեւ արձակուրդ էր տրամադրված իրեն: Իններորդ օրը եկավ տխուր եւ ընկճված: Հարցրի՝ ինչ է եղել, ասաց՝ տեղափոխվում եմ հրետանավորների ջոկատ: Հետո էլ հատ-հատ ավելացրեց. «Մամա, Էն 16 հոգուց, որ մասնակցեցին հարսանիքին, 13-ը զոհվել են արկի բեկորներից»: Աղեկտուր ճչացի, հետո գիտակցելով, որ դրանից նրա հոգեվիճակն ավելի կծանրանա, մտա մյուս սենյակն՝ այնտեղ ազատություն տալու արցունքներին:

Որոշ ժամանակ անց, երբ ճաշասենյակ վերադարձա, Սպարտակս անորոշ հայացքով նայում էր պատուհանից դուրս: Լռությունն առաջինը խախտեցի ես՝ տղաս, ի՞նչ ես մտածում... Անմիջապես չարձագանքելով իմ խոսքերին, դարձյալ հայացքը հառած մի կետի, հավանաբար, համարձակություն ներշնչելով իրեն, մրմնջաց. «Մամ, ուզում եմ մտնել ավտոտեսչություն»: Ասացի՝ բայց դու մասնագիտական կրթություն չունես: Երկու անգամ մասնակցել էր ընդունելության քննություններին՝ երկու անգամ էլ մրցույթից դուրս մնացել...

«Մամա՛, գիտես, որ միշտ երազել եմ ավտոտեսուչ լինել... Կընդունվեմ՝ սովորեմ»:

Մեր զրույցից հետո նա, չգիտեմ ինչպես, իրոք հասավ նպատակին. ծառայության մտավ ներքին գործերի համակարգում: Սպարտակս ու իր քենակալը շատ մոտ հարաբերությունների մեջ էին, մտերիմ՝ այն աստիճան, որ նա իր «Ժիգուլին» պարբերաբար վստահում էր տղային: Ես էլ թոնթորում էի, թե խալիսի մեքենան ինչո՞ւ ես վերցնում, հեռու մեզնից որ մի բան պատահի, ո՞վ է դրա վնա-

սը քաշողը: Խնամիների կողմից հյուրընկալվելու հրավեր ստացանք: մենք մնացինք տանը, ջահելներին ուղարկեցինք: Երբ եկան, հետները... Լոր ծնած մի այծ բերեցին: Բացատրեցին, որ դա ավանդույթի պես մի բան է. մեր նախնիները բարեկամությունն ավելի հաստատուն դարձնելու նպատակով որեւէ բան էին նվիրում՝ ով ինչի հնարավորությունն ուներ: Տղաս հիացած պատմում էր. «Այժը եւ ուլը մեզ հետ հավասար քայլում էին, հենց որ կանգնում էինք, նրանք էլ էին կանգնում: Բայց քանի որ ուլիկը մեկ օրական էլ չկա, նրան գրկեցինք... Երբ մեկ-մեկ իջեցնում էինք, իսկույն վազում էր մոր մոտ՝ կուրծք առնելու»: Որդիս դեռ մանկուց էր սիրում կենդանիներին: Մայր այծի հայտնվելը մեզ համար յուրատեսակ փրկություն էր. նախաճաշի կաթն ապահովված էր...

Այժին, բնականաբար, մեր հարսիկն էր կթում:

Սպարտակս բոլորի նման մասնակցում էր պատերազմական գործողություններին, հիմնականում՝ սահմանամերձ գոտիներում: Ամեն անգամ, երբ մի քանի ժամով տուն էր վերադառնում, հագուստը փոխելու, լողանալու, թախանձում էի՝ չի լինի՞ որ չգնաս... Վախենում եմ... Ինձ գրկում ասում էր՝ մամ ջան, բա իմ մարտական ընկերները, մեր հերթափոխի տղաները մայր չունե՞ն... Կլինի՞ ինչ ճակատիս է գրված: Այդ ասելուց հետո դուրս եկավ, չգիտեմ՝ ուր գնաց եւ ամբողջ օրը տուն չվերադարձավ...

Ազգային բանակը Լոր-Լոր էր կազմավորվում, ինքն էլ արդեն ոստիկանությունում «ստաժոր» էր: Պատերազմական գործողությունները շարունակվում էին եւ ամեն օր՝ զոհեր, զոհեր, զոհեր: Ստեփանակերտում էլ երեխաները, ծերերն ու կանայք՝ պատսպարված նկուղներում, կիսաքաղց, ծարավ, կեղտի մեջ կորած: Մի խոսքով՝ անտանելի վիճակ: 1993-ին Ստեփանակերտի համալսարանի քիմբիոլոգիայի ֆակուլտետի դեկան Արամայիս

Աղասյանը /ծննդով՝ Զուլատակ գյուղից/ մեզ կանչեց իր մոտ, ասաց՝ հարկավոր է ճակատում մարտնչող ազատամարտիկների համար ծանրոցներ պատրաստել... Ով ինչով կարող է՝ թող մասնակցություն բերի գործին: Գործի պատասխանատվությունն էլ ինձ վրա դրեց: Մեկը գուլպա, հագուստ, մյուսը՝ կոշիկ, ձեռնոց, երրորդը՝ ծխախոտ, աղանձ, չիր, պեչենի, կոնֆետ, թխվածք էր բերում... Մի քանի օրվա ընթացքում յոթ մեծ ծանրոց պատրաստեցինք եւ ըստ շրջանների ուղարկեցինք ճակատ:

1993-ի վերջերին տղաս հիվանդացավ: Ուռքերն էլ ցրտահարվել էին: Հոսպիտալում պառկեց, շատ, թե քիչ ապաքինվելուց վերադարձավ ճակատային գիծ: Աղջկաս՝ Ինգայի ծննդյան օրն էր մոտենում, նոր տարվա ցլնախօրյակն էր: Բայց ի՞նչ նոր տարի, ի՞նչ տոն... Ո՞վ սիրտ ուներ նման բաների մասին մտածելու: Այդուհանդերձ՝ դեսից-դենից դրեցինք սեղանին՝ «նշեցինք»: Սպարտակն էլ, թե որտեղից ինչպես զանգեց՝ քրոջ ծնունդը շնորհավորեց: Հունվարի 6-ին էլ եկավ տուն՝ կարճատեւ հանգստի: Սկզբում բան չէր խոսում, ինքնամփոփ նստել էր /մեքենայաբար էր ինչ-որ ամսագիր թերթում, հավանաբար՝ ասելիքն էր նախապատրաստում/: Ես հարցեր էի տալիս, հետաքրքրվում իրավիճակով, մեր թաղի տղաներով՝ չէր արձագանքում, հետո առանց գլուխը բարձրացնելու ասաց՝ Արբատի Հակոբ տղան եւ մեր հարեւան Ռուդիկը զոհվել են...Արկն ուղիղ ընկել է նրանց խրամատը: Կրակի տարափի տակ Ռուդիկի դիակը չեն կարողացել հանել, ստիպված հողով ծածկել են, որ թշնամին չնկատի: Երբ հրաձգությունը դադարի, տուն բերեն: /Ավա՛ղ, հանգամանքները դասավորվեցին այնպես, որ այդ տղայի դիակը հողին հանձնվեց միայն երեք ամիս անց/:

1994-ի սկզբներից արդեն հայ ազատամարտիկների գրոհներն ակնհայտորեն եւ ամենուր հաջողությամբ էին պսակվում: Օրավուր նոր բնակավայրեր էին ազատագրվում, եւ թշնամին, մեծ կորուստներ տալով, նահանջում էր, նրան թափով վտարում էին Արցախի սահմանամերձ շրջաններից:

Հունվարի 6-ին, ուրեմն, Սպարտակս նոր էր մեկ օրով տուն եկել /դեռ չէինք էլ հասցրել մեկ-երկու բերան զրուցել, որպիսությունը հարցնել/, մեկ էլ ավտոտեսչության պետ Վլադիմիր Թարխանյանը զանգեց, թե՝ հրամայված է շտապ մեկնել Սարսանգի տարածք: Ճիշտն ասած՝ չհամբերեցի, կոշտ տոնով կշտամբեցի՝ մեկ օրով բաց եք թողել՝ մեկ ժամ էլ չի անցել եւ... Ասաց՝ ա՛յ քույր ջան, ես էլ եմ գնում, բա ֆրոնտ ա, ինչ եք ուզում, հո մենք չենք որոշողը, որտեղ մարտերը թեժանում են՝ օգնական ուժ են ուղարկում...

Արածս ինձ էլ դուր չեկավ, բայց դե մայր եմ էլի... Ծանր մտորումների մեջ ընկա, սրտումս ծակոց զգացի, ուղեղս մշուշվեց... Վատ կանխագագում էր պաշարել հոգիս, սիրտս ասես ճմլվում էր: Հրաժեշտի պահին տղայիս համբուրելիս չգիտեմ բերնիցս ինչպես թռավ՝ այ իմ բալա, գուցե վերջին անգամս եմ տեսնում քեզ... Վայրկենական թուլություն էր, որի համար հիմա էլ չեմ ներում ինձ: Գնաց, մեզ թողնելով տագնապի եւ հոգեմաշ սպասումի մեջ: (16 օր ոչ մի լուր չկար) միայն մի բանից եմ վախենում՝ հանկարծ վիրավոր, անգիտակից վիճակում չգերվեմ... Նախընթացին թուրքերը թարսի պես հենց Սպարտակ անունով հայի ձեռք էին կտրել՝ հետո նրան փոխանակել մեր ձեռքին գտնվող մի թուրքի հետ, եւ այդ փաստը, չգիտեմ ինչու, հոգուս մեջ ծանր նստվածք էր թողել. սկսեցի ավելի շատ վախենալ որդուս համար...



Մոր սիրտը չի խաբում:

Իմ եւ որդուս հերթական հանդիպումը...

Օրինյալ լինես, Տեր, որ տղայիս ողջ-ամողջ նորից ինձ նորկայացրիր, մոր համար կա՞ ավելի մեծ երջանկություն, քան՝ որդու վերադարձը արյունոտ ռազմաճակատից: Տղայիս հաջողվել էր տուն գալ, որովհետեւ իրենց փոխարինողներն արդեն դիրքերն էին հասել, եւ հրամանատարությունը մեկ օրով բաց էր թողել հներին: Դեռ չէր հասցրել շորերը փոխել, սափրվել, լվացվել, մեկ-երկու բերան զրուցել՝ ընկերները զանգեցին, թե տաճնապ է հայտարարված, պետք է շտապ վերադառնանք: Նման իրավիճակի նախադեպն արդեն եղել էր, ուստի ձգտեցի ինձ հնարավորին չափ զուսպ պահել: «Եթե մեջքիս վրա գամ...- ես քարացա, իսկ Սպարտակս հանգիստ շարունակեց,- սեւ շոր չհագնեք: Ոչ մեկդ: Զրոջս համար հարսանիք կանեք,- ես նորից ցնցվեցի, - հպարտ կքայլեք այս հողի վրա. այս արհավիրքին ամբողջ ընտանիքով ժամ անգամ չենք բացակայել Արցախից...»:

Որդուս՝ մեզ ասած վերջին բառերը...

Տղաներն զգում էին, որ թե՛ մարտեր են լինելու եւ ով գիտե, թե ինչով դրանք կվերջանան... իրենցից յուրաքանչյուրի համար: 1994 թվականի հունվար ամիսն էր:

Որդիս գրպանից հանեց թաշկինակը եւ մի փոքրիկ տափօղակ /հիմա դրանք մյուս տղաների թողած նվիրական մասունքների հետ հուշաթանգարանում են/ ու մեկնելով ինձ՝ ասաց՝ գրպաններս պետք է փամփուռված լինեն... Վարորդական վկայականն էլ տվեց կնոջը թե՛ կպահես մոտդ: Զույրը կռացավ, քնքշանքով մաքրեց եղբոր կոշիկները... Հավանաբար աղջկաս սիրտն էլ էր վատ բան գուշակում: Այդ տեսարանից կարկամած՝ չգիտեմ ինչպես մրմնջացի՝ հո վերջին անգամ չես գնում...

Այդ օրերին թուրքերը վերջին ջղածգումներն էին

անում, կուտակել էին տարատեսակ ռազմատեխնիկա եւ թվային գերազանցություն ունեցող կենդանի ուժ: Ամենուր պատերազմական գործողություններն ավերածություններ եւ մահվան առատ դեպքեր էին արձանագրում: Երկինք ու երկիր ասես խառնվել էին իրար, թշնամին փորձում էր ետ վերցնել տանուլ տվածը, բայց մեր քաջերն ի մահ էին կռվում յուրաքանչյուր թիզ հողի համար: Ռազմաճակատի տարբեր հատվածներից հակասական լուրեր էին հասնում ստեփանակերտցիներիս: Կային վիրավորներ, նահատակվածներ, գետինը դողում էր հրետակոծությունից ու ռմբահարությունից: Մարդիկ տագնապած այս ու այն կողմ էին վազում, շնչակտուր հարցնում իրենց զավակների մասին: Ստեփանակերտի հոսպիտալում գնալով ստվարանում էին մարդկանց խմբերը: Պատին փակցված ցուցակներում յուրաքանչյուրը փնտրում էր իր հարազատ անունը...

Շուրջ 11 օր ռազմաճակատից վերադարձող չեղավ: Տարբեր լուրեր էին շրջանառվում՝ գուցե ոչ ստույգ, գուցե շատ ստույգ, ակնհայտը մի բան էր՝ ոչ ոք չէր ուզում վատ լուր լսել: Այդ տասնմեկ օրվա ընթացքում ես խելակորույս ինձ մեկ շտաբ էի գցում, մեկ՝ հոսպիտալ, օրվա մեջ տասն անգամ լինում ներքին գործերի վարչությունում, որտեղից որդուս եւ իր զինակից ընկերներին ուղարկել էին առաջին գիծ:

Երբ ՆԳ վարչության աշխատակցին հարցրի՝ ճիշտ է, որ ռազմադաշտից զինվորներ են անհայտ կորել, եւ նա, չիմանալով ով լինելու, թվարկեց անունները, ուշագնաց եղա... Ասես շանթահարվել էի. որդուս անունը «անհայտ կորածների» ցուցակում էր... Երբ տուն հասա եւ պատմեցի ամուսնուս, նրա վիճակն էլ վատացավ, լեզուն կապ ընկավ, շուրթերը կապտեցին:

Հավաքվեցին դրկից, բարեկամ, ծանոթ, անծանոթ.

վատ լուրը թելեր ունի...Մարդիկ կախել էին գլուխները: Ես հուսազերծ անող տազնապ կարդացի նրանց աչքերում, եւ մի ներքին ձայն ինձ թելադրեց մինչ այդ երբեք չբարձրաձայնած միտք արտահայտել՝ նրանց ի ականջ.

-Եթե անգամ ողջ չէ Սպարտակս, թող լեզուս չորանա, չենք սգալու, ժողովուրդ: Հայրենիքին ենք տալիս մեր զավակներին, մեր ազատությանն ու անկախությանը: Հայ մայրը պիտի դիմանա: Բայց սիրտս վկայում է, որ Սպարտակս ողջ է...

Դա այն էր, ինչ պատշաճ էր, որ հնչեր այդ պահին. իմ սիրտն էր կոտրված, ժողովրդի սիրտն ինչու՞ պիտի կոտրեի: Իրավունք չունեի: Լավի հանդեպ հավատը պահել էր պետք, եւ դա ակամայից տեղի ունեցավ:

Պատերազմական գործողությունների սրացում էր արձանագրվել հատկապես Կարախանբեյլի-Կորգան գյուղերի մերձակայքում: Դեմ-հանդիման մարտնչում էին կողմերը. ադրբեջանցիներ՝ ավարառու բռնազավթիչներ, հայերը՝ նվիրյալ ազատամարտիկներ: Տղայիս ջոկատի հետ կատարվածի մասին հետո իմացանք: Իմացանք, որ հրամանատարն, զգալով հակառակորդի կենդանի ուժի ու տեխնիկայի թվային գերակշռություն, տակտիկական նպատակով հրամայել է նահանջել /ուղղակի, ինչպես մինչեւ մարտի սկսվելը պայմանավորվել էին նման անցանկալի պահի հաշվով՝ ետ քաշվելու շեփոր են հնչեցրել/ հետագա հարձակման համար ապահով դիրքեր գրավելու: Չորս ժամ անց հայտնի է դարձել, որ ջոկատը տվել է 4 զոհ ու 2 անհայտ կորած. վերջիններս գյուղտեխնիկումի համակուրսեցիներ, երկուսն էլ նոր ամուսնացած՝ բալլուշեցի Գառնիկ Ավթանդիլյանն ու իմ որդի Սպարտակն էին: Ամիս անց, նաեւ տարիներ հետո, ամուսնուս եւ տղաների հետ քանի՛-քանի անգամ եմ «սանրել» այդ ռազմագործողության վայրը, տարածքի յուրաքանչյուր մետրը

փորել-փորփորել՝ աճյուն կամ հագուստի ծվեն, որելէ  
կշան, որելէ իր գտնելու համար՝ ավա՛ղ... Չեմ կարող, չէ,  
հաշտվել /դրա հիմքը չկա/ Սպարտակիս մահվան մտքի  
հետ, նա չի զոհվել, կա ինչ-որ տեղ...

Բոլորել էր տասերորդ օրն էլ՝ անհայտ կորածներից՝ ոչ  
մի տեղեկություն: Հունվարի 16-ին մենք ասես մեկեն  
հայտնվեցինք մեկ ուրիշ աշխարհում, մեկ ուրիշ չափման  
մեջ: Ժամանակը երկատվեց մեզ համար, դարձավ  
«մինչեւ 1994-ի հունվարի 16-ը» եւ «1994-ի հունվարի 16-  
ից հետո»... Դեռ չէինք ըմբռնում, որ անշրջելիորեն դառ-  
նալու ենք Սպասում բառի պատանդը, որ մեզ վրա իշխե-  
լու են Տարածությունն ու Ժամանակը: Եվ որ ինքս շա՛տ  
տարածություններ եմ կտրելու-անցնելու՝ որդուս որոնե-  
լու համար: Բայց այդ մասին հետո, հիմա պետք է պատ-  
մեմ՝ ինչպես իմացա տեղի ունեցածի մասին՝ ինչպես  
գնացի բանակի Գլխավոր շտաբ:

...Սովորականի պես գնացել էի համալսարան՝ աշխա-  
տանքի: Առանց այն էլ մտախոհ էի, գործընկերներիս  
տարօրինակ դեմք ու հայացքներն էլ տեսնելով ավելի  
անհանգստացա: Չգացի, որ վատ բան է կատարվել, թե  
չէ ինչու պիտի գործընկերներս հայացքները փախցնեին  
ինձնից... Սիրտս դուրս էր թռչում կրծքավանդակից:  
«Սպարտակիս բերեք տեսնեմ, թեկուզ ոտքը, ձեռքը կտ-  
րած...», - վայում էի ես: Վերադարձա տուն, եւ ամուսնուս  
հետ որոշեցինք գնալ Գլխավոր շտաբ՝ ստույգ տեղեկու-  
թյուն իմանալու: Մեզ դիմավորեց տղայիս հարսանիքի  
քավորը՝ Ազատ Աբրահամյանը: Ասացինք՝ քաղաքային  
ռադիոցանցով հայտարարություն է եղել, որ մինչեւ 45  
տարեկանները զորակոչվում են բանակ, եւ բոլորը պար-  
տադիր կարգով պետք է շտապ ներկայանան իրենց շր-  
ջանի գինկոմիսարիատ, իրավիճակն այդչա՞փ օրհասա-

կան է... Քավորը փորձեց հանգստացնել մեզ, սփոփիչ խոսքեր ասաց, բայց մենք չէինք լսում նրան, Շուրան անընդհատ կրկնում էր՝ 10 օր է՝ Սպարտակից լուր չկա... ամեն օր զոհեր են բերում, հոսպիտալները լիքն են վիրավորներով...

Հոսպիտալում էլ եղանք, ստուգեցինք վիրավորների ցուցակները, հարյուր անգամ կարդացինք՝ ու էլի չէինք հավատում մեր աչքերին: Չիմացա՝ ինչպես ինձ «Նիվա» նստեցրին, բերին տուն: Այնտեղ անհանգստությունս բարձրակետին հասավ, սկսեցի մեղադրել ամուսնուս՝ ինչու՞ ես տուն բերել, ուրեմն՝ մի բան գիտես՝ ինձ չես ասում... Խեղճը ստեպ-ստեպ կրկնում էր՝ շտաբում ընդամենն ասացին, որ ոստիկանների ջոկատը տարել են Ֆիզուլու եւ Հորադիզի հատվածը, այնտեղ թեժ մարտեր են գնում: Տարածքը մի քանի անգամ ձեռքից ձեռք է անցել...

Այստեղ պատումս պիտի ընդհատեմ՝ մեկ ուրիշ դրվագ ներկայացնելու համար: Գործով Երեւան էի գնացել: Փողոցով քայլելիս ականջիս հասավ ջութակի մելամաղձոտ երաժշտություն: Կույր մի տղա, գլխարկը դրած դիմացն, ինքնամոռաց նվագում էր, անցորդներից ոմանք էլ՝ անտարբեր անցնում նրա կողքով: Մտքումս ասացի՝ ատելի պատերազմս ինձ կրկնկակոխի հետեւում է... Գուցե՞ արկի բեկորից է կուրացել տղան՝ մեկդի կանգնած, երաժշտությունը լսելով՝ խորհում էի ես: Որքա՞ն փող տամ նրան, որ քիչ չլինի... Ձեռքիս ընդամենը 5 հազար դրամ կար ու մի քանի լումա, ես էլ Ստեփանակերտ պիտի վերադառնայի: Սպարտակս պատկերացավ աչքիս... Մոտեցա տղային ու մի հազարանոց դրեցի գլխարկի մեջ: Դա կարծես հանգստացրեց ինձ: Այդ օրը շատ էի քայլել, հոգնած էի, որոշեցի սրճարան մտնել: Մատուցողը հարցրեց՝ ինչ եմ պատվիրելու, ասացի՝ ոչինչ, պարզապես ուզում եմ մի քիչ հանգստանալ, ոտքերս ցավում

են: Այդ դեպքում, ասաց, աթոռն զբաղեցնելու համար հազար դրամ պիտի վճարեք... Եւ մեղավոր չէր, կարգն էր այդպիսին, բայց մեկ է, խոցված զգացի ինձ, մտածեցի՝ ի՞նչ է կատարվում, ով որտեղ է ապրում եւ՝ ինչ կյանքով... Թողի դուրս եկա:

Այնպէս ստացվեց, որ գործերս չհասցրի վերջացնել, հարկադրված մի քանի օր էլ մնացի Երեւանում՝ ընկերուհուցս պարտքով փող էի վերցրել: Երբ սրճարան էի մտնում, իսկույն սուրճ էի պատվիրում... Մի անգամ էլ զբաղեցնելով աթոռը՝ նայեցի շուրջս եւ ինձնից ոչ հեռու, կլորիկ սեղանի շուրջ, 4 հոգու տեսա նստած, չորսից մեկն էլ՝ Մուրադ Զարությունյանը, որին լավ գիտեի. ֆինանսների նախարարությունում էր աշխատում /հիմա չկա, լու՛յս նրա գերեզմանին/: Ժամանակին նա ինձ մի հարցում օգնել էր: Ցանկացա մոտենալ, բարեւել, մեկ էլ, չգիտեմ ինչու, միտքս փոխեցի: Ակամայից խմբի զրույցի ունկնդիրը դարձա: Նրանցից մեկը Թուրքիայից էր պատմում: Այդ անիծյալ երկրի անունը լսելուց լսողությունս, ինձնես անկախ, լարվեց, եւ ահա թե ինչու: Զատուկ, կարելի է ասել՝ գաղտնի, առաքելությամբ ես տուրիստական մի խմբի հետ պիտի մեկնեի այնտեղ. լսել էի, որ հայ գերիների մի մեծ խմբի Ադրբեջանից տեղափոխել են /ավելի շուտ՝ Կարմիր խաչի «աչքից» փախցրել/ Ստամբուլ, բայց մեկնելու ձգձգվում էր անցակետը ժամանակավորապես փակ լինելու պատճառով: Ինձ համար հետաքրքիր էր այդ երկրի վերաբերյալ հնչած ամեն մի մանրուքը... Շատ չանցած՝ նրանց խոսակցության թեմայից ես ոտից-գլուխ ցնցվեցի: Խոսողը, որին սեղանակիցները Բուդո էին ասում, շարունակում էր պատմությունը. «Մինչեւ վերադարձի ինքնաթիռ նստելը դեռ բավականին ժամանակ կար, որոշեցինք շրջել օդանավակայանին մերձ փողոցները, հետո էլ մի անկյունում, կարելի է ասել ոտքի

վրա, հաց էինք ուտում, երբ փողոցի մյուս կողմում աշխատող /ասֆալտն էին թարմացնում/ բանվորների տեսանք, որոնք տարօրինակ տեսքունեին. չափազանց նիհար էին եւ գունատ, մազակալած էլ դեմքերով: Կալանավորների էին հիշեցնում... Ցնցվեցի, երբ նրանցից մեկը բարձր ու մի քիչ էլ նեղված-չարացած ձայնով ընկերներից մեկին հայերեն ասաց. «Արա, մին էն կյուշ լապաթկան ինձ տո»: Բարբառից գլխի ընկա, որ դարաբաղցի է: Ուրեմն՝ սիրտս չէր՝ խաբել, իրոք կալանավորներ էին... Հսկիչներից աննկատ մոտեցա եւ արագ հարցրի՝ ովքեր են, ինչպես են ընկել այդտեղ: Իրենք էլ նմանապես արագ պատասխանեցին՝ ռազմագերի են, մի քանի օր է՝ ինչ Բաքվից հապշտապ տեղափոխել են Թուրքիա: «Բանտում լուր էր պտտվում, որ Եվրոպայից մարդիկ են եկել խցերն ստուգելու...,-բացատրեց «կյուշ» բահն ուզողը: -Ձեր աչքե՛րին մատաղ, տղերք, որ տեսնում եք հայրենիքը...Չգիտե՞ք՝ մեր մասին մտածող կա՞... Կփրկվե՞նք էս դժոխքից, թե՞ չէ...»:

Բուդոյի այդ խոսքի վրա էլ չկարողացա զսպել ինձ, մոտեցա սեղանին, բարեւեցի Մուրադին էլ, բուլորին էլ ու հարցրի.

-Կներեք, որ լսել եմ ձեր զրույցը...Նրանք ասե՞լ են իրենց անուն-ազգանունները...

Մուրադը նրանց կարճ բացատրեց՝ ով եմ... եւ Բուդոն հասկացող հայացքով նայելով ինձ՝ ասաց.

-Բուլորը չէ, քույր ջան, որովհետեւ պահակները, նկատելով, որ խբին օտար է խառնվել, եկան հեռու քշելու...Երկու հոգի, մեկը հենց բահն ուզողն էր, հասցրին բղավել՝ հիշեցե՛ք. Սարգսյան Կարեն Գարեգինի, Մարտակերտ՝ Թալիշ, Բաղդասարյան Ռաֆիկ Միքայելի, Հադրութ՝ Հախուլլու...

Այդ դեպքից հետո ես, բնականաբար, ոչ թե օրեր, այլ

Ժամեր էի հաշվում, թե երբ կճանապարհվենք Թուրքիա: Շաբաթ անց «Ճանապարհորդությունս», ի վերջո, գլուխ եկավ...

Այդ երկիր գնացողների մեծ մասն առեւտրական նպատակի է հետամուտ լինում, ուստի տեղ հասնելուց բաժանվեցի խմբից եւ ոտքով շրջում էի... առաջին հերթին շինհրապարակները: Եղա արդյունաբերական շատ տարածքներում ու բոլոր այն հավանական վայրերում, որ տեղ սովորաբար աշխատեցնում են բանտարկյալներին: Վերջապես կարողացա պարզել, որ աղյուսի գործարանում ռազմագերի հայեր կան... Ինձ գցեցի այնտեղ: Երեւում էր՝ գործարանը շատ արտադրամասեր ունի: Կալանավորներն աշխատում էին բացօթյա ու գրեթե առանց հսկիչների. վերջիններս, որ երկու հոգի էին /համազգեստից կարելի էր տարբերել/, տեսանելի հեռվում նստած՝ քաղաքացիական շորերով երեքի հետ տարված էին թղթախաղով: Երեւի մտածում էին՝ գերի հայն Ստամբուլից ինչպե՞ս պիտի փախչի, փորձի էլ՝ կողքին աշխատող թուրքերը չեն թողնի, իսկույն կհայտնեն... Մտեցա եւ ուղղակի հարցրի՝ ձեր շարքում դարաբաղցի կա՞... Ցնցվեցին, ուրախացան՝ վայ, քույրիկ ջան, մայրիկ ջան /հենց այդպես էլ դիմեցին/, հա՞յ ես, հայրենիքի՞ց ես... Կա, դարաբաղցի կա՝ բայց ոչ մեր խմբում, նրանք ուրիշ օբյեկտում են աշխատում: Պատմեցին, որ իրենց դիմակներ են հագցրել, ինքնաթիռով տեղափոխել այդտեղ: Ասացին՝ գերիներ շատ կան, իրենց խմբում 32 հոգի են: Օգտվելով առիթից, որ այդ պահին մոտերքում վերակացու չկար, մի քանի կադր արեցի ու քայլեցի դեպի նրանց հուշած ուղղությամբ: Ավա՛ղ, ֆորտունան շրջվել էր ինձնից. դրսում այլեւս բանտարկյալի չհանդիպեցի: Հիշեցի Փարիզն ու փարիզցիներին՝ եւ Ստամբուլն ինձ զգվելի թվաց... Այդ մի քանի օրվա ընթացքում հանդիպեցի նա-



եւ Հայաստանից, անգամ Ղարաբաղից, Թուրքիա եկած «խոպանչիների», առեւտրականների եւ, ինչպէս ընդունված է ասել՝ «հնագույն մասնագիտությամբ» փող վաստակողների: Տեղի ունեցավ մի անսպասելի հանդիպում էլ. տեսա ստեփանակերտցի Էլզային, որի հետ 25 տարի առաջ միասին աշխատում էինք կոշկի ֆաբրիկայում: Ամուսնու անբարո վարքից եւ ընտանիքի սոցիալական ծանր պայմաններից դրդված՝ հասել է Թուրքիա՝ փող վաստակելու: Ձեռքիս մի աննշան գումար էր մնացել, մտածեցի՝ գոնե մանր բաներ առնեմ աղջկաս, թոռներիս համար, եւ Էլզայի խորհրդով մտա մի մեծ խանութ, որտեղ կար գրեթե ամեն ինչ: Գրպանիս պարունակության մասին չմոռանալով՝ ծանոթանում էի ապրանքների գներին: Որ բաժին մտնում էիր՝ ժպտերես վաճառողն իր ծառայությունն էր առաջարկում: Մոտեցա մի վահանակի, ուր ցուցադրված էր իսկն իմ չափսի գեղեցիկ ժակետ: Մոտեցավ մի օրիորդ ու թե՛ չէք զղջա, վերցրեք, ասես հենց Ձեզ համար լինի գործված... Հասկացրի, որ մեծ գումար չունեմ:

-Թանկ չէ, ձեր փողով 3 հազար 500 դրամ է,- ժպտաց վաճառորդուհին: Մտածեցի՝ ձեռք է առնում կամ՝ առնվազն կատակում /ապրանքը շատ հարուստ տեսք ուներ/, բայց աղջիկը ժակետը փաթաթեց եւ ինձ տարավ դեպի դրամարկղը... Այն է՝ ուզում էի դուրս գալ խանութից՝ ձեռքիս՝ 5 հազարից մնացած 1500 դրամը, երբ իմ առջեւ տեսա նույն Էլզային: Ասաց՝ ինձ ուղեկցելու է հետաքրքիր մի մարդու մոտ... Պարզվեց՝ հայի եւ խանութի տիրոջ: Բարեւեցինք, մարդն աթոռ առաջարկեց եւ հուզառատ շեշտով սկսեց հարցեր տալ Հայաստանի ու Ղարաբաղի մասին: Ծեր էր ու հիվանդ: Երեւում էր տնից ու խանութից դէնը /դրանք նույն շենքում էին/ չէր գնում, ասաց՝ բա այստեղ ասում են, թե Ղարաբաղում միայն

թուրքեր են ապրում... Պատմեցի Արցախի ներկայի, նա-  
եւ՝ անցած պատերազմի մասին: Տեսեի՛ք՝ ինչպես փայ-  
լեցին աչքերը, իր մասին պատմեց. տարագիր է, գաղթի  
ճանապարհին կորցրել է հարազատներին՝ կարոտ մնա-  
ցել նրանց էլ, իրենց գյուղին էլ: Նոր հասկացա, թե ուղեկ-  
ցորդուհիս ինչու էր ինձ նախապես խնդրել՝ ծերունուն  
չասել, որ անհայտ կորածի եմ փնտրում...

Խանութ կոչվածը երկար ու նեղ մի միջանցք էր, վերջ-  
նամասում՝ արհեստանոցն՝ իր ներքնահարկով: Այնտեղ  
ֆրենչ էին կարում: Մարդն իր այցեքարտը տվեց ինձ ու  
թե՛ երբ էլ գաք՝ եթե դեռ կենդանի լինեմ, համեցեք... Մի  
քանի անգամ կրկնեց՝ նայիր, աղջիկս, տես ինչ է դուր  
գալիս քեզ՝ վերցրու, փողի էլ անուն չտաս... Ասաց՝ 500  
հատ ֆրենչ տամ՝ տար հայրենիքում ձրի բաժանիր կա-  
րիքավորներին:

- Գուցե կարոտս մայր հայրենիքից դրանով առնեմ,-  
հուզված բացատրեց նա, բայց ես հրաժարվեցի. ինչպե՞ս  
պիտի նման չափի ապրանք տեղափոխեի... Ասացի՝  
առելտրի համար չեմ եկել, հայրիկ: Նայեց աչքերիս ու,  
նրբանկատ մարդ էր, չհարցրեց՝ բա էլ ինչի՞... Երեւի  
մտածեց, թե եթե ասելու բան լիներ՝ ինքս կասեի: Զարգ-  
րեց՝ որտեղ եմ իջեւանել, ու երբ ասացի՝ «Մադրիդ» հյու-  
րանոցում, համարյա հրամայեց.

- Իջնում եք ներքնահարկ՝ 500 հատ «ֆրենչ» փաթեթա-  
վորել տալիս Ձեզ համար: Բեռը մեր ծառայությունը  
կհասցնի հյուրանոց: Զիվանդ ու միայնակ մարդ եմ, շու-  
տով կմեռնեմ, կարողությունս ի՞նչ իմանամ ում բաժին  
կհասնի... Ասածս տարեք, որ հանգիստ մեռնեմ:

Էլ նահանջելու տեղ չէր մնացել, ստիպված հայտնեցի  
այցիս նպատակը, միաժամանակ վերջնագրային տոնով  
ասելով, որ բեռան մասին խոսք չլինի: Աստվա՛ծ իմ, տես-  
նեի՛ք՝ որքան հուզվեց, ինչպես դողաց ծնոտը, անգամ

լաց եղավ: Ջրաժեշտին, սեղմելով ձեռքս, օրհնեց.

- Բարի ճանապարհ, աղջիկս, թող Տերը լուսավորի ճամփադ, քեզ հասցնի նպատակիդ...

Թուրքիայում եղած ժամանակ, անկախ միջանկյալ դեպքերից, ես անընդհատ Սպարտակիս եւ մեր մյուս տղաների մասին էի հարցնում՝ շատ դեպքերում վախը սրտումս, անգամ կասկածելով՝ կարո՞ղ է հանկարծ ինձ հետ այստեղ մի բան պատահի... Ստամբուլում եղա հայկական եկեղեցում, լուսանկարվեցի, շրջեցի շուկաներն ու խանութները: Ամենուր հայեր շատ կային, որոնց շարքում՝ եւ մարդիկ՝ ովքեր լքել են հայրենիքը, օտար ափերում հաջողություն փնտրելու համար: Դա ինձ մոտ տխուր մտքերի տեղիք էր տալիս. մեղմ ասած՝ մեզ ոչ բարեկամ այդ երկրում հային, այն էլ դրսից եկածին, որչա՞փ պիտի ժպտա բախտը, որպեսզի առանց ստորանալու, սեփական անձը նսեմացնել, կարողանա հարստանալ: Կարծեմ ասել եմ արդեն՝ կային առեւտրով զբաղվողներ, հարուստ մարդկանց կամ նրանց երեխաներին խնամողներ, կային եւ մարմնավաճառներ: Ում հետ էլ խոսում ես, ասում է՝ կարիքն է ստիպել... Մի՞թե դարի ողբերգությունը չէ այն, որ երիտասարդ հայուհին իր կամ ընտանիքի գոյությունն ապահովելու համար վաճառում է մարմինը: Եվ արդյո՞ք տեղի ունեցողում մեղքը միայն նրանցն է, նրանցը՝ ովքեր փաստորեն զոհի դերում են հայտնվել: Թե՞ իր որոշակի, կամ պայմանական, բաժինն ունի եւ նրանցից յուրաքանչյուրի երկրի իշխանությունը... Եթե ժամանակին ու հարկավոր չափով լուծում տրվի բնաչության, նրա առանձին խավերի, սոցիալական հարցերին, իրավիճակն, անշուշտ, կփոխվի դեպի լավը:

Այժմ՝ մեկ ուրիշ հարցի մասին: Եթե որեւէ մեկին թվում է, թե ես անհայտ կորածների կամ ռազմագերիների խնդրականով դռներդուռ եմ ընկնում սոսկ իմ գավակի՝ Սպար-

տակի ճակատագրի մտահոգությամբ՝ չարաչար սխալվում է: Ռազմագերիների, եւ առհասարակ բոլոր անհայտ կորածների, ցավն առաջին հերթին նրանց մայրերի, ծնողների ու հարազատների հոգում վաղուց արդեն նստվածք է տվել չսպիացող վերքի տեսքով, ու երկրորդ՝ որ մեր բոլոր տղաները իմ սրտին համարյա նույնքան սիրելի են եւ հարազատ՝ որքան Սպարտակս: Ես նրանց Աստծո ամեն առավոտ «Բարի լույս» եմ ասում՝ հուշաթանգարան մտնելով...Նրանց նկարներին, նրանց աչքերին նայելով: Կարծում եք՝ հե՞ջտ է դա:

Ես խոսում եմ՝ որոնումների, հույսի, պայքարի, հիասթափության ու պահանջատիրության լաբիրինթոսում հայտնված բոլոր մայրերի կողմից, եւ նրանց ընդհանուր տառապանքն է, որ ինձ պարտադրել է հազար ու մի ճամփաներով դեգերել, դիմում-բողոքով դիմել աշխարհի բոլոր կազմակերպություններին, իրավասու անձանց, որպեսզի բոլոր մայրերի հույսի, հավատի թելը չկտրվի: Այրողներիս պարտքն է սա, պայքարի ու բարոյականի, մեր գոյության արդարացումի իրական միջոցն է սա: Ոչինչ, որ շարադրանքս հատվածային երանգ ունի, գուցե անգամ իրարամերժ պատկերներ, կրկնվող մտքեր ու դրվագներ գտնեք այնտեղ...դա էլ է պայմանավորված իմ եւ բոլոր մայրերի խռովահույզ սպասումներով ու տազնապաներով առլեցուն անորոշ-անհայտ հանգամանքներով: Այս իմաստով եւ համատեքստում՝ ես ու իմ բախտակից մայրերն առանձնապես հաշվետու չենք որեւէ մեկին, քանզի մեր խիղճն ու բանականությունը, մեր ոգին, վերջապես, թելադրում են «գետնի տակից» էլ լինի՝ հայտնաբերել անհայտ կորած... հատկապես ռազմագերիներին: Համոզված եմ, որ բոլոր մայրերը օրը մի քանի անգամ մեռնում-հառնում են, եւ նրանց հառնումի կոչողը ոչ թե հանապազօրյա հացն ու ջուրն են, այլ՝ հույ-

սը, հավատը, իրենց ներքին զգացողությունը՝ թե, իրոք, մեր տղաները կան ...

Ես տարբեր ժամանակներում ու առիթներով բավականին տեղեկություններ եմ ստացել, որ Սպարտակս եւ տղաներից շատերը կենդանի են: Ուստի որքան էլ որ թշնամու ճամբարից, կամ միջազգային կազմակերպությունների կողմից, պաշտոնապես հայտարարեն, թե Ադրբեջանում չկան հայ ռազմագերիներ, անհայտ կորածներ, պատանդներ, մեկ է, չեմ հավատա. մեր պատմությունն է մեզ ուսուցանել, թե ում հետ գործ ունենք...- Նոր մեր գրասենյակ էր այցելել, ինչպես համապատասխան փաստաթղթում՝ մահվան վկայականում է նշված՝ «ԼՂՀ տարածքային ամբողջականության պաշտպանության» մարտերից մեկում 1992թ. հունվարի 21-ին զոհված քարինտակցի Միշա Յովհաննիսյանի տիկին՝ երեք զավակի մայր Էլան, որին թուրքերը գերեվարել, կամ ավելի հստակ՝ պատանդել, էին 1993թ. սեպտեմբերին: Այդ կինն անցել է գեհենի բոլոր կրակներով, ենթարկվել բազում կտտանքների՝ ավելի քան 1 տարի կրելով տառապանքի բեռներ, մինչեւ մեր կողմին վերջապես հաջողվել է փոխանակության միջոցով ազատել նրան: Ողորմածությունից զու՛րկ թուրքը...Ահա, նայեցեք՝ տիկին Էլան է՝ մինչ գերությունը եւ՝ գերությունից հետո /դժբախտության մեջ հայտնված կինարմատի հետ, անգամ եթե նա բարիկադի մյուս կողմից է, գազանաբար վարվողներին մի՞թե կարելի է առհասարակ մարդ անվանել/: Նա պատմում թվարկում է, թե որքան գերված հայերի է տեսել սկզբում Գըզգալասիում /Բաքու/, ապա՝ Գոբուստանի բանտում:

Ղարաբաղյան պատերազմում պարտված կողմի հայտոյաց քարոզչությունը գնալով ավելի ու ավելի տգետ ու տգեղ ձեւով է դրսեւորում իրեն, եւ դա չի զարմացնում

մեզ: Ի տարբերություն նրանց՝ մենք պատերազմի կոչ  
չենք հնչեցնում, մենք մեր երկիրն ենք շենացնում եւ  
սպասում մեր որդիներին... Կա մի հոգեկերտվածքային  
իրողություն. եթե մոր աչքը չի տեսել որդու դիակը, կարո-  
տի պապակ շուրթով չի համբուրել որդու ճակատը, չի  
հավատա, որ նա չկա...

Նորից ու նորից եմ հիշում եղածը. որդուս վերջին այ-  
ցին տնեցիներով մի կարգին գրույց էլ չունեցանք, որով-  
հետեւ, ինչպես արդեն ասել եմ, մեկ օրով էր տուն եկել՝  
մեկ ժամ էլ չմնաց...

- Վիճակն այնտեղ շատ է ծանր, գնալ է պետք: Ես չեմ  
կարող իմ գինակից ընկերներին մենակ թողնել: Շորերս  
փոխելու համար եմ եկել, մամ...,- որդուս այս խոսքն ինձ  
տառապանքի սյունին է գամած պահում, բայց եւ՝ ուժ ու  
հպարտություն հաղորդում ինձ: Մեկ-մեկ մտածում եմ՝  
գուցե եթե վերջնագրի լեզվով խոսեի նրա հետ, հնարա-  
միտ գտնվեի՝ գոնե մեկ օր ետ պահելու գնալուց, ուրիշ  
ճակատագիր բաժին ընկներ նրան... Բայց ես չգնացի  
այդ քայլին, ներքին մի ձայն ետ պահեց: Բացի այդ էլ՝  
Սպարտակս, մեկ է, չէր լսելու ինձ... Հիմա չգիտեմ՝ ում  
մեղադրել այն վճռորոշ ու ճակատագրական վայրկյան-  
ների համար: Կար ժամանակ, երբ նույնիսկ մտածում էի  
ինքնասպան լինել, բայց հետո հասկացա, որ դա թուլու-  
թյան դրսեւորում կլիներ: Մեռնեի՝ ո՞վ կմտածեր Սպար-  
տակիս, եւ հարյուրավոր անհայտ կորածների, մասին,  
ո՞վ պահանջատեր կլիներ՝ աշխարհով մեկ արդարու-  
թյուն պահանջեր...

Իմ ողջ եւթյամբ ես արդեն հուսահատության դուռն էի  
հասել: Ծանոթ-բարեկամներս էլ սկզբում չէին համար-  
ձակվում խորհուրդ տալ կամ սփոփել, ասել՝ աղջիկ ու-  
նես, ամուսին, բա մեղք չե՞ն... Դրանք հնչեցին հետո: Ձեռ-  
քերս, ոտքերս, միտքս, հոգիս մի տեսակ ասես կաշկանդ-

ված-կապկապած էին, ցերեկն ու գիշերն իրարից չէի տարբերում, իմ մեջ նախկին կենսասիրությունից հյուլե չէր մնացել: Երկար պատեպատ խփվելուց հետո է, որ անհայտ կորածների մի խումբ հարազատներով, խնդիրը միջազգային հանրությանը լսելի դարձնելու նպատակով, որոշեցինք ստեղծել կազմակերպություն, որն արդարության կոչնակ կհնչեցներ ու վերադարձներ մեր գավակներին: Միաժամանակ նպատակադրվեցինք անհայտ կորածների ընտանիքներին, հարազատների ճակատագրին տեր կանգնել, քանի որ բոլորն էլ սոցիալական ծանր կացության մեջ էին հայտնվել:

Այդ գաղափարն իրականություն դարձավ 1998-ին: Հաշվեք՝ քանի՞ տարի է՝ տղաներից թարմ տեղեկություն չունենք: Ի՞նչ ապրումներ ենք ունեցել, ինչ դեգերումների, վտանգների միջով եմ անցել, քանի՞-քանի պաշտոնյայի ու շարքային մարդկանց հետ հանդիպել, ինչ «խողովակներով» շարունակել որոնումներս... Հիմա ինքս էլ չեմ հավատում իմ «հնարքներին ու մեթոդներին», իմ արածներին: Թող անհամեստություն չթվա, եթե ասեմ՝ մենակ մի պետության չափ ջանք եմ թափել... Ի՞նչ արած, սակայն, որ էլի նստած ենք «կոտրած տաշտակի» առջեւ: Մաղով ջո՞ւր եմ կրել...Չէ՛, հիմա էլ եմ պատրաստ՝ գնալ ամեն զոհողության, միայն թե Սպարտակիցս ու տղաներից մի լուր ստանամ, տեսնեմ մեկն ու մեկին՝ նոր մեռնեմ...

Տառապագին որոնումներն ու՛ր ասես, որ չեն հասցրել ինձ, արհամարհել եմ ամեն տեսակի արգելք ու վտանգ, երկյուղ, նամակներով ծանոթներ «մեջտեղ գցելով», ժողովրդական դիվանագիտության ուղիներով որոնե՛լ ու որոնել: Լեռներում եմ գիշերել, բաց տափաստանում, օտարի, անգամ՝ թշնամու, հարկի տակ, հյուրանոցներում, քանդված շինությունների գարշահոտ պատերի

մոտ, չգործող ջրատարի խողովակում... Դիմել եմ ամեն միջոցի, որովհետեւ մենակ չեի. ինձ հետ էր Սպարտակս՝ նրան գտնելու հույսը, որ ուժ ու քաջություն էր ներարկում ինձ: Դեռ իմ «Տառապանքը ազգություն չի ճանաչում» գրքում եմ գրել «...Մայրն ամենուր մայր է, ամենաուժեղն ու ամենափխրունն Աստծո ստեղծածներից. ամենաուժեղ՝ երբ խոսքը վերաբերում է իր զավակին, երբ այդ զավակի համար պետք է անցնի անգամ անկամուրջ կրակե գետով»:

Տարիներ առաջ, երբ պաշտոնապես հայտնեցին մեր տղայի եւ մի խումբ ազատամարտիկների անհայտ կորած լինելու մասին, իմ եւ ամուսնուս համար աշխարհը կորցրեց իր գույները... Այդ օրվանից առ այսօր մենք խեղդվում ենք, եւ մեզ փրկել կարող է միայն նրա, եւ նրանց, վերադարձը՝ թեկուզ... վահանի վրա: Ինչպե՞ս կարելի է չհասկանալ դա:

**Արկաղի Բուդաղյանը** որ հասկանում է: Այժմ ԼՂՀ ՊԲ պահեստի կապիտան, պատերազմի ժամանակ՝ ավագ լեյտենանտ Արկաղի Բուդաղյանը, ում հրամանատարության տակ իր վերջին մարտին է գնացել որդիս... Մարդ՝ որ հաճախ է հիշում զոհված ու անհայտ կորած մեր տղաներին, եւ ով սրտի պարտք համարեց գալ մեր թանգարան, երբ իրեն հայտնի դարձավ, որ գրվելու է սույն գիրքը: Գալ ու պատմել այն, ինչ եղել է հայրենիքի ու տղաների համար ճակատագրական այն օրը... Մինչ նրա վերհուշը ներկայացնելը կուզենայի որոշ տեղեկություններ հայտնել այդ հիանալի մարդու եւ լավ հայի մասին: Ծնվել մեծացել է Ստեփանակերտում, հանրակրթական դպրոցից հետո ավարտել է Կրոնշտադտի /ՌԴ/ բարձրագույն ռազմածովային ուսումնարանը, ծառայության ընթացքում ծովեր ու օվկիանոսներ կտրել անցել, եւ դա /ընթերցողը, կարծում եմ, կհասկանա/ որոշակի-



րեն ամուր կամք է ձեռավորել նրա մոտ: Ասված է, չէ՞, որ տղամարդը տղամարդ է, իսկ ծովայինները՝ կրկնակի տղամարդ... ինչն առաջին հերթին վկայում է նրանց երկաթե բնավորության մասին: Ասացի «երկաթե» եւ ինձ «քիչ մը» մեղավոր զգացի, որովհետեւ Ա. Բուդաղյանը հարկավոր պահին մեղմանալուց եւ իր մարդկային սրտացավությունը ցույց տալուց չխուսափող մարդ է: Իսկ թե ինչպիսի հայրենասեր է եւ Արցախյան բանակի ինչ հրամանատար է եղել՝ կարելի է դատել իր ստացած, իմ պատկերացմամբ՝ նվազագույն, պարգեւներով. «Արիության համար» մեդալ, գեներալ Մ. Գրիգորյանի ձեռքից էլ՝ անվանական ժամացույց... Եվ առհասարակ՝ մի՞թե զինվորականի մասին դատում են միայն ստացած պարգեւներով: Իզուր չի ասված, թե պարգեւը միշտ չէ, որ հասնում է հերոսին: Ինչեւէ, իմ սրտին հարազատ չլինել չի կարող այն մարդը, ում «ստաժորն» է եղել իմ տղան եվ ում հետ իր վերջին մարտին է գնացել՝ ի դեպ, ասես նախախնամության թելադրանքով, դրանից անմիջապես առաջ նկարվելով նրա հետ /այդ լուսանկարն էլ եմ զետեղում սույն գրքում/:

Շարունակեմ, սակայն, ներկայացնել Արկադիի արցախյան «ծառայողական թերթիկը». ականագերծման գումարտակում է ծառայել, P3P է դեկավարել /инженерная рота заграждения и разграждения/: Կադրային զինվորական՝ ինչը երեւում է նրա ֆիզիկական կեցվածքից, սթափ դատողության տեր է եւ համարձակ ուղղախոս. բնավորության գիծ՝ որ հատկապես է դուր գալիս ինձ մարդկանց մեջ /գուցե այն պատճառով, որ ինքս էլ այդ «թերությունն» ունեմ/: Երբ մենք զրուցում էինք, չգիտեմ ինչու խելքիս փչեց այսպիսի հարց տալ. մարտի նետվելու պահին, կամ գուցե պիտի ասեի՝ այդ պահից անմիջապես առաջ, նո՞ւյնն է լինում, թե՞ տարբեր՝ ետեւում՝ երե-

խաներ թողած զինվորի եւ այդպիսին չունեցողի հոգեվիճակը... Գիտեի՝ նա պատերազմի ժամանակ արդեն կին ու երեխաներ ուներ: «Գրեթե ոչ մի տարբերություն,- պատասխանեց նա,- որովհետեւ երկուսն էլ մտածում են նախ մարտը շահելու մասին... Չէ՞ որ վերջին հաշվով դրանից է կախված մնացած ամեն ինչը... Եթե այդպես չլիներ՝ պատերազմից հաղթող չէինք ելնի: Երկրորդ միտքն էլ լինում է այն, որ «բախտո՞քաշի»՝ մարտից կենդանի դուրս գաս եւ ընտանիքի գիրկ վերադառնաս պատվով: Տվյալ դեպքում նշանակություն չունի, թե ովքեր են քեզ այնտեղ սպասողները. ծնողներ՞դ, քույր-եղբայրներ՞դ, թե՞ կինդ ու երեխաներդ:

Երբ Սպարտակը հրետանային բրիգադից տեղափոխվեց պետավտոտեսչություն՝ ստաժիրովկան ինձ վստահեցին: Առաջին իսկ օրերից նա ինձ դուր եկավ իր դրական շատ հատկանիշներով: Անկեղծ էր եւ պատասխանատվության շեշտված զգացումով օժտված: Ինչի ուղարկում էիր, ժողովրդի ասած՝ գլխի վրա էր գնում... Այնքան շահել լինելուն չնայած՝ խտացած տղամարդկություն ուներ ներսում, շա՛տ պատվախնդիր էր: Մի բան լիներ՝ անպայման ինքն էլ պիտի մասնակցեր. ընկերներից, կոլեկտիվից չէր ուզում կտրվել, տարբերվել: Ուշադիր էր, դիտողունակ, ընկերական: Կարճ ասե՞մ՝ այդ տղայի մոտ ես բացասական գիծ չեմ նկատել: Հա՛, գլխավորի՛ մասին չասացի. վախկոտ չէր: Դա արդեն իսկ ապացուցել էր մի քանի առիթով...

Ինքը չէր ծխում /երբեք/՝ ոչինչ, մեքենայում էլ մյուսներին չէր թողնում անել դա. ասում էր՝ նախ՝ տեխնիկական առումով վտանգավոր է, հետո էլ՝ առողջությանը վնաս է: Կարծես թե մենք չգիտեինք: Գիտեինք, բայց դե պատերազմ էր, իսկ պատերազմում չծխողն էլ է ձեռքը ծխախոտին մեկնում... Արի ու տես, որ նրա ասածն անում էինք: Այնքան հետեւեցինք խնդրանքին, որ մի անգամ էլ կես-

կատակ-կեսլուրջ ասացի՝ այսպես որ գնա, այ տղա, ծխելը հո լրիվ եմ թողնելու:

Այն չարաբաստիկ օրը՝ 1994 թվի հունվարի 16-ին, շա՛տ դաժան մարտեր մղեցինք Կարախանբեյլիին մերձ Աշաղը եւ Յուխարը Սեդդահմեդլի բնակավայրերի մոտ: Տղաներն ամյուծի պես էին կռվում, վիրավորվողները թիկունք չէին գնում, առաջին օգնություն էին ստանում՝ նորից շարքում գրավում իրենց տեղը: Լավ հիշում եմ, կոնկրետ այդպես վարվեց մեր հրամանատարը՝ Կառլեն Առստամյանը: Ինքն էլ իր վերքը մաքրեց կապեց՝ չլքելով տեղը... Առաջ նետվելով՝ հակառակորդին դուրս շարտեցինք խրամատներից ու դիրքավորվեցինք այնտեղ՝ ձգտելով հետագա առաջխաղացման, բայց մինչ գործը կհասներ դրան, ռեւանշի ձգտող թշնամին այնպիսի մի հակահարձակում սկսեց մեր դեմ, որ կասեցնել գործնականում անհնար էր: Առաջին շարքում, պատկերացրեք, շարժվում էին հարյուրավոր նռնականետորդներ... Դժվար է նկարագրել, թե ինչպիսի թոհուբոհ էր: Մենք ոչ մի պարագայում չպետք էր գրաված խրամատները ձեռքից տայինք: Խնդիրը բարդանում էր նրանով, որ մեր առջեւ խրամատի շարունակություն կազմող հողապատնեշ չկար, ինչը սովորաբար պաշտպանում է կռվողին /քանի որ դրանք թշնամու փորած խրամատներն էին, հողապատնեշն էլ, բնականաբար, ոչ թե առջեւում էր, այլ՝ մեր թիկունքում.../: Նռնականետների եւ թշնամու վարձու/ ուրեմն եւ՝ փորձառու/ զինվորների ոտքին ամրացված ականանետների /վազում էին առաջ՝ կրակում, վազում՝ կրակում.../ արկերն անում էին իրենց գործը, նաեւ խլացնում մեզ: Արկերից մեկից երկու հոգի ծանր կոնտուզիայի ենթարկվեցին, ու երկուսից մեկը հենց Սպարտակն էր... Մարտի թեժ պահին նրան վերջին անգամ տեսա գոռալով առաջ նետվելիս... Ամեն ինչ խառնվել էր իրար.

հող, արյուն, երկաթ... Այնուամենայնիվ, հարկ եղավ մի կարճ պահով նահանջել: Երբ հետո վերագրավեցինք դիրքերն ու փնտրեցինք տղաներին՝ Սպարտակին ու Գառնիկին չգտանք ոչ խրամատում, ոչ դիմացի տարածքում: Չկային՝ ոչ կենդանի, ոչ մեռած...»:

Երբ Արկադին մտավ հուշասրահը եւ կանգնեց տղաների նկարների դիմաց, ես նրա հայացքում այնպիսի ափսոսանք տեսա, որ թվաց, թե ցավիցս մաս պակասեց... Մեր ցավն, այո, Արկադի Բուդաղյանի նմանները հասկանում են: Հասկանում են, բայց ինչո՞վ կարող են օգնել՝ երբ... անգամ օգնության լծակ ունեցողները չեն կարողանում օգնել՝ կասեք դուք, ու չեք սխալվի: Չեք սխալվի մասնակիորեն, որովհետեւ անհայտ կորած տղաներին հիշելն ու ափսոսալն էլ է օգնություն՝ բարոյական օգնություն, բարոյական մխիթարանք:



***Սպարտակ Գրիգորյանի  
մարտական ընկեր  
Արտեկ Մադաքեյանը***

Օրերս մեզ մոտ՝ ԱԿԱՅՍ գրասենյակ եկավ Արտեկ Մադաքեյանը: Արցախյան գոյապայքարի տարիներին շատ է առնչվել Սպարտակիս հետ, մտերիմ ընկերներ էին դարձել: Ակտիվ մասնակցություն ունեցան Շարժմանն էլ, Ազատամարտին էլ: Մտավ հուշաթանգարան, նայեց տղաների «դեմքերին», հետո հոգոց հանելով մի պատմություն հիշեց: «Մի անգամ, դեռ Քոլատակում, երբ ուղղաթիռով բերված զենքերը հանել-դասավորելով էինք զբաղված, Սպարտակն ու Գարիկ Աղասյանն ասացին, եր-

կուսն էլ արդեն նշանված էին, որ իրենց հարսնացուներին բետեերով են բերելու... Գարիկն այդ կարգի մարտական մեքենա էր վարում: Հիմա երկուսն էլ մեզ հետ չեն, Գարիկը գոհվեց, Սպարտակն էլ անհայտ կորած՝ ո՛վ գիտե որտեղ է, ինչ վիճակում: Եղածի հետ հաշտվելը հիմա էլ է դժվար...»: Նրա աչքերում արցունքն իր համար արդեն տեղ էր անում, եւ դա կանխելու համար շտապեցի տղային ասել՝ փառք Աստծո, որ մեր տված զոհերն ու կրած չարչարանքներն իզուր չեն եղել, Արտեկ ջան, թող ապրողներիդ կյանքը երկար լինի, ովքեր էլ որ այսօր մեր կողքին չեն՝ այդպես հիշեք, չմոռանաք: Դա միսիթարանք է մեզ համար: Ես այդ մասին էլի եմ ասել, իմ նոր գրքում էլ եմ նշում, որն առաջիկայում լույս պետք է տեսնի: Հրածեշտի պահին տղայիս ընկերը ցանկություն հայտնեց ինչ-որ բանով օգտակար լինել մեր գործերին ու հիշելով գրքի մասին՝ հարցրեց. «Իսկ եթե օգնեմ Ձեր ասած գրքի տպարանային ծախսերի ֆինանսավորմանը...»: Ճիշտն ասած՝ դա լսելուց շատ ուրախացա, որովհետեւ գիրքը համարյա պատրաստ էր, բայց այդ հարցը մնում էր բաց... Նա դարձավ հովանավորը սույն գրքի, ինչի համար իմ խորհի՛ն-խորին երախտագիտությունն եմ հայտնում:

Ցավից ու տառապանքց, հույսից ու հավատից հյուսված իմ այս «կենսագրապատումը» կարծես մոտենում է ավարտին, բայց՝ ոչ այն պատճառով, որ այլեւս ասելիք ու գրելիք չունեմ, այլ՝ որ շատ ու շատ դրվագներ շարադրված են նախորդ գրքերում, «փաստագրված»՝ անհայտ կորածներին նվիրված հուշաթանգարանում... Դրանք կրկնել չեմ ուզում: Մենք չգիտենք լոկ մի հարցի պատասխան՝ մինչեւ ե՞րբ պետք է սպասենք: Թեեւ...-կարծես այնքան էլ ճիշտ չասացի. պատասխանը կա՝ այնքան՝ քանի դեռ կենդանի կլինենք: Ճիշտ այդքան էլ

կշարունակենք տառապել, մեր տղաներին երազում տեսնելուց միամտորեն ուրախանալ եվ ցնցվել՝ հերթական իրարամերժ լուրերից... Բոլոր այդ դեպքերում մեզնից անբաժան են լինելու հույսն ու հավատը: Այնպես որ, եթե ֆիզիկապես գոյություն ունեմ, պետք է պայքարեմ արդարության, անհայտ կորած մեր տղաների ճակատագրի համար: Պիտի պայքարեմ հասարակական աղետների՝ պատերազմների, այլատեսակ բռնությունների դեմ: Պատրաստ եմ բոքիկ ոտքերով շրջել մեր բոլոր վանքերն ու եկեղեցիները, սրբատեղիները, բարձրանալ նրանց զանգակատները, քաշել զանգերի լեզվակները եւ ի լուր աշխարհի պահանջել՝ **վերադարձրե՛ք մեր զավակներին...**

Ով կարող է՝ թող օգնի մեզ: Ինչպես եւ ինչով կարող է: Գոնե բարի լուրի տեսքով... Ով չի ուզում կամ չի կարող՝ թող գոնե չսասանի մեր հավատը, չվիրավորի, պայքարի մեր ընտրած ուղուն չխոչընդոտի՛...

Արդար ու բարեգութ եղեք, մարդիկ, անսացեք մեր աղերսանքին:

Այդ ժամանակ գուցե մեր աղոթքներն էլ կհասնեն Աստծուն...

Ասել՝ «պատումս մոտենում է ավարտին»՝ չի նշանակում, թե հասել եմ գրիչս ցած դնելու պահ ու սահմանին: Դեռ ոչ: Հուշերիս կծիկը ետ տալուց նոր այնպիսի՝ հանգույցների եմ հանդիպում, որ զարմանում էլ եմ, թե ինչպես է, որ այսքան «ճանապարհ» եմ անցել՝ դրանց մասին «մոռացած»... Հառնում են մոտիկ անցյալի դեպքերը՝ ներհյուսվելու հին ու նոր մտքերիս...

Չեմ հիշում, թե ով է ասել՝ «պատերազմը կնոջ գործ չէ», բայց... լա՛վ է ասել: Պատերազմս, այո, ոչ միայն կնոջ տեղը չէ, այլեւ...դե, չգիտեմ, գուցե տղամարդիկ

ճակատագրականորեն ինչ-որ կերպ հաշտ են աշխարհում պատերազմներ լինելու /քարե դարից սկսած մինչև այժմ/ «անխուսափելիության» մտքի հետ, իսկ մենք՝ կանայքս, մայրե՛րս՝ ո՛չ եւ հազա՛ր անգամ ոչ: Ինչ-որ իմաստ ունի, չէ՞, այն հանգամանքը, որ հնուց անտի բանակ էին զորակոչում միայն տղամարդկանց: Յիշեցի՛... հիմա հիշեցի՛ որտեղից է ծանոթ «պատերազմը կնոջ գործ չէ» արտահայտությունը. լրագրող Սվետլանա Ալեքսիեւիչի գրքից, որը դեռ սովետի օրոք եմ կարդացել: Կանանց մասին էր՝ Յայրենական մեծ պատերազմում:

Ինչու՞ հիշեցի այս մասին: Որպեսզի ասեմ, որ պատերազմը նաեւ, եւ հատկապես, միամորիկ /մեր բարբառով «մադար» ենք ասում/ տղաների տեղը չէ: Երեւի դեռ շատերն են հիշում. Խորհրդային Միությունում այդպիսիներին նույնիսկ Մեծ հայրենականի ժամանակ չեն զորակոչել ռազմաճակատ: Իսկ մեր անհայտ կորած 239 ազատամարտիկներից 38-ը ընտանիքի միակ երեխան՝ կամ էլ ծնողների միակ արու զավակն էին... Տեր Աստված, ո՛չ՛ ե՛ն: Սպարտակս էլ: Չեմ կշտամբում, թե ինչու նրան կամ մյուսներին չազատեցին կրակի առաջին գիծ տանելուց. շատ-շատերի պես նրանք էլ էին պայքարն սկսել կամավորական ջոկատներում, ու ետ քաշել չէր էլ լինի, համ էլ՝ այս մեկը չգնար, այն մեկը չգնար... բա մեր մի բուռ հողհայրենին ո՞վ պիտի պաշտպաներ ագրեսորից: Չէ որ զոհվածների շարքերում էլ քիչ չէին մադարները... Շուշին վերցնելու վրա որ Օսկոլկան տղայիս ասել է՝ ա լա կոտ, դու մադար ես, ձեր տան ծուխը դո՛ւ պիտի վեր հանես, անց կաց գնա տուն, սա քո տեղը չէ... որդիս լսե՛լ է նրան: Չի լսել: Այդպես էլ՝ երեւի բոլորը: Անկախ իմ տղայի հետ պատահածից՝ հիմա երբ հիշում եմ այդ դեպքի մասին, սրտումս երախտագիտության զգացումն է ալիք տալիս երդվյալ հայրենասեր, երջանկահիշատակ Բեկո-

րի հանդեպ՝ իր շուրթերից նման խոսք հնչեցնելու համար: Հիշում եմ, երբ որդիս մեզ պատմեց այդ մասին, խստաշունչ հրամանատարի մեջ մարդուն այդ անսպասելի եզրով հայտնագործելն իմ մայրական սրտին թեթեւություն բերեց, թեեւ տագնապն առ որդուս ճակատագիրն ուղեկցում էր ինձ:

Հիմա էլ ուրիշ դեպք պատմեմ՝ մարդ արարածին մեկ այլ կտրվածքով ներկայացնելու նպատակով: Որոնոդական աշխատանքների բերումով Հյուսիսային Կովկաս էի հասել՝ Պյատիգորսկ, Գեորգիեսկ...Այս վերջինում էլ հանդիպեցի մի ստեփանակերտցու, որը պատերազմն սկսվելուց երեք չափահաս տղաներին վերցրել...բառից չեմ խուսափի՝ փախել է: Երբ ինձ տեսավ, առաջին պահ ուրախացավ, ապա, թե ինչ մտածելով, շփոթվեց, կարելի է ասել՝ նույնիսկ այլայլվեց, եւ դա սքոդելու համար էր, թե ինչ՝ հարցրեց Սպարտակիս մասին: Իմ սիրելի սանն, ասաց, ինչպե՞ս է, լա՞վ է /մինչեւ պատերազմը նա տեխնիկումում դասավանդել է տղայիս, ետընթացին պատահածի մասին էլ գաղափար չուներ/: Պատմեցի՝ ուղղակի փլվեց աթոռին, ձեռքը զարկեց ծնկանը, կախեց գլուխը: Երկար ժամանակ չէր կարողանում խոսել: Եվ ի՞նչ ասեր հայրենյաց պաշտպանությունից երեք հասուն որդիներին հեռու ափ փախցրածը՝ պատերազմի դաշտում անհայտ կորած միակ որդու մորը: Չէր կարողանում խոսել, որովհետեւ խիղճն արթնացել ներսում՝ նեղում էր: Բայց հետո հավաքեց իրեն ու իրար ետեւից մի քանի անգամ մրմնջաց՝ ափսո՛ւ, շա՛տ ափսոս...Հիմա, երբ հիշեցի այդ պահը, որքան էլ տարօրինակ թվա, հասկացա, որ հոգուս խորքում նրան շատ չեմ մեղադրում: Չեմ արդարացնում՝ բայց եւ չեմ մեղադրում, այո: Որպես երկրի քաղաքացի՝ ոչ, բայց որպես ծնող ես նրան հասկանում եմ... Ուզում եմ լիովին անկեղծ լինել ընթերցողիս առջեւ. մի՛թե ինքս



ինձ այսօր երջանիկ չէի զգա, եթե այն ժամանակ **կարողացած լինեի** որդուս հեռացնել վտանգից: Հիմա նա՝ իր երեխաներով, ես էլ՝ նրա երեխա՝ իմ թոռներով շրջապատված կլինեի, ոչ թե որդուս բաժին ընկած ճակատագրի պատճառով ժամանակից շուտ ծերացած, առողջությունն ավերված ամուսնուս հետ՝ չորս պատի արանքում մենակ, աչքներս թողած Անհայտության՝ անուն չունեցող ճամփաներին:

Ահա այդպիսի դաժան ճշմարտություն:

Իմ առջեւ նստած էր եսասեր մի քաղաքացի, բայց եւ՝ սիրող հայր, որն անկեղծորեն ցավում էր ուրիշի զավակի կորստյան համար /դրանում չկասկածեցի, գիտեմ՝ շատ էր սիրում որդուս/: Ու ես նրան ներեցի: Ներեցի, բայց նաեւ աչքի մեջ նայելով ասացի՝ հայրենիքն իմ Սպարտակի նման տղաներով է կանգուն, այն հայրենիքը, որը ձեզ համար երազի եք վերածել... Այն ժամանակ չէի էլ պատկերացնում, թե մարգարեության պես ճիշտ պիտի լինի նկատումս. նա օտար հեռվում էլ մահացավ... Տե՛րն իր հետ:

«Տերն իր հետ» եմ ասում, բայց աչքիս պատկերանում է մեկ ուրիշ հայր /իմս մի կողմ դնեմ՝ հիմա էլ ուրիշի ցավից խոսեմ/: Այդ մեկ ուրիշի՝ երեխայի պես հոնգուր-հոնգուր լացի ձայնն եմ լսում հեռախոսագծում. « Սա ոչ Մամիկոնի, ոչ էլ մեզ համար ապրել չէ՛, Վերա քույրիկ, ավելի լավ չէ՞ր...»: Չէ, նրա վերջին բառերը չեմ կրկնի, բայց փակագծերը կբացեմ: Մամիկոնը նրա տղան է: Հայաստանից Ստյոպա /Ստեփան/ անունով մի մարդու տղան, որը նույնպես միլիցիայի աշխատող էր եւ մարտի ժամանակ անհայտ կորել էր նույն տարածքում, որտեղ որ՝ մեր տղաները: Հորն ասել էին՝ գոհվել է... Բայց քանի որ մարմինը չէր գտնվել, տարաբախտ հայրը նրան փնտրում էր ռազմական գործողության ողջ տարածքով մեկ: Մենք

միասին էինք «սանրում» տարածքը, եվ, օ՛, հրաշք՝ դիակի փոխարեն նա գտավ կենդանի որդուն: Կենդանի՝ իսկ թե ի՞նչ վիճակում՝ լեզուս չի գորում ասել, բայց դե պիտի՛ ասեմ, որպեսզի ընթերցողի համար հասկանալի դառնա հոր կիսատ խոսքի իմաստը. տղան զրկված էր գրեթե զույգ ձեռ ու ոտքից եւ աչքերից... Ինձ մինչեւ հոգուս խորքը ցնցեց տարիներ անց նրա ասածը՝ «ավելի լավ չէ՞ր...»: Պատերազմի դեմքն, այո, կանացի չէ, պատերազմը տղամարդուն էլ կարող է ճգմել՝ ինչպես Ստյոպային, այն աստիճան, որ ետընթացի ապրելուց համարյա գերադասի նրա մահը: Ըստ երեւույթին, պատերազմում Աստված էլ է անզորանում. փորձ է արել որդուն հորը վերադարձնել՝ ու «չի վերադարձրել».  
«ավելի լավ չէ՞ր»-ը իմ ունկերում նռնակի պես է պայթում, բայց ես հասկանում եմ Ստյոպային: Հասկանում եմ, որովհետեւ իմ շուրթերից էլ են պոկվել դրանք, երբ մի անգամ հիշել եմ որդուս մանկության հետ կապված՝ հարազատներիս ու բարեկամներիս հայտնի դեպքը: Դա Սպարտակի՝ տառացիորեն կյանքի արշալույսին էր՝ ծննդյան 40-օրյակին... Նշելու համար մեր տուն եկան բոլոր մտերիմները: Մայրս նոր տեղաշոր էր բերել, ուրախության ու աղմուկի մեջ բարձերն անփույթ նետել էր մահճակալին, դուրս եկել, իսկ մահճակալի վրա... որդուս բարուրն էր: Մթության մեջ չէր նկատել... Ես էլ էի դրսում, եւ հանկարծ վատ զգացի ինձ: Սիրտս դուրս թռչել էր ուզում, աչքերս մթնեցին, տազնապից սկսեցի հեւալ: Ինձնից անկախ՝ երեխան միտս ընկավ, վազեցի ննջարան: Հսկա բարձի տակ բարուր չէր երեւում... Ետ քաշեցի բարձն՝ ի՞նչ տեսնեմ. երեխան կապտած, փրփուրը բերնին՝ շնչահեղձ: Ճչացի՝ եկան երկուսիս էլ տիրություն արեցին, փրկեցին: Եվ ահա վերջերս, երբ կեսգիշերին արթնացած եւ այլեւս անքնության ստրուկը դարձած՝ **կյանքիս անսպարտակ**

**16 տարվա** տառապանքի գույներն ու երանգներն էի հաշվում, մտածեցի՝ թե որ այսպես էր լինելու՝ ավելի լավ չէ՞ր նրան խանձարուրների մեջ կորցնելի, քան պահած-պաշտած, տղամարդ դարձրած՝ ծնող լինելու երջանկությանը չհասցրած... Չգիտեմ, ընթերցող, հասկանում ես ցավս, թե՞ ոչ: Եվ՝ գիտե՞ս արդյոք, որ մայրը կարող է ուրախանալ իր որդու... դիակով էլ: Ոչ, չեմ թոցրել խելքս, տեսածս բանն եմ ասում: Տեսել եմ, թե իմ համագյուղացի, շատ հարգված ուսուցչուհի Էմմա Վերոյանն ինչպես է ոտաբոբիկ մատաղ բաժանում թաղեթաղ՝ Աստծուն աղաչելով իրեն վերադարձնել որդու՝ քաջ հրամանատար Արմենի դիակը. զինվորների օրապահիկը դիրք տանելիս վարարած գետը քշել էր տղային, տասն օր էր՝ չէր գտնվում մարմինը... Ի դեպ, նրա մատաղը լսելի դարձավ Տիրոջը. նույն երեկոյան իսկ զոհին գտան, տուն բերին: Կարծում եք՝ ես ինքս էլ տառապալից չե՞մ երագի/եթե, չարասցե Աստված, որդիս կենդանի չլինի/ ետ ստանալ աճյունը: Եվ այսպիսին է, այո, պատերազմի դեմքը, պատերազմ՝ որ չի լքում մեզ եւ շարունակում է ավերել մեր հոգին: Կարծեմ արդեն կրկնում եմ, բայց ինչ փուլթ՝ ոտաբոբիկ կշրջելի Արցախի բոլոր սրբավայրերը, միայն թե, լավ թե վատ, լուր ստանամ որդուս մասին...

Ես շատ բարձր եմ գնահատում մեր անհայտ կորած տղաներին անգամ մեկ խոսքով, մեկ ժեստով, էլ չասեմ՝ գործով, հիշողներին: Պատրաստ եմ նրանց ոտքի տակ փռել երեսս, ովքեր ըմբռնում եւ ընդունում են մեր ոչ միայն ցավը, այլեւ՝ ամենից առաջ հույսն ու սպասումը: Այդ մե՛նք ենք ծերանում, մարդիկ, իսկ մեր վիշտը չի՛ ծերանում... Ծերանալ չունի եւ հույսը: Ռուս հայտնի բանաստեղծի ասած՝ «Հույսը՝ վշտերի քույրն հավատարիմ»:  
**Մեր տղաները, պատերազմին մասնակցած մեր բոլոր տղաները. Ե՛ւ զոհվածները, Ե՛ւ մարտում անհայտ կո-**

րածները, եւ նրանք, ում բախտն ավելին է ժպտացել /թող երկար՝ապրեն/, պարզապէս կատարել են Մեծն Նժդեհի պատվիրանները, որոնցից մի քանիսն ավելորդ չեմ համարում թարմացնել իմ ու ձեր հիշողության մեջ.

**«Մի ժողովուրդ, որի որդիները հավասար չեն օրենքի ու մահվան առջեւ՝ հաղթական հայրենիք չի ունենա»:**  
/Յամաձայն չե՞ք, որ սա ասես ասված լինի հատուկ իմ «գեորգիեւսկյան» ծանոթի համար/:

**«Յոգեբանորեն անհայրենիք է նա, ով պատրաստ չէ ամեն վայրկյան մեռնել հայրենիքի համար»:**

**«Յայ մարդ, կասկածելի է հայրենասիրությունդ, եթե գոյությանդ իմաստն ու դրոշակը Յայրենիքդ չէ»:**

**«Յայաստա՛ն, նա, ով վտանգի ժամանակ քեզ համար մեռնել չիմացավ, եւ վաղը չպիտի ուզենա մեռնել՝ քո գավակը չէ, հայ չէ:**

**«Բավական չէ իր ազգի գավակը լինել, պետք է նաեւ նրա հրաշունչ զինվորը լինել»:**

Մեզ մոտ՝ ԱԿԱՅՄ հուշաթանգարան են այցելում շատերը. եւ երկրից, եւ արտերկրից: Յաճախ են լինում աշակերտներ, զինծառայողներ՝ Պաշտպանության բանակի սպաներ ու զինվորներ: Նրանցից շատերը ոչ միայն գրառումներ են կատարում Յուշամատյանում, այլեւ գրում են ամբողջական շարադրություններ՝ նվիրում թանգարանին: Մենք դրանք աչքի լույսի պես ենք պահում, եւ մի քանիսը կուզենայի ներկայացնել ընթերցողին: Ահա թե ինչ մտքեր է արծարծել՝

*թիվ 47455 գորամասի 4-րդ հրետանային դիվիզիոնի դէկավարման դասակի կապի ջոկի հրամանատար, սերժանտ Դավիթ Չոհրաբյանը.*

**Ես քեզ սիրում եմ, հայրենիք:**

Յայրենիք , անունդ տալիս ակամա լարվում եմ,

Ուզում եմ մատաղվել հողիդ,  
Ոսոխներիդ դեմ հար ընդվզելով՝ ես մաքառում եմ,  
Թիկունքիդ հենվում, անմահանում եմ:

Հայրենի՛ք...Լեռների գոգում ծվարած փոքրիկ ու գողտրիկ լեռնաշխարհ՝ փոքրիկ այնքան, որ կարող ես հայացքով ընդգրկել ողջ տարածքը մի ակնթարթում, գողտրիկ՝ որ հայացքդ մնում է դրանց սելեռված, հիացած ու վեհացած՝ զարմանահրաշ այդ բնօրրանի դեմ հանդիման, արարչի ստեղծագործ էություն անմնացորդ ու շռայլ դրսեւորումներով սքանչացած ու վերացած:

Հայրենիքը լոկ բառ չէ՝ ավանդված կամ ընծայված այս կամ այն մարդու կողմից: Այն մեր մանկությունն է՝ հրետակոծված ու ռմբակոծված հուշերով, խեղված համերկրացիներով, հուշ-նկար դարձած հարազատներով ու բարեկամներով: Այսօր էլ կան վայրեր, որոնց կողքով անցնելիս ակամա մտորում ես ինքդ քեզ.«Այստեղով անցել է թուրքը»: Եվ ոչ միայն մտորում, այլև տառապում ու ընդվզում ես այն զազրելի երեւույթի դեմ, որ կոչվում է թուրքի խառնվածք...

Հնամենի հայ ժողովրդի դարավոր երթին ուղեկցող վայրենաբարո թշնամին կարծես նպատակ ուներ ազգին հայոց հավերժացնել հերոսական արարքներով, ստիպել մեզ, որ հարատեւենք՝ վերջին պահին մեր ուժերն ի մի բերելով, որ բյուրեղանանք՝ աստղեր պեղելով, հավատամք դառնանք՝ նարեկյան տիեզերական խիղճն աշխարհին պարզելով, գոյի քառուղիներում խաչված մեր քաջորդիներով ու նրանց մասին սերնդեսերունդ պատմվող ասք- առասպելներով:

Հայրենիքը մեր պատանեկությունն է՝ դպրոցական տարիների մեր անմեղ չարաճճիություններով, առաջին ու վերջին զանգերով, իմացության աստիճաններով անցնող տքնանքով, մեր ուսուցիչների սթափ հայացքների՝

սխալ չհանդուրժող, վսեմին տանող ուղղորդումներով:

Հայրենիքը հայրս է, մայրս, եղբայրս, քույրս՝ Արցախյան գոյամարտի ընթացքում ճկված, տառապած, բայց այսօր իր հողի վրա հաստատ քայլող, նորից արարող, կրկին մաքառող հայորդին:

Այն հողն է, որի յուրաքանչյուր հաշմված քար ու հոշտված ծառ բողոքի ճիչն է, օգնության կանչը՝ ուղղված քաղաքակիրթ աշխարհին, նրա զգոնությանը, նրա խղճին:

Այն փոքրիկն է, որ քայլում է անթացուկաբար ու ժպտում աշխարհին՝ մարմնի ցավը հայացքի ծալքերում, **այն մոր սպասումը, որի անհայտ կորած ազատամարտիկ որդին՝ ճարահատ զենքի ուժին դիմած արցախցին, անհուն կարոտ է ու կանթեղ հույսի, ցավ է ու մորմոք սրտի...**

Մեր անեղծ Գանձասարն ու Ամարասն է, մեր Քիրսն ու Մռովը, Շահումյանի շրջանն ու երկրորդ աշխարհամարտին երկու մարշալներ տված վեհապանծ, բայց հրոսակին ռազմագերի Չարդախլուն:

Հայրենիքն իմ գիտակցությունն է ու միտքն է, ինձ սթափության կոչող գոյատևման պատմությունն ու Գարեգին Նժդեհի ոգին, Շուշիի ազատագրումն ու Արցախի Հանրապետության հռչակումը:

Իմ հաղթանակն ապահովեց մեր ամենազոր արքայականը՝ մաշտոցյան այբուբենը, որ ես ամուր կանգնեմ հողիս, բարձր պահեմ դրոշս եռագույն, հավատս՝ աննկուն, պատիվս՝ անարատ:

Ինձ հետ է Ավոյի ոգեղեն խոսքը,- մենք իրավունք չունենք պարտվելու, Դրոյի անպարտ հավատը, Անդրանիկի մաքառման տառապանքը, Վազգեն Սարգսյանի, Արթուր Մկրտչյանի, Լեոնիդ Ազգալոյանի... կորստյան կսկիծը, իրենց մահը անմահություն դարձրած տղաների կամքը գորեղ:

**Այդ ամենն իրավունք չունենք չափանդելու եկող սե-**

**րունդներին, չպատգամելու նրանց՝ գուրգուրանքով պահելու, փայփայելու նշխարի չափ փոքր, մասունքի պես սուրբ մեր հողը, մեր հայրենին, մեր օրրանը:**

Իմ հայրենիք, ես պաշտում եմ քեզ: Իմ բոլոր՝ տասնիներ գարունները ծլարձակել են քո գրկում, իմ ամբողջ էութունը քեզնով է պարուրված, քեզնով է շնչում, դու իմ լեռնաշխարհ, մեծ աշխարհի մեջ՝ դու իմ շեն Արցախ:

Նայում եմ տիեզերքի չափ ծավալվող հոգուդ ու զարմանում՝ ինչքա՞ն խորհուրդներ կան այնտեղ, որքա՞ն չպեղված պատմության հակինթ-բեկորներ:

Ես քո ծվատված ու բզկտված մարմնի անբեկ մասնիկն ու հյուլեն եմ, հայրենիք, պատրաստ հանուն գավակներիդ սիրո, խայտացող մանուկներիդ բերկրանքի՝ զոհասեղան բարձրանալ, քո տվածը քեզ վերադարձնել՝ լիուլի հատուցելով:

Միայն թե քարերդ ապրեն, կանաչ մնան ճամփաները քո, չխոժոռվեն սարերդ հպարտ: Միայն թե բարբարոս ու հրոսակ խաժամուժը չկոխկրտի երեսը քո, չաղարտի պատիվը քո, չեղծանի անունը քո: Միայն թե գալիքին ուղղված մարտահրավեր- դրոշդ ծածանվի հաղթական, փողփողա հայերեն.

Դարերդ՝ առինքնող հիացում.  
Ցավերդ՝ անամոք մի մորմոք,  
Թռիչքդ՝ սիգապանծ վեհացում,  
Եռքդ՝ հարատեւ, մշտաբորբ,  
Իմ լուսաշող Արցախ,  
Ես կրողն եմ քո ցավի,  
Ես ընձյուղն եմ քո ճյուղի  
Ու գավակը մայր հողի...

Թիվ 36534 Ձ/Մ 5-րդ ՀԳՄ-ի 13-րդ ՀՎ-ի 2-րդ ՀԴ-ի 3-րդ ՀԶ-ի հրամանատար, կրտսեր սերժանտ Ժորա Հովհաննիսյանն էլ մի... փոքրիկ ու գողտրիկ նովել ասեմ՝ թե

մանրապատում է գրել.

**«Կանաչ լանջն ի վեր, ձեռք-ձեռքի տված, բարձրանում էին պապն ու թոռը: Նեղ արահետի երկու կողմերում տարածվել էին ցորենի հուռթի արտեր: Կանաչի մեջ ժպտում էին կարմիր կակաչները:**

**«Սրանցից որի՞ մեջ է զավակիս արյունը...»,- մտածեց պապը: Նա քայլում էր մտահոգ, մինչդեռ թոռն արդեն առաջ էր անցել եւ թռչկոտելով մոտենում էր մեկ այս, մեկն այն կակաչին: Հասնում էր նրանց, պոկում, փունջ կազմում: Դեռ նոր բացված մեկի մոտ, սակայն, նա երկար կանգնեց, պտտվեց շուրջը, ապա փոքրիկ թաթիկներով զգույշ այնպես բարձրացրեց ծաղկի թեք ընկած գլխիկը, որ արեւի շողերն ընկնեն ճիշտ նրա սեւաթույր սրտի մեջ... Այդ խաղը հրաշալի թվաց փոքրիկին, բայց նա չնկատեց, թե ինչպես կակաչի բաժակից երկու կաթիլ մարգարտյա ցող կաթեց ցած՝ ներծծվելով հողի մեջ: Փոխարենը դա չվրիպեց քիչ հեռվից դիտող պապի աչքից... Ծերունին ինքն իրեն մրմնջաց. « Ահա՛ թե որի մեջ է կռվում անհայտ կորած վիրավոր որդուս արյունը... Երեխան իր սրտով գտավ նրան»:**

Ես իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում Ստեփանակերտի վարչակազմի կրթության բաժնի վարիչ Կարլեն Մարգարյանին՝ Արցախյան պատերազմում անհայտ կորած ազատամարտիկների հիշատակի թեմայով համաքաղաքային համադպրոցական օրինակելի շարադրության մրցույթի գաղափարը պաշտպանելու եւ նրան ընթացք տալու համար: Ինչպես նաեւ բոլոր նրանց, ովքեր նպաստել են արժանահիշատակ միջոցառման կայացմանը: Մենք՝ անհայտ կորած տղաների հարազատներս, ուղղակի ցնցվել ենք մրցույթում հաղթած աշակերտների շարադրած մտքերով, որոնք ոչնչով չեն զիջում հասուն մարդու մտածողությանը: Մրցույթին մասնակցած բոլոր-բոլորին՝ մեր խոնարհ ողջույնն ու երախտագիտությունը: Ահավասիկ՝ **«Անունդ հայտնի՝ ճակատագիրդ անհայտ»** թեմայով **առաջին, երկրորդ ու երրորդ** տեղն զբաղեցրած շարադրու-



թյուններն ընթերցող, կարդա եւ կհամաձայնվես ինձ հետ՝ նրանց հեղինակներին, եւ, իհարկե, ուսուցիչներին, տվածս գնահատականի իսկության ու մեր երախտագիտության անկեղծության մեջ: Մենք մեզ պարտավորված ենք զգում երեխաների՝ այդչափ հարուստ հոգու եւ մտածողության առջեւ:



*Ստեփանակերտի  
Յովի. Թումանյանի ան-  
վան թիվ 9 հիմնական  
դպրոցի 7-րդ «բ» դա-  
սարանի աշակերտուհի  
Մանանա Ավանեսյան:*

### **Երրորդ տեղ՝ ա/**

Ճակատագրե՛ր, ճակատագրեր, ճա-  
կատագրեր...

Այնքան միմյանց նման եւ՝ տարբեր,  
նաեւ կրկնվող ճակատագրեր...

Գյուղը, որի մասին ուզում եմ պատ-  
մել, ինչպես ամպից պոկված մի ծվեն՝  
բազմած է Արցախ աշխարհի մի գե-  
ղատեսիլ վայրում եւ այցելուին հիաց-  
նում է իր գեղեցիկ բնությամբ, կար-  
կաչուն աղբյուրներով, բայց այն ունե-  
ցել է դառը պահեր...

...Մայր հայրենիքի օրհասական պահին զինվել են որ-  
դիները: Ինչպես արցախյան բոլոր գյուղերի դյուցազուն-  
ները, այնպես էլ Զարագուխ գյուղի դյուցազունները ոտ-  
քի ելան՝ հարազատ գյուղի մատույցները պաշտպանե-  
լու: Գյուղը գտնվում էր հենց սահմանագլխին եւ առաջի-  
նը թիրախվեց ոսոխին: Տղաները դիրքեր էին բռնել եւ  
աչալուրջ հսկում էին՝ ամեն բոպե պատրաստ հակա-  
հարված տալու:

Արդեն մի քանի օր էր՝ դիրքերում էին, եւ լուր չունեին  
ընտանիքներից, հարազատներից: Դե, ասեսք, նույն ան-  
հանգստությունը տիրում էր հարազատներին եւս: Օրը  
խաղաղ էր, երկինքն՝ անաղարտ, հեռվից լսվում էր բար-

ծունքում թեւածող արծվի կռիւնքը: Թվում էր՝ ամեն ինչ այդպէս էլ խաղաղ կավարտվի: Ձորում թափառում էր ամպը եւ կարծես երեկոյի հետ համատեղ ցանկանում հաստատել իր դիրքերը: Այդ օրը գյուղի մատուցները պաշտպանում էին Սամվելը, Արմենը, Կարոն եւ էլի ուրիշներ: Յուրաքանչյուրն զգում էր իր ուսերին դրված պատասխանատվությունը: Քնած չէր նաեւ թշնամին, արթուն սպասում էր հարմար պահի: Վերջապէս այն եկավ:

...Լուսադեմին թանձր մառախուղի պաստառը պատռվեց թշնամու արծակած արկից: Բոպէ անց արկերին միացավ փամփուշտների տարափը: Տղաները չհապաղեցին. յուրաքանչյուրը գիտեր անելիքը: Հրետանային արկակոծությունից հետո թշնամին առաջ կշարժվի... Եվ իրոք. հազիվ նշմարվող մառախուղի միջից երեւացին մինչեւ ատամները զինված թուրքերն՝ ասես անձրեւից հետո աճած սնկեր: Սամվելը, որ դիրքի ավագն էր, ասաց.

-Տղաներ, թեժ մարտ է լինելու, երանի՛ նրան, ով կենդանի կմնա եւ իմանա, թե ինչպէս ավարտվեց մարտը...

Կարոն ասաց.

-Սամվել, աստված հո նամարդ չէ, երեւի մեկս կմնա... կամ էլ ինչու մեկս, բոլորս էլ կմնանք եւ մարտից հետո գյուղում պատմենք մեր սիրան...

Կարոն դեռ խոսքը չավարտած՝ մոտակայքում պայթեց արկը: Երկաթի բեկորները, վառողի ծուխն ու բոցը խառնվել էին օդի մեջ: Վայրկյաններ անց Սամվելը ձայնեց, ցանկանում էր իմանալ՝ արկը վնաս չի՞ պատճառել որեւէ մեկին: Նրան արծագանքեցին տարբեր կողմերից՝ ամեն ինչ նորմալ է, բայց...բացակայում էր Կարոյի ձայնը:

Սամվելը նորից կանչեց, ավա՛ղ.....

Տեսարանը ցնցող էր. Կարոն փռվել էր երեսնիվայր, «հավերժացել»: Մարտը շարունակվում էր: Կրքերը բորբոքվել էին, ժամանակը կարծես կանգ էր առել: Տղաները խելագարի նման նետվեցին առաջ: Սամվելը գոռում էր՝ առա՛ջ, առաջ, հանուն Կարոյի...

Մարտի ժամանակ իմացյալ մահով նահատակվեցին շատերը: Օգնության հասած ուժերի ճնշման տակ հակառակորդը ետ շարտվեց: Կարճ դադարի ժամանակ տղաները շրջեցին դիրքերը՝ փնտրելով զոհվածներին ու վիրավորներին, սակայն Սամվելը չկար ոչ զոհվածների, ոչ էլ վիրավորների մեջ:

...Մայրը դողդոջուն ձայնով հարցրեց;

-Արմեն, բա Սամվելս ու՞ր է ...

Արմենը շփոթված էր, հավաքելով ուժերը՝ թաց աչքերով նայեց Սամվելի մորը՝ Փառանձեմին:

-Ի՞նչ... Սամվելս...

-Փառանձեմ մայրիկ, նա չկար ոչ ողջերի, ոչ զոհվածների, ոչ էլ վիրավորների թվում:

Մայրը սրտաճմլիկ հառաչեց՝ ձեռքերը կարկառելով առ Բարձրյալ.

- Ախր քսանհինգ տարեկան է, դեռ չամուսնացա՛ծ...

Յնարավոր չէ չափել որդեկորույս մայրերի վիշտը: Մորն ուրիշ բան չէր մտում, քան կրկնել նույն բառերը . «Գոնե մի շիրմաքար էլ դու ունենայիր, իմ կորած բալա»:

Մենք խոնարհվում ենք նման մայրերի առաջ. նրանք հայրենիքին նվիրել են քաջարի արծիվներ:

Ձեր հիշատակը, տղաներ, հավերժական է»:



### Երրորդ տեղ՝ բ/

«Թախծու՛մ է հոգիս՝  
Հիշելով նրանց,  
Նրանց՝ որ կյանքի  
Այս հորձանուտում  
Մնացին... անհայտ:

*ԼՂՀ մայրաքաղաքի թիվ  
12 հիմնական  
դպրոցի 9-րդ դասարանի  
Անուշ Եսայան*

Չինվո՛ր հայրենյաց, դու երդվե-  
ցիր լինել քաջարի, պաշտպան  
կանգնել Մայր հայրենիքին:

Ես ծնրադրում եմ քո առջեւ, նա-  
յում քո ժպտուն, հուսավառ աչքերին, ուր այնքա՛ն երա-  
զանքներ կան... Չիրականացած երազանքներ:

Քո խոսուն հայացքն ինձ պատմում է քո մասին: Ապրե-  
լու ծարավ կա քո աչքերում ու կյանքի կարոտ, հավատ՝  
ուղղված ապագային:

Նայում եմ աչքերիդ ու փորձում չտխրել:

Փորձում եմ ուրվագծել կյանքդ, եւ ամեն ինչ մնում  
է... կիսատ. կիսատ երազանքներ, իղձեր, կիսատ սեր, կի-  
սատ երջանկություն...

Դու ժպտերես ինձ ես նայում:

-Ոչինչ, կյանքը երջանկություն էլ կբերի,- ասում է հա-  
յացքդ:

Ու հավատդ փոխանցվում է ինձ: Նորովի եմ ընկալում  
կյանքը, նոր հայացքով նայում ապագային:

Եվ էլի քեզ եմ տեսնում: Քո պատկերն է ուրվագծվում  
իմ առջեւ, քո անկեղծ հոգին, քո հերոսացումը...

Դու ժպտերես առաջ ես պարզում ձեռքերդ, ասես ու-  
զում ես գրկիդ մեջ առնել աշխարհը, ուզում ես միա-  
խառնվել կյանքի հորձանքին, ուզում ես ...ապրել:

Քո մեջ այնքա՛ն ուժ ու տոկունություն եմ տեսնում, այն-  
քա՛ն առնականություն, որ թվում է՝ կարող ես հաղթել

Նույնիսկ ճակատագրին: Իսկ ճախատագիրդ...անհայտ է:  
Անհայտ է ուղիդ:

Եվ այդ անհայտության մեջ անհաշիվ սերեր ու իղձեր  
կան, սպասումներ ու կարոտ: Եվ կարոտն անափ է:

Կարոտը սպասումից է ծնվել: Սպասումը՝ հավատից:  
Իսկ հավատը միշտ էլ հրաշքներ է գործում:

Հավատա՛, աշխարհ, հավատա կյանքի հրաշքին, հա-  
վատա, քանզի այս հերոսների թողած ծիլերը կսևվեն  
Նույն ոգով: Նրանց հոգիներում արդեն ընծյուղվել են Նոր  
կյանքի ու հավատի շիվերը:

Հավատա, որ այլևս անհայտ ճակատագրեր չեն լինի»:

### Երկրորդ տեղ՝ ա/



*Ստեփանակերտի  
թիվ 4 դպրոցի  
7-րդ դասարանի  
աշակերտ  
Արման Ասրյան*

«Արցախյան գոյամարտն արդեն  
պատմություն է դառնում: Հաղթանակ  
կերտած տղաները Նույնպես պատմու-  
թյանն են, նրանք ծուլվել են տիեզերքի  
անսահմանությանը, որպեսզի մնան  
սերունդների շուրթերին:

Չնայած պատերազմն ավարտվեց,  
այն շարունակում է ապրել մարդկանց  
հոգիներում եւ հուշերում: Յուրաքանչ-  
յուր արցախցու սրտում այն մի խոր  
վերք է թողել, չսպիացող վերք: Արցախյան գոյամարտի  
հաղթական ավարտից հետո ամեն բնակավայրում կա-  
րելի է տեսնել զոհված ազատամարտիկների հիշատակը  
հավերժացնող հուշարձաններ:

Ցավոք, շատ արժանավոր հայորդիների ճակատագ-  
րեր առ այսօր շարունակում են մնալ անհայտ: Փառք ու  
պատիվ նրանց՝ ում կյանքը գուցե ընդհատվել է դաժան  
գերության մեջ, եւ համբերություն նրանց՝ ովքեր դեռ

կենդանի են:

Անհա՛յտ կորած զինվոր...

Դու պարզեւ ու շքանշան չստացար, քո մասին գովք չկապվեց...Քո մատաղ կյանքը դու տվեցիր հայության ինքնամաքմանն ու փրկությանը: Կա մի պարզ ճշմարտություն. այն, որ մարդ մահվանից հետո ապրում է այնքան ժամանակ՝ ինչքան նրան հիշում են: Եթե այդպես է, ուրեմն՝ դու հավերժ կապրես մեր սրտում, դու՝ ում անունը հայտնի է, ճակատագիրն՝ անհայտ: Գիտե՞ս, որ դու հուշարձան ել ունես՝ հուշարձան-խաչքար, որը խոսում է մեզ հետ, հիշեցնում քեզ բաժին ընկած եւ ընկնող կուտանքների ու տառապանքի մասին, այն մեզ՝ հայրենիքում ապրողներին սաեւ Սպասումի է կոչում:

Դառն է քո ճակատագիրը, անհայտ կորած ազատամարտիկ, բայց՝ հերոսական: Տասնամյակներ հետո գալիք սերունդները խոստովանելու են, որ դու հաղթահարել ես ազգին բաժին ընկած ամենադժվար բարձունքներից մեկը: Քո ճակատագիրը մահաշունչ է, բայց մարտական. դու ապրել ես, պայքարել, դիմացել-դիմակայել ու... հաղթել: Ես խոնարհվում եմ, անհայտ կորած մեր տղաներ, ձեր ու նաեւ ձեր մայրերի եւ մյուս հարազատների ծով համբերության առջեւ: Դժվար է տանել ընդհանրապես հարազատ մարդու կորուստը, եւ անհամեմատ դժվար՝ կորուստը որդու... Ցավոք, առանց կորստի պատերազմ չի լինում:

Ես՝ 11-ամյա դեռահասս, խոնարհվում եմ քո Հուշարձանի առջեւ, անհայտ կորած ազատամարտիկ, եւ ի լուր աշխարհի հայտարարում, որ ամենից լավ զինվորը հայ մարտիկն է, ամենալավ բանակը՝ Հայոց բանակը:



*Ստեփանակերտի  
Վ.Ջհանգիրյանի  
անվան թիվ 11 ավագ  
դպրոցի հումանիտար  
հոսքի  
10-1 դասարանի  
աշակերտուհի  
Մարիամ Մխիթարյան*

**Երկրորդ տեղ՝ բ/**

***Ա՛խ, իմ հայրենիք...  
Ես խոսքեր ունեմ քեզ համար  
պահված,  
Որ չի լսելու ոչ մեկն աշխարհում...  
Մոտիկ են նրանք, բայց նաեւ  
անհաս...***

**Պարույր Սեւակ**

Օ՛, ինչքան ուժ կա այս խոսքերի մեջ, ինչքան սեր ու նվիրում...

Ես համոզված եմ, որ հայրենիքին համար պահված խոսքեր շատ- շատ են եղել՝ չեն ասվել, ավա՛ր... Ես համոզված եմ, որ կյանքը հայրենիքի գոհասեղանինն դրած ամեն մի զինվոր կցանկանար հավատամքի, սիրո, նվիրվածության խոսքեր ասել նրան, բայց...

Բայց պատերազմը չթողեց: Պատերազմը կիսատ թողեց նրանց նվիրական երազները: Նրանց շուրթերը կմրմնջային.

Ես ոչինչ, ոչինչ քեզ տալ չեմ կարող,  
Ինչ էլ տամ՝ կրկին տվածդ եմ տալիս:  
Ես հավատն եմ քո,  
Քայլո՛ղ հավատը...  
...Ես մասն եմ կյանքիդ...

Այո, կասեին, շատ բան կասեին, բայց չհասցրին չհասցրին, որովհետեւ զբաղված էին մի այլ գործով, կարելու գործով՝ հայրենիքի ազատագրությամբ:

Քանի՛-քանի՛ հազար հայ արծիվներ են ընկել թշվառ թուրքի բորենաձեւ պահվածքի պատճառով: Քանի՛ հազար մարդ է նահատակվել... Քանի՛- քանիսի՛ անունն է

հայտնի, բայց ճակատագիրն՝ անհայտ:

Գրիչ եմ վերցրել ձեռքս ու փորձում եմ գրել քո մասին, Արցախի պատերազմի քուրայով անցած, բազում հաղթանակներ տարած, բայց, ավա՛ղ, անհայտ կորած ազատամարտիկ: Առյուծածին արցախցիների առյուծ որդիներ, որտե՞ղ եք հիմա: Գիտե՞ք, որ ազատագրվել է ձեր սիրելի Արցախը, գիտե՞ք, որ շարունակում են ղողանջել մեր եկեղեցիների անմար գանգերը, որ ամեն առավոտ հայ մանուկները դպրոց են շտապում...

Որտե՞ղ ես գտնվում, իմ բարեկամ, գուցե հզոր արծիվների սլացքին ես խառնվել, գուցե գեղասլաց աղավնիների ճերմակությանն ես ձուլվել, գուցե հաստաբուն կաղնիների շրշյունի՞ն ես միացել, գուցե ծեր Մասիսի ձյուններում ես հանգրվանել:

Բայց գիտե՞ք, որ մենք՝ ձեր պատանի հետևորդները, գիտենք, որ դուք՝ հայ զինվորներ, քաջաբար եք կռվել մեր հայրենիքի համար, ինչպես կռվել են Վարդանը Մամիկոնյան եւ Վազգենը Սարգսյան:

Մենք շարունակում ու շարունակելու ենք ձեր գործը ու...

Մենք ասում ենք.- կանք, կլինենք,

Աշխարհում ինչքան կա դեռ արեւ,

Ինչքան կա աշխատանք ու երգ,

Մկաններ- պողպատե, լարե:

Փոթորկվել էր Արցախ աշխահը: Սեւ ամպն էր չոքել Քիրսա սարին ու ծածկել կենարար արեւի լուսե շողերը: Բարբարոս թուրքը՝ ատամները սրած, գիշատիչ թաթն էր կամենում դնել իմ հայրենիքի պայծառ երեսին:

«Անկիրթ գազանը» դարձել էր «կրթյալ» ավագակ» եւ մահ էր սփռում շրջապատում: Հրետակոծվում էին մեր շեն բնակավայրերը: Կործանիչ ինքնաթիռներն էին ճեղքում մեր երկինքը:

Եվ դուք ոտքի ելաք՝ փրկելու հայրենիքը:



Գիտեիք, որ ձեզ շատ փորձանք է սպասում, որ փշոտ ու փշոտ է ճանապարհը, բայց, միեւնույն է՝ քայլեցիք այդ ճանապարհով: Քայլեցիք, քանզի վստահ էիք, որ այդ ճանապարհով են հասնում Արդարությանն ու Խաղաղությունը: Դուք չվախեցաք թշնամիներից եւ ասում էիք նրանց.

Մեր քրտիկները գուլալ, սրբազան-  
Կվառե խնդություն մի քուրա,  
Կկապե պայծառ ծիածան...

Օ՛, հայ զինվոր՝ որ հայտնի է անունդ, բայց ճակատագիրդ՝ անհայտ, միշտ հիշիր, որ մեր սերունդը քեզ չի մոռացել, հիշիր, որ չենք թողնի՝ թշնամին կրկին համարձակվի ոտք դնել այս հողի վրա, հիշիր, որ հիշում ենք անցյալը, հայ քաջերին՝ ապրում ներկայով, գենքը ձեռքներին՝ մտածում ապագայի մասին, ակնկալելով, որ մեր երիտասարդ հանրապետության անկախությունը կճանաչի արար աշխարհը, եւ արդարության ձայնը կլսվի ամենուր:

Անհայտ կորած իմ բարեկամ, քո ազատագրած հայրենիքում կապրի հայը եւ կշարունակի հյուսել իր պատմությունը: Չուր չեն անցել քո ջանքերը: Քո ապրած կյանքի շողերը լուսավորում են մեր ներկան, նրանց ցուքերը հասնում են մինչեւ ապագան:

Կոչ եմ անում բոլոր հայերին՝ համախմբվել, բռունցք դառնալ եւ թույլ չտալ, որ ոսոխն իր թաթը դնի այս սուրբ հողի վրա:

Կոչ եմ անում կոչն այս լսել, լսել ու հասկանալ՝ եւ հասկացածը մտապահել, մտապահածը՝ պահ տալ խաչքարին: Գրել խաչքարին եւ այն կանգնեցնել Արարատ սարի վրա, որպեսզի աշխարհի չորս ծայրից տեսնեն, ու տեսնողներն իմանան, որ հայը եղել է, կա ու պիտի լինի: Կլինեն հայ քաջորդիները, կլինեն նրանք, որոնց անունը

հայտնի է, ճակատագիրն՝ անհայտ: Մենք միշտ հիշելու ենք նրանց՝ որպես արժիվների, որպես կատաղի բորենիների հետ քշող անկոտրում հսկաների:

Մենք երբեք չենք մոռանա ձեզ, օ՛, հայ զինվորներ՝ սերված Յայկից Նահապետ, սովորած գիրը Մաշտոցի, Չաուշի գենքը բռնած, Նարեկի հավատը սրտում, հայտնի՝ անունով, անհայտ՝ ճակատագրով:

Հավատում եմ՝ կգա մի օր, երբ կլցվի քեզնով քո հայրենիքը: Կգաս հպարտ, խրոխտ, հաղթանակած ու տեր կկանգնես քո հինավուրց հայրենիքին...

### **Երկրորդ տեղ՝ ա.**



*Ստեփանակերտի  
Աշոտ Ղուլյանի անվան  
թիվ.2 հիմնական  
դպրոցի  
VI «բ» դասարանի  
աշակերտուհի  
Գայանե Հովհաննիսյան*

Ի՞նչ լավ է, որ մարդիկ հիշողություն ունեն, հիշատակի ու հարգանքի տուրք մատուցելու կարողություն:

Ես Չգիտեմ՝ ինչ է անհայտությունը, ինչու՞ են մարդիկ անհայտ կոչվում: Փոքր էի, չէի հասկանում: Հետո հասկացա... Ոչ միայն հասկացա, այլև փորձեցի մեկնաբանել յուրովի...

Անցյալ տարի էր: Դասարանով գնացել էինք Արցախի հերոս Բեկորի/Աշոտ Ղուլյան/ պուրակը՝ ծաղիկներ դնելու նրա հուշարձանին: Ետդարձի ճանապարհին այցելեցինք Արցախյան ազատամարտում զոհվածների եւ անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանները:

Մի անձանոթ զգացում ճնշեց սիրտս, երբ կանգնեցի անհայտ ճակատագիր ունեցող զինվորների լուսանկարների դիմաց: Հարցրի ինքս ինձ.« Ի՞նչ անեն սրանց մայրերը, որտե՞ղ գտնեն իրենց հոգեկան խաղաղությունը...»:

Թանգարանում մեզ պատմում էին նրանց մասին, բայց ես չէի լսում. իմ միտքն ու հոգին նրանց հետ էր՝ օտար հեռուներում...

Երբ դուրս էինք գալիս թանգարանից, ես կրկին շրջվեցի, նայեցի նրանց ու հասկացա, որ նրանցից յուրաքանչյուրը մայրական արցունքի մի կաթիլ է՝ քարացած այդ պատերին: Դրանք այն մայրերն են, որոնց հայացքը ուղղված է անհայտությանը, անորոշությանը:

Ա՛խ, մայրե՛ր, մայրե՛ր, ինչո՞վ սփոփել ձեր անափ վիշտը...

Եվ գտանք մխիթարող մի շող...

Կազմակերպեցինք համաքաղաքային միջոցառում՝ նվիրված մեր դպրոցի նախկին շրջանավարտներ Սպարտակ Գրիգորյանին եւ Անդրանիկ Սարգսյանին, որոնց ճակատագրերը եւս անհայտ են: Ներկա էին նրանց ծնողները, ԿԳ նախարարության եւ հեռուստատեսության աշխատակիցներ, պատվարժան հյուրեր: Դասղեկի ժամին կազմակերպված բաց դասը ցնցեց բոլորին. չէ՞ որ վերադարձել էին Սպարտակն ու Անդրանիկը... Եւ վերադարձնողը դասղեկ Անահիտ Մեսրոպյանն էր: Տպավորիչ միջոցառում, որ ծայրից ծայր լցված էր հայրենասիրական գաղափարներով, մարդկային վեհ դրսեւորումներով: Մենք մեր ելույթով փորձեցինք անհայտ կորած ազատամարտիկների մայրերին հոգեկան մի փոքրիկ թեթեւություն պարգեւել:

Իսկ կտավը, որի վրա պատկերված էին Սպարտակի եւ Անդրանիկի դիմանկարները, նվիրեցինք Սպարտակի մորը՝ Վերա Գրիգորյանին՝ հուշաթանգարանում պահպանելու համար:

Թող այս պայծառ գարնան զարթոնքի հետ տունդարձի ճամփան բռնեն բոլոր մայրերի որդիները: Թող նրանք վերադարձնեն իրենց աչքերի զվարթությունն ու հոգիներ-

րի խաղաղությունը:

Տուն եկեք, Արցախից խլված բալիկներ, տուն եկեք, ու թող տան բակը լցվի աշխույժով, եւ այգում առվակը կարկաչի անուշ...

Պատգամում եմ.

Քանի մայրդ կա,

Արի, անհայտ զինվար.

Վաղը գուցե ուշ կլինի,

Արի, մեր քաջ զինվոր...

### **Առաջին տեղ՝ ա**

Ապրում եմ Արցախ աշխարհում:

Մի չքնաղ լեռնաշխարհում, որտեղ հայ շինականը քարից հաց է քամել եւ հալալ քրտինքով հոգացել իր ապրուստը: Մի երկիր, որտեղ բարությունն է թագավորում եւ գողտրիկ բնությունը ժպտում է մարդկանց, իր մայրական գրկում տեղ տալիս նրանց:

Բայց մի սարսափելի օր սեւ ամպեր կուտակվեցին իմ լեռնաշխարհի կապույտում: Հայրենիքիս վրա իջել էր թշնամու արյունոտ թաթը: Իմ Արցախը հառաչում էր ոսոխի ճիրաններում: Այդ ծանր կացության մեջ ովքեր՝ եթե ոչ հայրենանվեր երիտասարդները պիտի պաշտպաներին հող-հայրենին: Երբ անհրաժեշտ է՝ եւ կյանքի գնով: Նրանք պիտի զոհեին ամենաթանկագինը՝ կյանքը, որ պեսզի մայր հայրենիքն ազատ շնչի: Եվ նրանք առանց երկմտելու դիմեցին այդ քայլին: Մեր քաջազուններին չէին կարող ետ պահել ոչ մայրական արցյունքները, ոչ ապրելու ծարավը: Նրանք երիտասարդ էին, շատերը՝ մոր միակ զավակը, շատերը՝ նոր ընտանիք կազմած, բայց բոլորն էլ ականջալուր հայրենիքի կանչին: Հայրենիքի փրկության շեփորը նրանց կանչում էր մարտի դաշտ՝ մայր հո-

դի վրա թափելու երակներում եռացող արյունը:

Քանի՛- քանի՛ երիտասարդներ են ընկել մարտի դաշտում՝ վերջին անգամ նայելով հայրենի մով երկնքին, շնչելով հայրենի լեռնաշխարհի գուլալ օդը: Նրանք իրենց կյանքի գնով փրկել են հազարավոր կյանքեր, մարտիրոսվել են, որ թուրք ազերին չպղծի իր օջախը, չլլկի իր երիտասարդ կնոջը, չմորթի իր նորածնին:

Ու նաեւ՝ քանի՛ - քանի երիտասարդների ճակատագիր է անհայտ...

Մայրերի աչքերում պաղել են արտասուքի դառը կաթիլները, սեւազգեստ են դարձել ջահել ու դեռատի կանայք: Նրանք չեն տրտնջում, լուռ կրում են իրենց խաչը՝ հավատալով, որ կվերադառնան տղաները, որ կերեւան-կգան...

Այդ ամենի համար մեղավոր է միայն պատերազմը., որի հասցրած վերքերը մինչեւ օրս չեն սպիացել: Անցնում են տարիները, տառապանքներով ու արցունքներով լի ամիսները՝ լուր չկա նրանցից: Մութ կասկածները կրծում են նրանց հարազատների՝ կարոտից ու սպասումից նեղված սրտերը:

Մի՞թե... Օ՛, ոչ, հազար անգամ ոչ:

Թող նրանք մոխրի տակ միշտ անշեջ պահեն կրակը հույսի: Հավատան, որ մի գեղեցիկ օր, երբ էլ որ լինի, գալու է պահը օրհնյալ: Լեռնացած կարոտը, հույսն ու հավատն է, որ սատարել են անհայտ կորածների ծնողներին, այրիներին ուժ տալիս՝ չերերալու... Նրանք քիչ չեն՝ հազար հոգի, ասել է թե՛ հազար մարած օջախ, հազար անավարտ գործ, հազար փշրված երազանք: Ես գիտեմ անհայտ կորած ազատամարտիկների շատ ծնողների, որոնց մազերին ձյուն է իջել, որոնք իրենց ոսկրացած ձեռքերով ու սմբած աչքերով օր ու գիշեր աղոթում են որդիների համար... Կարդացել եմ «Արաբո» ջոկատի տղաների մասին: Մարմինս պատեց սարսուռը, երբ իմացա, որ ջոկատի 86 անդամների ճա-

կատագիրը 1992թ. հունիսի 29-ից առ այսօր անհայտ է մնում: Եվ պատահական չէ, որ ԼՂՀ Ազգային ժողովի 1999թ. մայիսի 20-ի որոշմամբ հունիսի 29-ը հայտարարվել է Անհայտ կորած ազատամարտիկների հիշատակի օր: Չէ՞ որ նրանք իրենց պայծառ գլուխները կամովին են դրել մայր հողի փրկության քննասեղանին:

Ինչ արած, ցավոք, կյանքում ամեն ինչ չէ, որ կատարվում է մեր ցանկացածի պես: Մտածելն անգամ սոսկալի է, որ անհայտ կորած տղաները չունեն շիրմաքար, որ քարաշատ մեր երկիրը քար անգամ չի կարող դնել իր ազատամարտիկների վրա, որոնք իրենց գարուն հասակն են դրել հանուն հայրենիքի պաշտպանության:

Հիմա հույսներս դրել ենք Կարմիր խաչի վրա: Արդյո՞ք կենդանի են տղաները, Կարմիր խաչը հնարավորություններ կտա՞ նրանց փոխանակել:

Մենք գլուխ ենք խոնարհում անհայտ ճակատագիր ունեցող բոլոր ազատամարտիկների առաջ, այո, նրանք գիտակցաբար գնացին փորձությանը, գուցե եւ մահին, ընդհանաջ՝ թշնամուն ջախջախելու համար:

Հայ ժողովուրդը դարեդար կապրի, քանի որ ունի այսպիսի գավակներ:

Փա՛ռք ու պատիվ այն հայ մայրերին, որոնք դիմակայում են այդ ցավն ու վիշտը:

**Շարադրանքի հեղինակն է Ստեփանակերտի  
Ք.Իվանյանի անվան ռազմամարզական  
վարժարանի X «ա» դասարանի սան  
Արմեն Գրիգորյանը**



*Ստեփանակերտի հ.12  
հիմնական դպրոցի  
VIII դասարանի  
աշակերտուհի  
Սևուշ Ասրյան*

## Առաջին տեղ՝ բ

Նա արթնանում է աղամամութին, երբ արելը դեռ նոր է պատրաստվում երեւալ հորիզոնում: Սովորության համաձայն գլուխը հանում է պատշգամբից, մի լավ տնտղում շրջական: Ականջը դռան թակոցի ձայն է որսում, բայց թոպե անց նա հասկանում է, որ նորից ամեն ինչ խաբկանք է, սպասում ու կսկիծ: Հայացքը վերստին հեռուներին է ուղղում, նայում մոր գրկից դուրս եկող արեւին, որ ամենագոր է թվում իրեն, աղոթք մըմնջում:

-Իմ որդուն տուն բեր, Տեր, ցույց տուր հետդարձի ճամփան, լուսավորիր նրա ճանապարհը...

Անգին տատը արցախյան շարժման ժամանակ կորցրել է որդուն՝ Սամվելին: Գյուղի քաջ տղաներից մեկն էր նա, որի համար թուրքի հետ կռվելը պատվախնդրությամբ հարց էր: Ծնողապաշտ ու հայրենասեր որդին չէր կարող անարգված տեսնել ոչ հայրենի հողը, ոչ էլ՝ մոր պատիվը: Սամվելն առաջին կամավորականներից էր, որ ինքնաշեն հրացանով գյուղի սահմանն էր պահում: Քաջ գիտեր իր բազկի զորությունն ու գենքի ուժը: «Ուժն է ծնում իրավունք» այս բանաձեռը վաղուց էր դարձել նրա կարգախոսը, կյանքում առաջնորդվելու գաղափարը: Պատանեկության տարիներին սերտել էր պատմական բոլոր վեպերը եւ հաճախ էր խոսում ռազմի պատմության առանձին դրվագների ու գաղտնիքների մասին: Սակայն արի ու տես, որ մի օր գյուղի պաշտպանության մարտից նա այլեւս տուն չդարձավ:

Մայրը երկար էր սպասել ուշացող տղային, գույժի

վտանգն արդեն պաշարել էին նրա սիրտն ու հոգին: Իսկ երբ հայտնի դարձավ որդու անհայտ կորչելու մասին, մոր ծնկները ծավկեցին, եւ նա այդպես երկար գետնին գամված մնաց: Այդ օրվանից տխրությամբ ու կարոտով վարագուրվեցին նրա աչքերն ու հայացքը: Նա այլեւս չծիծաղեց:

Վրեժխնդրությամբ լցվեց սիրտն ու հոգին, օրերը տարիների ծանրությամբ կքեցին նրա ուսերը: Սպասումը դարձավ կենսակերպ, իսկ օրեցօր հասունացող կարոտից սկսեցին հույսի նշույլներ կայծկլտալ:

Նա այսօր ժպտում է, որովհետեւ տեսել է որդուն: Տեսել է: Տեսել է... երագում: Եվ այդ երագն ապրելու հույս է ներարկում նրան: Ահա գոգնոցը մի կողմ նետեց, վազեց գյուղամեջ. «Կարմիր խաչի» մեքենան եկել է. գու՞ցե լուր ունի իր համար...: Ահա գլխիկոր քարշ է տալիս ոտքերը դեպի տուն՝ հուսադրող ոչինչ չասվեց իրեն... Որդուն փնտրում է ամենուր՝ զինծառայողների, գյուղամիջի տղաների, հանդից վերադարձողների մեջ, երբեմն էլ՝ նահատակված ընկերների աչքերում:

Արեւն այլեւս չի ջերմացնում նրա հոգին, գարնան ծաղիկներն այլեւս հիացմունք չեն պատճառում նրան, բայց պարտեզի վարդի թփերը խնամում է ջերմությամբ. որդու կարոտն է առնում դրանցից: Անհայտ կորած զինվորի մա՛յրը... Ահա նստել է քարե աստիճաններին եւ արցունքները խեղդելով՝ նայում մայրամուտի արեւին.

-Էլի որդուս տուն չբերի՛ր...

Եվ արեւի հետ օրը նորից մարում է, մարում են օրվա հույսերը, կարոտը նորից է սեղմում սիրտը, իսկ դռան թակո՛ցը...

Հարություն պապը հանդիմանում է.

-Էլի ձայնո՞վ ընկար...

Ուզում եմ հավատալ, որ մի գեղեցիկ օր Անգին տատը



կիանի ժանեկազարդ սփռոցը եւ սրտի տրոփյունով խնջույքի սեղան բացի, Յարություն պապն էլ մատաղացուն սրբավայր կտանի, եւ դռան թակոցից հետո ներս կմտնի...Սամվելը:



*Լուսինե Մարտիրոսյան  
Թիվ 7 դպրոց, 7 «ա»  
դասարան  
Առաջին տեղ*

**ԱՆՈՒՆԴ ՀԱՅՏՆԻ,  
ՃԱԿԱՏԱԳԻՐԴ ԱՆՀԱՅՏ  
ՍՊԱՍՈՒՄ**

Սրտի անհուն կսկիծով եմ գրում անհայտ ճակատագիր ունեցող զինվորի մասին:

Պատերազմն ինքը դաժան փորձություն է բոլորի համար, սակայն այն կրկնակի դաժան եղավ նրանց համար, ում մենք այսօր կոչում ենք անհայտ կորած ազատամարտիկներ...

Մեր՝ դպրոցականներիս պարտքն է լավ սովորել, որպեսզի կարողանանք լինել նրանց կիսատ թողած գործի շարունակողը: Ես կուզեի ամբողջ աշխարհը լինի իմ բերրանքի տունը, մեր դուռը բացեինք բոլորի համար: Մութ ամպերը նահանջեին եւ երկնքից իջնեին աստղերը, ու չհնչեին մահագույժի անգութ զանգերը... իսկ դա կլինի այն ժամանակ, երբ անհայտությունից տուն վերադառնա իմ Սպարտակ քեռին՝ տարաբախտված զինվորը հայրենյաց:

Անունդ հայտնի՝ դու ազատությամբ զինվոր,  
Դու՝ արդար բազուկ, պաշտպան Հայրենյաց,  
Պիտի հանգչես հավիտյան... քո՝ հայրենիքում,  
Բարով արժանանաս բախտին այդ դժվար:

Պատերազմն աշխարհի ամենամեծ աղետն է ու չարագործությունը, որն ահավոր ավերումներ է բերում քա-

ղաքներին, գյուղերին, մարդկանց, իսկ զինվորը, գտնվելով պատերազմում, կարողանում է անադարտ պահել իր մարդկային էությունը, մնում է մարդ ու մարդասեր՝ հատկապես մահվան աչքերին նայող անվախ մարտիկների նկատմամբ եւ մեծ վիշտ է ապրում, երբ որեւէ մեկն ընկնում է թշնամու արկից, կամ երբ ընկնում է ձեռքը թշնամու, եւ նրա ճակատագիրը դառնում է անհայտ: Շատ ու շատ հայրենասեր երիտասարդներ թողեցին իրենց ընտանիքը, իրենց երեխաներին, անմնացորդ կռվեցին թշնամու դեմ՝ ամբողջ սրտով վայելելով հաղթանակների բերկրանքը: սակայն ճակատագիրն ի վերջո երես դարձրեց նրանցից...

Նման ճակատագիր ունի իմ միակ քեռին՝ Սպարտակը, որին ճանաչում եմ միայն լուսանկարով ու տատիկիս պապիկիս պատմածներով: Իմ միակ երագանքն է տեսնել հերոս քեռուս՝ Սպարտակին:

«Մեզ ողջերի մեջ փնտրեցեք, մարդիկ,- ասում են անհայտ ճակատագիր ունեցողները,- քանզի ապրում ենք ձեր գիտակցության մեջ»:

Այստեղ է պայթել արկը թշնամու,  
Ծառի մոտ հսկա, կանաչ գետափին,  
Ուռենին ընկավ արկից ահարկու,  
Քաջ զինվորի հետ՝ արեւածագին:

Վաղուց է անցել օրն այն դաժան,  
Չկա մեր հողում թուրքը անարժան,  
Իսկ այն ուռենին նորից կանաչել,  
Կարծես ֆիդայուն շիրիմ է դարձել:

Կորչի՜ թող պատերազմը: Խաղաղություն՝ն իմ Արցախ աշխարհին... Եւ աշխարհին՝ համայն:

Եթե մեկ-մեկ նշելու լինեմ՝ շա՛տ մեծ կստացվի այն մարդկանց ցուցակը, ովքեր անում են մեզ համար ամենապահանջվածը՝ բարոյական հեևարան են կանգնում մեր գործին ու փշրված սրտերին: Երանի՛ տղաներից գեթ մեկը վերադառնար հայրենիք ու տեսներ հուշաթանգարանում պահվող՝ բարոյական աշակցության, հիշատակի սատարման բարձր արժեքները... Օրինակ՝ 2010 թվականի ապրիլի 4-ին մայրաքաղաքի Աշոտ Ղուլյանի /Բեկոր/ անվան թիվ 2 դպրոցում, ապրիլի 30-ին էլ՝ մեր հուշաթանգարանում նույն դպրոցի հայոց լեզվի ու գրականության ուսուցչուհի Անահիտ Մեսրոպյանի պատրաստած եւ աշակերտների լեզվով հնչեցրած գրական-գեղարվեստական՝ բեմականացված մոնտաժը: Այդ միջոցառման մասին ընթերցողը թող դեռ նախնական պատկերացում կազմի լրագրող Սիրվարդ Մարգարյանի՝ «Մարտիկ» թերթում տպագրված «Դաս արիության» հոդվածով, որ ներկայացնում եմ ստորև:

«Մայիսյան Եռատոնի շրջանակներում հերթական Արիության դասը օրերս տեղի ունեցավ ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միությունում:

Միջոցառմանը հրավիրված էին կրթական համակարգի պատասխանատու աշխատողներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, Արցախյան ու Հայրենական մեծ պատերազմի վետերաններ, անհայտ կորած ազատամարտիկների հարազատներ, աշակերտներ:

Օրվա հերոսները մայրաքաղաքի Աշոտ Ղուլյանի անվան համար 2 հիմնական դպրոցի 6 «բ» դասարանի աշակերտներն էին, ովքեր իրենց հերթական Արիության

դասին ներկայացել էին պատշաճ մակարդակով:

Դասը վարող ուսուցչուհի Անահիտ Մեսրոպյանի խոսքերով նրանք փորձում են իրենց ձայնը լսելի դարձնել աշխարհին եւ հույսով սպասել բոլոր նրանց տունդարձին, որոնց անունները հայտնի. ճակատագրերը. սակայն, անհայտ են առայսօր:

Վեցերորդիները արտասանում էին անհայտ կորած զինվորներին ձոնված բանաստեղծություններ: Նրանք ասմունքում ու երգում էին դեռեւս անհայտության ճամփեքին դեգերող ազատամարտիկների մայրերի մորմոքի լեզվով: Աշակերտների լեզվով խոսում էր մայրերի ցավը, սպասումը, հույսը, իսկ նրանց զգայական ասմունքին մի առանձին խորհրդավորություն էր տալիս շարքային Դավիթ Մաթեւոսյանի ջութակի նվագը:

Աշակերտների շուրթերով խոսում էր Արցախամոր անհաղթ ու անկոտրում ոգին, նրանց շուրթերից հնչում էր մոր աղոթքը, իսկ նրանց հույսի վերածված սպասումը պոռթկում էր ու դառնում խոնարհում. «Խոնարհվում եմք նրանց առաջ, որ փրկեցին մեր անունը, բայց մնացին անանուն»: Երդումի պես էին հնչում դպրոցականների բոլոր կատարումները, քանզի հայոց հերոսական երթի ճանապարհն այդպես պիտի պահեն նրանք՝ հավատարիմ մնալով նրանց ընտրած պայքարի ուղուն:

Աշակերտները ԱԿԱՅՄ հուշաթանգարան էին եկել նվերներով: Անհայտ կորած ազատամարտիկների հարազատներին նվիրած գավաթներին նրանց որդիների դիմանկարներն էին, մակագրությամբ՝ 6 «բ» դասարանի աշակերտներից:

Աշակերտները նվերներ ստացան ՀՀ հասարակական կազմակերպությունների համակարգող խորհրդի նա-

խագահ Մարգարիտա Խաչատրյանի եւ ԱԿԱՅՄ Նախագահ Վերա Գրիգորյանի կողմից: Պարգեւների արժանացան Նաեւ «Անունդ հայտնի, ճակատագիրդ անհայտ» շարադրությունների մրցույթում առաջնային տեղեր գրաված աշակերտները: ԱԿԱՅՄ վարչության որոշմամբ ակտիվ համագործակցության համար պատվոգրերի արժանացան Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության եւ սպորտի բաժնի վարիչ Կառլեն Մարգարյանն ու համար 2 հիմնական դպրոցի տնօրեն Լաուրա Մարտիրոսյանը: Ուսուցչուհի Անահիտ Մեսրոպյանը նույնպես արժանացավ հուշանվերի:

Մնում է ասվածին հավելել, որ վեցերորդիների Արիության դասը կայացավ: Նրանք բոլոր մայրերի սրտի խոսքը հնչեցրին առ Աստված՝ որպես աղոթք ցաված սրտի, իսկ մայրերն էլ իրենց հերթին, ցավն ու կսկիծը սրտներում սեղմած, մաղթեցին, որ այսուհետ բոլոր դպրոցականների շուրթերից միայն հաղթանակի երգեր հնչեն, իսկ իրենք լինեն վերջին մայրերը, որոնց սրտերում դեռեւս վիշտ կա եւ անամոք վերքեր:

Ավելորդ չեմ համարում փոքր-ինչ բացել փակագծերը՝ ասելով. արիության այդ դասը մինչ այդ եղածներից տարբերվում էր նրանով, որ փաստորեն նվիրված էր թիվ 2 դպրոցի Նախկին շրջանավարտ՝ երկու անհայտ կորած ազատամարտիկի՝ իմ որդի Սպարտակ Գրիգորյանին եւ բախտակցիս՝ Առլետայի որդուն՝ Անդրանիկ Սարգսյանին: Նրանք համադասարանցի էին... Կուզեի միջոցառումը ետին թվով ընթերցողիս ներկայացնել հնարավորինս վիզուալ տեսքով, բայց մինչ այդ, կարծում եմ, տեղին է հայտնել, թե ինչպես կամ, ավելի շուտ, ինչից է ծնվել նման միջոցառման գաղափարը: Շնորհաշատ

դասղեկ Անահիտ Մեսրոպյանի՝ մեկ օրում իր սաներին Չոհվածների եւ Անհայտ կորածների հուշաթանգարաններն այցելության տանելուց: Տեսեք ինչ է գրել 5-րդ «բ» դասարանի աշակերտ Վիլեն Արզանգուլյանը. **«Չոհված ազատամարտիկների հուշաթանգարանում մենք շոշափելիորեն զգացինք՝ ինչ ասել է պատերազմ եւ ցնցված էինք: Այցելեցինք նաեւ հարեւանությամբ գտնվող՝ Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանը, եւ պատերազմի մասին մեր պատկերացումների շրջանակն ավելի ընդլայնվեց: Այստեղ մեզ դիմավորեց ԼՂՀ ԱԿԱՅՄ նախագահ եւ անհայտ կորած ազատամարտիկի մայր Վերա Գրիգորյանը: Մենք տեսանք բազում տղաների նկարներ, որոնց տեղն առ այսօր հայտնի չէ: Վ. Գրիգորյանը մեզ պատմեց իր տղայի մասին եւ ասաց, որ մինչեւ հիմա չի փակում տան դուռը, քանզի սպասում է, որ որդին կվերադառնա... Թող Աստված լսի նրա խնդրանքն ու իրականացնի երազանքը»:** Այո, Վիլեն ջան, չեմ փակում: Եվ ոչ միայն չեմ փակում, այլեւ տասնվեց տարի է՝ մեր տան դռան կողպեքը չենք փոխում՝ երբ խափանվում է, ամուսինս ամեն հնար բանեցնում է՝ այն սարքինացնելու համար... Գիտե՞ս ինչու. որովհետեւ հենց այդ կողպեքի բանալիներից մեկը Սպարտակս իր հետ, գրպանում, տարավ՝ երբ, ինչպես հետո պարզվեց՝ իր վերջին մարտին էր գնում...

Իսկ ահա թե «Անունդ՝ հայտնի, ճակատագիրդ՝ անհայտ» վերնագրով գրական-գեղարվեստական մոնտաժի ինչ սցենար է պատրաստել ու մեզ մոտ՝ հուշաթանգարանում բազմամարդ լսարանի համար բեմադրել Անահիտ Մեսրոպյանը, սցենար, որում ներառված են ե՛ւ իր՝ ուսուցչուհու հեղինակած բանատողերը, ե՛ւ մի շարք

բանաստեղծություններ իմ չափածոյից, մեկ բանաստեղծություն էլ, եթե չեմ սխալվում, արցախահայ բանաստեղծ Արկարի Թովմասյանից:

Կարդա ամբողջը, սիրելի ընթերցող, եւ պատկերացրու մեր՝ անհայտ կորածների ծնողներին երախտագիտության չափն առ աստվածահաճո այդ ձեռնարկումը... Եվ թող քո ականջին էլ այնպես հնչեն Անահիտի շնորհալի աշակերտներ Մարատի, Աննայի, Լուսինեի, Էթերիի, Տիգրանի, Անահիտի, Ռոքսանայի, Դիանայի, Մանուշակի, Ռուդոլֆի, Բելայի, Լիլիթի, Սիրուշի, Սասունի, Գայանեի ձայները՝ ինչպես իմ ականջին. արտահայտիչ եւ հուզառատ...

**Յեղիսակ.**- Բարեկամներ՛ր, կանգնեք մի պահ Այս մարմարյա հուշարձանի՝  
Անհայտ կորած տղաների  
Յայացքների առաջ:  
Այստեղ ամեն ականթարթը  
Յավերժացած մի աշխարհ է,  
Ու մարտերի շառաչ:  
Այստեղ ամեն ականթարթը  
Մոր արցունք է, քրոջ թախիծ,  
Յպարտություն որդու,  
Այստեղ ամեն ականթարթը,  
Ափսոսանք է, սեր է անբիծ,  
Վեհություն է հոգու:  
Այստեղ ամեն ականթարթը  
Արձագանք է մաքուր խղճի,  
Յուր կարոտ է ու բոց,  
Այստեղ ամեն ականթարթը  
Մաքրվելու մի օվկիան է,  
Կյանքի մի մեծ դպրոց:

Անհայտ ճակատագրեր, վերադարձի հույսով վառվող մոմեր:

Ճակատագիրդ անհայտ, անունդ հայտնի,  
Մխրանքդ անմար, ճանապարհդ՝ հերոսական:

Անհայտ է ճակատագիրը նրանց, տունդարձի ճամփան՝ տատասկոտ:

Անհայտությունից սկսվում են տեսիլքների ոգին ել կյանքի ճանապարհը:

Անհայտ գինվորը համայն աշխարհի ցավն է:

Նրանց մասունքները խոսում են, իսկ գործերը պատմություն են դառնում:

Նրանց հիշատակն անմար է, անունները՝ մեր սրտերում:

Մի՛ սպանեք հավատս: Մոմի պես հալվող հույսով, օրվա հետ բացվող լույսով սպասում ենք...

Մոր սիրտը ցավի անսուտ ուղեկից է:

Մայրը երբեք չի հաշտվի որդու անհայտության հետ:

Հիշողության դասը գորեղ է մահից:

Հիշելն էլ գոյատևման ձեռն է:

Հաղթահարելով ցավը՝ հաստատում ենք երկրի զորությունը:

Հույս, հավատ ու կորով բոլոր մայրերին, որոնց սրտում որդու կարոտն է: Հույսը մարում է մարդու կյանքի հետ մեկտեղ, բայց Կյանքը շարունակվում է...

Որոնումների ճանապարհին միշտ ուղեկից է ճանաչողության լույսը:

Անհայտ կորած գինվորներ, երկնքի անհունում սավառնող բազեններ, տուն դարձեք, ամոքեցեք Ձեր հարազատների հոգիները:

Եկե՛լ ենք՝ մեր ձայնը լսելի դարձնենք աշխարհին ու ասենք՝

Սպասում ենք տունդարձի բաղձալի օրվան:

Բոլորիդ բարի վերադա՛րձ:



\* \* \*

Հայ մի մայր եմ, հայ մի կին,  
Սրտիս վիշտը՝ անմեկին...  
Հիսո՛ւս, ցավս պարտակիր,  
Տուն դարձրու իմ Սպարտակին:  
Հիսո՛ւս, բարին թող հաղթի,  
Բազմապատկիր ուժը մեր,  
Որ դիմանանք այս բախտին,  
Տուր այնքան սեր, միություն՝  
Ապրենք անմեղ ու անքավ,  
Հաջողություն տուր այնքան՝  
Էլ չտեսնենք ամռան... ձյուն:

\* \* \*

Ինձ ինձանից պոկում են,  
Մարդիկ, մի՛ թողեք,  
Կեղծում են անունս, մի թողեք,  
Լեզուս կտրում են, մի թողեք,  
Ուզում են հայերեն էլ չերգեմ,  
Վանքերս քանդում են, մի թողեք,  
Հայերեն տառերս ջնջում են,  
Վառում են իմ տունը, մի՛ թողեք:  
Իմ անմեռ հավատի համար  
Մարմինս լլկում են, մի՛ թողեք,  
Թե թողնեք՝ վաղը  
Ձեր հերթն է գալու,  
Մի՛ թողեք:

\* \* \*

Ես չեմ տեսել պատերազմ,  
Բայց երբ տանը իմ քեռին  
Ման է գալիս հազիվհազ՝

Յենված փայտե իր ոտքին,  
Յասկանում եմ, թե ինչու  
Իմ լավ քեռին ոտք չունի,  
Եվ ուզում եմ, որ կյանքում  
Երբեք կռիվ չլինի:  
Ես չեմ տեսել պատերազմ,  
Բայց ընկերն է իմ ասել,  
Թե հայրիկն իր գալու է՝  
Միայն պիտի սպասել...  
Բայց անցել են տարիներ՝  
Նա էլ «հայրիկ» չի ասում.  
Նրա սրտում դառնացած  
Կա քարացած սպասում...

\* \* \*

Ո՞ւր ես, անհայտ կորած զինվոր,  
Սիրածիդ կարոտն է կանչում,  
Գուցե զոհվել ես մարտերում,  
Թե՞ գերության մեջ ես այսօր:

Սիրելիս, հասցեդ փոխվե՞ց,  
Յասցեդ դարձավ... անհասցե՞-  
Նոր՝ եւ անծանոթ հասցե,  
Անորոշ, տանջո՞ղ հասցե:

\* \* \*

Բաց է տուն-օջախիս դուռը,  
Յույսս դեռ կորածին է սպասում...  
Արցունքներս հավաքեմ բուռս,  
Աչքս չէ՝ սի՛րտս է արտասվում:

\* \* \*

Քննություն է, տղերք,  
Տոմս քաշեցեր...  
Տղերք, ոչ մի անգամ  
Չեք ուշացել երբեք,  
Ու բացակա չուներ...  
Վերադարձեք, տղերք:  
Քննությունը վաղուց  
Դուք հանձնել եք արյամբ,  
Դուք հանձնել եք պատվով,  
Յերոսացած տղերք:

Գրքույկը բերեք՝  
«Գերազանց» դնենք...  
Այդ ինչու՞ եք լռել,  
Չեք ժպտում, տղերք...  
Գրքույկները արևոտ  
Յիշատա՞կ եք թողել,  
Ձեր ցավերից, տղերք,  
Մե՛ր սրտերն են խոցվել:  
Ձեր հարցերը տխուր,  
Արցունքոտ են, տղերք,  
Քննություն է, տղերք,  
Տոմս քաշեցեր...

\* \* \*

Արցախ աշխարհը ծնել ու սնել է հերոս որդիների,  
որոնք իրենց արհուլթյամբ եւ անձնագոհությամբ հպար-  
տության վեհ զգացումով են պարուրում մեր մայրերին,  
հայրերին ու հարազատներին՝ մեր նախնիների հողում  
ազատ ապրելու եւ արարելու:

## Անհայտ կորածի մոր ձայնը

Եղեգի նման ոտքս պաղ ջրում՝  
Տառապանքս եմ լուռումունջ կրում:  
Օ,՛ մի օր եթե  
Մեկը կտրի ինձ, շվի նվագի՝  
Տխուր այս ձայնը  
Կբարձրանա եթեր.  
- Ա՛խ, իմ լավ որդի,  
Չավակ սիրասուն,  
Օգնել եմ ուզում՝  
Ձեռքս չի հասնում,  
Տեսնել կուզեմ քեզ քո հոր, մոր կողքին,  
Մի՛թե կմեռնեմ՝ քեզնից դեռ բաժան...  
Ո՞վ գրեց բախտի այս գիրքը դաժան:

\* \* \*

Վշտիս մասին  
Չազար ու մի երգ կապեցի...  
Ասա, Տեր իմ, որդուս առջեւ  
Բանտի դուռը ե՞րբ կբացվի:  
Ցավի կա՞ մի երանգ էլ, որ  
Դեռ նոր պիտի ես իմանամ,  
Տասը տարվա բեռն ուսերիս՝  
Ո՞նց դիմանամ:  
Չա՛ խմում եմ  
Դառնության այս բաժակը, բայց...  
Վե՞րջ չունի այն,  
Պատրաստ եմ քեզ տալ իմ հոգին,  
Միևուճարիս ե՛տ տուր միայն...

\*\*\*

Յեղեղի երգն է երգում անձրեւը,  
Մերկացած թխկին՝ համր արտասովում,  
Որքա՛ն եմ նման ես էլ այս ծառին...  
Ինչու՞ աղոթքս, Տեր, քեզ չի հասնում:  
Ինչու՞ իմ սրտից չես հանում սեւը,  
Դարձել եմ ասես ցավի հայելի,  
Մինչեւ ե՞րբ մնամ կախված «հույս» բառից,  
Մարդը չի կարող ապրել լոկ հույսով՝  
Յույսի պտո՛ւղն էլ պիտի վայելի...

\*\*\*

Ես հասարակ մի հայ կին՝  
Երբ Յայրենիք եմ երգում,  
Բառը դառնում է երդում,  
Եվ՝ շատանում լույսն աչքիս:  
Երբ հայրենիք են երգում,  
Յաստատ մի բան հրաշքից  
Այցելում է իմ հոգուն,  
Երբ Յայրենիք եմ երգում,  
Ասես... տեսնում եմ որդուս:

\*\*\*

Երբ ես մեռնեմ, լաց չլինեք,  
Փոխարենը վարդ կբերեք՝  
Գերեզմանիս վրա փռեք,  
Ողորմի տաք՝ «Յույսը՝ քեզ հետ...»:

Լաց չլինեք,  
Փոխարենը ինձ խոստացեք,  
Որ երբ մի օր որդիս տուն գա,  
Այցի կգաք գերեզմանիս,  
Վարդեր փռեք, ողորմի տաք,  
«Լույսը՝ քեզ հետ...»:

\* \* \*

Ջահել գինվորի նկարի առաջ  
Ծերացած մի կին կանգնել էր տխուր,  
Նրա շուրթերին դող կար ու հառաչ,  
Նրա աչքերում՝ մշուշված մի հուր:  
Բոլոր մայրերի կարոտի հրով  
Կրկին ու կրկին հոգիս վառեցի,  
Չինվորի ջահել հայացքն իմ սրտում,  
Այդ սուրբ մոր առջեւ լուռ խոնարհվեցի:

\* \* \*

Ինձնից թիկնեղ է եղել իմ հայրը,  
Բազուկները՝ հաղթ, ուժը՝ վիթխարի,  
Բայց չի ժպտացել նրան աշխարհը,-  
Բռունցքի տակ է եղել միշտ չարի:

\* \* \*

Չայր իմ, տասնմեկ տարեկան եմ ես,  
Այդպես էլ կյանքում չհանդիպեցինք,  
Նկարից միայն ճանաչեցի քեզ,  
Միայն երագում իրար գրկեցինք:

Չպարտանում եմ ես քո անունով,  
Քո հուր կարոտը իմ սիրտն է վառում,  
Ինձ հետ ես դու միշտ, հայր, թեկուզ չկասս,  
Ու քեզ հետ եմ ես, քո շվաքի տակ:

Չայր իմ, տասնմեկ տարեկան եմ ես,  
Ժամանակը այս ո՛նց է վռագում,  
Ա՛խ, մի՞թե նորից քեզ պիտի տեսնեմ...  
Միայն երագում:

\*\*\*

Կարոտս ծնվում է քեզանից,  
Թախիծս՝ քեզանով մարում,  
Առանց քեզ, իմ սիրտը, սիրելիս,  
Ավերված բույն եմ համարում:

\*\*\*

Քո անունը ի՛մ անունն է,  
Քո պատիվը՝ պատիվս թանկ,  
Կյանքը ուր էլ ինձ տանում է,  
Ջերմանում եմ քո՛ շնչով տաք:

Ես քեզանով կանաչում եմ,  
Ինձ քեզանով ճանաչում եմ,  
Այնպես ապրեմ՝ իմ պատճառով  
Ոչ- ոք չասի՝ ամաչում եմ:

\*\*\*

Թող գոնե մեկը վերադառնա ետ,  
Սրտում եղածը եկածների պես  
Կիսի հոր-մոր հետ...  
Աղաչում եմ, Տե՛ր,  
Փրկիր գեթ մեկին,  
Մի թողնիր նրանց դժբախտ ու անտեր:

Ճակատագիրը ի՛նչ դաժան եղավ,  
Կարծես թե անդարձ իլեց ձեզ մեզնից:  
Մատաղի նման մի օր բարձրացաք  
Դուք զոհասեղան՝  
Կարոտի պողը թողած մեր լեզվին:

\* \* \*

Ինչքան կուզեի, հայր իմ սիրելի, ողջ լինեիր,  
Եվ մեր գեղեցիկ տունը տեսնեիր,  
Մայրս ու տատս միշտ սեւ են հագնում,  
Առաջվա նման էլ չեն ծիծաղում,  
Միշտ քեզ են հիշում...Ա՛խ, հայրեր, հայրեր,  
Արցախ աշխարհի հերոս զավակներ:

\* \* \*

Իմ ավագ եղբայր, իմ բարի եղբայր,  
Ի՞նչ է պատահել ջահել սրտիդ հետ,  
Ինչքան սպասենք, ինչու՞ չես գալիս,  
Ինչու՞ չես լսում աղաչանքը մեր:

Մայրիկը մարեց՝ անունդ շուրթին,  
Բայց վերջին շնչում պատվիրեց հույսով,  
Թե երբ տուն դառնա իր կորած որդին,  
Ճամփան զարդարենք ծաղկով ու լույսով:

\* \* \*

Ես որի՞ վիշտը իմ հոգում տանեմ,  
Ո՞նց հավատ դառնամ նրանց սրտերում,  
Մխիթարանքի ի՞նչ խոսք շշնջամ,  
Իմ տառապանքը, ասեք, ու՞մ պատմեմ:  
Մեկը իր սիրտն է տվել ապրողիս,  
Մյուսն իր կյանքն է իմ ճամփին թողել,  
Ի՞նչ պիտի ասեմ նրանց փոխարեն,  
Ովքեր արյամբ են Արցախն իմ պահել:

\* \* \*

Շատ բան չեմ խնդրում  
Քեզնից ու դարից,  
Մուրացկանի քուրճ



Թող լինի հագիս՝  
Վերադարձրու ինձ  
Աչքերս խնդուն՝  
Կյանքը զավակիս -  
Թող ինձ համար էլ...  
Լինի վարդ -մայիս:  
Ուզածս դժվար  
Բան մի համարիր,  
Հանիր ինձ, հանի՛ր  
Բախտի խավարից:

\* \* \*

Որքա՛ն կարճ ենք մտածում,  
Երբ ծնում ենք երկու զավակ...  
Դե ...երրորդն էլ՝ վերջի՛ն սահման.  
Թող քիչ լինեն, ասում ենք մեզ,  
Պահենք, սակայն մարդավարի...  
Իսկ այ թուրքի կինն ուզում է  
Չավակ ծնել ամեն տարի:  
Աստծո խոսքն էլ մեզ չի ազդի,  
Իսկ նա օտար Փարիզում էլ  
Ապավեն է դառնում ազգին՝  
Ծնում է ութ- տասը որդի...

Կար ժամանակ ՝ մենք էլ էինք  
Յոթ զավակով սեղան նստում,  
Որտե՞ղ մնաց մեր այդ ոգին,  
Կյանքն այսպես մեզ ու՞ր կհասցնի...  
Եվ բողոքել պետք չէ դարից.  
Եթե ծնած լինեի ես  
Եվս մեկ կամ երկու տղա,  
Չէի կոչվի միակ արու զավակի տեր՝

Այն էլ անհայտ կորած որդու:  
Սիրտս ինչու՞, ա՛խ, չիմացավ  
Որ կհանվի ածելու սայր,  
Ափսո՛ս- ավա՛ղ՝ որ չգիտեր...  
Հայոց այրեր, հայոց մայրեր,  
Հավաքվեցեք մեկտեղ, մի տեղ,  
Ու երդվեցեք.  
« Լավ է՝ մի տուն երեխաներ  
Մեծացնելով վաղ ծերանանք,  
Քան՝ մեր խելքով մեր բախտն այրենք»:

\* \* \*

Տեսա քեզ՝ քո ձեռքին վարդեր,  
Եվ ուսիդ՝ գազանի մորթի...  
Երագս ես ինչպե՞ս մեկնեմ:  
Քույրիկդ պսակվել արդեն՝  
Ու ես էլ թոռ ունեմ, որդիս:  
Ա՛խ, ներիր. ծնվել է մեկն էլ...  
Պարույրն ու Սամվելն են նրանք.  
Պարույրը՝ քո քրոջ տղան,  
Սամվելն էլ...իմ նախկին հարսի-  
Իմ տան սյուն, իմ անուշ որդի,  
Չե՞մ պատմել Նինելիդ մասին...

Քույրիկդ, տղաս, շատ ուզեց  
Քո անվամբ կոչել իր մանկանն,  
Համաձայն չեղա ես, սակայն,-  
Մեր միջեւ վեճ եղավ թեթեւ,-  
Իմ սիրտը հուշում է, որ կաս,  
Մոր սիրտը չի խաբում երբեք,  
Երբ դու գաս՝ կբացեմ սեղան,  
Եվ կօրհնեմ քո բախտը... երկրորդ,

Թող Պարույրն ու Սամվել տղան  
հրենց իսկ ճակատի գրով,  
հրենց իսկ անվամբ մեծանան:  
Դու կգաս՝ կգտնես քո տեղը,  
Եվ տարին կատարի պտույտ՝  
Քեզնից էլ կծնվի մի պտուղ...  
Մենք նրան կանվանենք Արման՝  
Չէ՛ որ միշտ երագում էիր դու...  
Ա՛յդ անվամբ տղա ունենալ:

\* \* \*

Սպարտակ իմ -  
Չավակս աննման,  
Շապիկդ պահում եմ ...անլվա.  
Գիտեն դա՝ եւ հեռու, եւ մոտիկ...  
Երբ տանը մենակ եմ լինում,  
Հանում եմ՝ տանում երեսիս՝  
Ու գժվում՝ ցնորվո՛ւմ քո հոտից...

\* \* \*

Մայրը նշում է ծնունդը որդու,  
Իսկ որդին չկա՝ կորել է մարտում...  
Հին ընկերները նստել գլխահակ՝  
Եվ մի աթոռը մնում է դատարկ:  
Մայն ստիպում է, որ երգեն, ցնծան,  
Բայցը սիրտը, սիրտը լալիս է անձայն,  
Ծննդյան օրն է միևնույն որդու,  
Որ տասնութամյա՝ կորել է մարտում:  
Իսկ մի՞թե, աշխարհ, սխալ կլիներ,  
Եթե իր տոնին նա ներկա լիներ:

\* \* \*

Գիշեր է, ուշ գիշեր,  
Քնած ես, որդիս,-  
Քեզ թողնում են քնել...  
Արթնացել եմ, տղաս,  
Որ քո քունը հսկեմ...  
Տեսա՞ր՝ ինչպես դարձանք  
Չոհեր՝ դաժան խաղի...  
Մեր մեջ բացված է միշտ  
Մոր կարոտի փշոտ ծաղիկ...  
Հանգի՛ստ, որդիս,  
Չուր մի ցնցվիր երագումդ,  
Ե՛ս եմ՝ մայրդ... կողքիդ,  
Մտքիս թելով հասել եմ քեզ,  
Որ լավ հսկեմ քունդ...

\* \* \*

Ի՞նչ եք խորհում...  
Ձեր մո՞րն եք հիշել,  
Թե՞ զավակներին,  
Ձեր փոքրիկների  
Անբառ խո՞սքն եք  
Լսել կարոտով,  
Լսե՞լ եք նրանց՝  
«Հայրիկ» են կանչել...  
Պատասխանեցեք՝  
Ձեր երագները  
Ձեզ ի՞նչ են հուշել...  
Մենք՝ ապրողներս,  
Միշտ հիշում ենք ձեզ,  
Մենք ձեզ ամեն օր  
Փնտրում ենք թելող

Երամների մեջ,  
Բարձր երկնքում,  
Եվ բոլոր բացվող  
Ծաղիկների մեջ...  
Դե՛հ, խոսեք, տղերք,  
Մենք լսում ենք ձեզ:

\* \* \*

Ձինվորը գնաց ու չեկավ ետ,  
Եվ ջահել կինը լուռ համբերեց:  
Երեխաները փոքր էին դեռ,  
Հայրություն արեց, մեծացրեց:  
Հուշարձան են դնում դեռ հուզված  
Հիմա ամենուր հերոսներին:  
Բայց խոնարհվենք այս կնոջ առաջ՝  
Որպես լավագույն հուշարձանի:

\* \* \*

Ձգույշ քայլեք, մարդիկ  
Ձգույշ քայլեք...  
Նրանց աչքերում  
Այդ մենք ենք, որ կանք,  
Մենք՝ ապրողներս...  
Նահատակների  
Հպարտ հայացքում  
Սուրբ երազներ կան,  
Ձգույշ քայլեք, մարդիկ,  
Ձգույշ քայլեք:  
Այցելեք նրանց  
Սուրբ ծնողներին՝  
Մայրերին վշտոտ,  
Հայրերին՝ խոցված...

Նրանց աչքերում  
Այդ մենք ենք, որ կանք,  
Մենք՝ փրկվածներս,  
Որ պիտի ապրենք  
Նրանց փոխարեն,  
Նրանց փոխարեն...  
Խոնարհվենք կրկին,  
Ու լռենք, լռենք,  
Չգույշ լռենք, մարդիկ,  
Չգույշ լռենք:  
Լռում ենք միայն  
Նրանց փոխարեն,  
Նրանց փոխարեն, մարդիկ,  
Նրանց փոխարեն...

\* \* \*

Նրանք ապրում են մեզնից առավել,  
Ամեն գարնան հետ գալիս են այցի,  
Ու հեռանում են ապրողների հետ,  
Որ հիշողության դասը միշտ կանչի:

\* \* \*

Ձեր թափած արյունը թանկ  
Իզուր չի անցել,  
Ձեր արյան ամեն կաթիլ  
Ծաղիկ է դարձել:

\* \* \*

Քաջերի մեջ քաջ եք եղել,  
Ղարաբաղի քաջ որդիներ,  
Հաղթանակի կանչ եք եղել,  
Ղարաբաղի քաջ որդիներ:

\* \* \*

Ապրողներիս ամեն մի օրը  
Պետք է մոմի պես վառվի  
Եվ լույս դառնա նրանց  
Սուրբ հիշատակի առաջ:  
Այս գոյամարտը հայի  
Մեր ընդհանրական  
Կերպարն է՝  
Աշխարհի առաջ:

\* \* \*

Ջահել զույգերը կանգնել են թախծոտ  
Անհայտ զինվորի շիրմաքարի մոտ:  
Հարսնացուները ճերմակ են հագել,  
Փեսացուները՝ սեւ մուգ հագուստներ:  
Աշխարհից ի՞նչ են ուզում զույգերը.  
-Որ սեւ չհագնեն հարսնացուները...

\* \* \*

Չոհվածի, անհայտ կորած ազատամարտիկի մոր եւ  
ընդհանրապես Արցախամոր հաղթ ոգին է, որ օրհնան-  
քով որդուն կամ ամուսնուն ճամփու է դրել կռվի եւ աշ-  
խարհին ի ցույց դրել իր անկոտրում կամքը:

Արցախի բոլոր որդեկորույս մայրերը պետք է իրար  
լավ հասկանան՝ մոր ցավը մեկն է: Այսօր կյանքը նրանց  
համար հոգս է դարձել, ապրելը՝ պայքար, ուստի պիտի  
կողք-կողքի լինենք, պաշտպանենք միմյանց:

\* \* \*

Դուք լա՞վ գիտեք  
Վերա Գրիգորյանին: -  
Այն արցունքը, որը ես եմ թափել  
Օտար աչքից հեռու՝ իմ տան ներսում,  
Թող չթափի ոչ-որ...  
Գլխին դնեն թագ էլ՝  
Որդի կորցրած մորը  
Մխիթարանք է դա սու՛տ...  
Այն ահավոր գիշերները,  
Որ ես լուսացնում եմ անքուն,  
Մի ամբողջ կյանք հաշվեք...  
Դառը մի կյանք, որի  
Մեկ օրն անգամ՝  
Բեկորն անգամ  
Չեմ ցանկանա մեկին:

\* \* \*

Հոգնել եմ, ա՛խ, սպասումից...  
Տեսիլքներ են այցելում ինձ:  
Մորս դեմքն եմ հաճախ տեսնում,  
Հորս հանդարտ ժպիտը տաք,  
Մի՞թե պիտի մեռնեմ հեռվում՝  
Անհիշատակ եւ անկտակ...

Տեսիլքներ են այցելում ինձ.  
Մեր գյուղ տանող կաճանները,  
Երբ գնացի՝ ծաղկել էին մեր ծառերը...  
Ա՛խ, թողնեին դահիճները՝  
Կքնեի անվերջ-անչափ՝  
Որ մոռանամ իմ ցավերը...  
Տեսիլքներ են այցելում ինձ՝



Յորս տանը տեղս՝ թափուր...  
Մենության մեջ, օտարության՝  
Ինչպե՞ս տանեմ այսքան տանջանք:  
Ախ, իմ երկիր՝ հող իմ անգին,  
Կտեսնե՞մ քեզ, արդյոք, մեկ էլ,  
Թե՞ կմեռնեմ օտար ափում՝  
Հայրենիքից հեռու-անդին:

\* \* \*

Առավոտ է, մոտ է վեցին:  
Դու նստած ես վառարանի  
Մոտ՝ կանթեղով...  
Եռման ջուրն է  
Կամաց սուլող թեյնիկի մեջ:  
Արթնացել եմ, բայց մնում եմ  
Փակ աչքերով...  
Փափուկ քայլով մոտենում ինձ՝  
Ձեռքդ դնում ես ճակատիս.  
-Քաղցր բալա, վեր կաց տեղից...  
Ձայն չեմ հանում՝  
Կամաց քաշում ես իմ թելից.  
-Վեր կաց, տղաս, ժամանակն է...  
Դու ինձ համար թեյ ես լցնում,  
Բաժակիս մեջ հինգ-վեց կտոր  
շաքար գցում...  
Մայրի՛կ, մայրիկ, քեզ կարոտած՝  
Ես մտովի համբուրում եմ  
ձեռքերդ թաց:  
-Սպարտակ, վեր կաց...  
... Բացեց աչքը՝ ռազմագերին՝  
Մոր փոխարեն խցում տեսավ  
Վերակացու կոչված դելին:

\* \* \*

Ո՛վ հայի բախտ,  
Անսխալ երթ տուր իմ երկրին,  
Նրա ձայնը հասցրու երկինք...  
Տե՛ր երկնային,  
Դժբախտություն, կորուստ եւ ախտ  
Թող որ լինեն մեզնից հեռու՝  
Երկրիս արտը մնա բեղուն:

\* \* \*

Արցախցիները պողպատից կարծր են,  
Վեհ են ու բարձր են  
եւ անողորք,  
Բարեկամների հանդեպ միշտ քաղցր են,  
Իսկ չարերի դեմ՝ բռունցք- բողոք:  
Դարի ոգին են արցախցիները,  
Խղճի դրոշն են ազգերի մեջ,  
Արցախցիները նոր աստվածներ են,  
Կհասնեն իրենց երազին պերճ:

\* \* \*

Մենք՝ որդիք հայկի, արդար ու վսեմ,  
Ցավ ու դառնություն այդ ե՞րբ չենք տեսել...  
Բայց ոչ մի անգամ, Աստված Է վկա,  
Արցախին հաղթող չի եղել, չկա:

\* \* \*

Վաղուց ենք հասկացել,  
Որ ավելորդ են լաց ու հառաչ.  
Լացը մարդուն չի կարող  
Առաջնորդել առաջ...  
Ո՛չ արցունք, ուրեմն, ո՛չ սուգ՝

Եթե դատարկ է տարին,  
Եվ տարին ծնում է սուտ...  
Մենք պայքարով  
Ու համբերությամբ...  
Մեր ուզածը  
Կստանանք դարից:

\* \* \*

Հայրենիք, դու՛ քաղցր անուն,  
Դու՛ ամենից կարեւորը...  
Քեզնով է կյանքը քաղցրանում՝  
Առանց քեզ դատարկ է օրը:

Քեզ համար ենք կյանք առնում՝  
Մերնդեսերունդ մեռնում-հառնում...  
Դու՛ ամենի՛ց բախտավորը.  
Մենք՝ ծառան, դու՛ թագավորը:

\* \* \*

Տուն դարձեք, անհայտ կորած զինվորներ,  
Արցախ աշխարհի խիզախ պաշտպաններ,  
Չնդան ճանկերում անխիղճ թուրքերի  
Մինչեւ ե՛րբ մնաք չար բախտին գերի...

Ա՛խ ի սե՛ր Աստըծո, տղերք, տուն դարձեք,  
Որ հող-հայրենին ձեզնով շեն պահեք,  
Միշտ բորբոք՝ կրակը ձեր օջախների,  
Եվ չոր՝ աչքերը ձեր սուրբ մայրերի:



Հավատարիմ թե մնացինք  
Հայրենիքին եւ սուրբ խաչին՝  
Հայոց... քա՛րն էլ կկանաչի:  
Հավատացե՛ք՝ եւ... կլինի՛.  
Հունդի մեկը  
Բարձրյալը հազա՛ր կանի՝  
Մեր սիրտը մեր եր ա զ ա ծ ի ն  
Կհավատա՛ քանի:

\* \* \*

ԱԿԱՅՄ գործունեությանն աջակցող բոլո՛ր-բոլորին.  
Ձեր անունները դաջված կմնան  
Մեր երախտագետ սրտի մատյանում,  
Ո՛վ բարի մարդիկ: Մարդիկ այն բոլոր,  
Որ նպաստել եք՝ տուն վերադառնա  
Պատերազմի զոհ մեր ռազմագերին...  
Հատույցը փնտրեք Աստծո ատյանում,  
Մենք ձեզ պարտ ենք, բայց  
Ի՛նչ ունենք տալու...  
Բացի այս խոսքից, որ սրտից սերած՝  
Մաքուր է, ինչպես աղբյուրը լեռան՝  
Բոլոր լավ ու վատ եղանակներին:

Ամբողջ աշխարհը գիտե խոնարհվել  
Մայրերի առաջ,  
Բայց ահա մենք ենք, տեսե՛ք, խոնարհվում  
Ձեր անվան առջեւ:  
Ձագերը օձին տված մայրերը  
Թռչուն են անթեւ,  
Մրջյուն են՝ հոգնած, մարմինը՝ առվում...  
Ձեր միջնորդությամբ  
Մեզ իրա՛վ սորից կյանքի եք կոչում:

*Ա՛խ, ե՞րբ կլինի  
Մեր տղաների վերջին երամի  
Վերադարձի չուն...  
Այդ օրհնված օրվան հազա՛ր երանի:*

*\* \* \**

Երանի եւ մեզ՝ մեր ժողովրդին, ազգին մեր, որ ունենք Արցախի նման սրբավայր, որտեղ հայրենյաց դարպասներն ամուր են պահվում:

Երդվում ենք, որ չենք մոռանա մեր նահատակներին ու պաշտպաններին, անհայտ կորած ազատամարտիկներին, նրանց հիշատակը միշտ վառ կմնա մեր սրտերում, մենք միշտ կհիշենք նրանց՝ անուն առ անուն, եւ թարմ ծաղիկներ կդնենք նրանց շիրմաքարին:

Մեր ժողովուրդը մեր սարերի պես անսասան է, ոչ մի ուժ չի կարող նրան շեղել իր երթից: Մենք շարունակում ենք ապրել եւ ապրելով՝ հիշել անցյալը:

Այսքա՛ն կորուստներով հանդերձ՝ մենք լավատես ենք, եւ այդ լավատեսությունն է առաջնորդում մեզ դեպի պայծառ ապագա:

Իհարկե, նորից կցնծա Արցախ աշխարհը, նորից շուրջպար կբռնի հայ ժողովուրդը, ռազմագերիները տուն կվերադառնան եւ նրանց ընտանիքներում կթեւածեն ուրախությունն ու երջանկությունը, եւ կլինի այն՝ ինչին երկար տարիներ սպասել են նրանք:

Ունկնդրելով ոգու եւ ոգեկոչման այս խոսքերը՝ «եկեք հավատանք ու սպասենք»:

***Դժվար է բացատրել, թե սրտիս որչափ սիրելի թվաց,  
եւ որքան թանկ արժե, նաեւ որդուս Առաջին ուսուցիչ Վի-  
ոլետա Բաբայանի տված նվերը՝ ստորեւ ներկայացվող***

**հուշաբացիկը, որն ասես ինձ վերադարձրեց Սպարտակին՝ իր հոկտեմբերիկային- պիոներական տարիքում...**

տպարանում /երկու երեսով ֆաքսիմիլե/

Մենք վերապրեցինք մեր զավակների մանկությունը, առաջին անգամ առաջին դասարան ուղեկցելը, դասերից հետո առաջին անգամ դպրոցի մուտքի մոտ դիմավորելը, «Այբուբենի տոնը», դասերից հետո չարածճիություններն ու մեր ծնողական խստաշունչ պատվիրանները, որոնք վերջակետվում էին, այնուամենայնիվ, մեր փոքրիկների թշիկներին դրոշմվող տաք համբույրով...

Ես այնքան հուզվեցի Վիոլետայի՝ Սպարտակին վերաբերող հուշերից: Ինչպիսի՜ մանրամասնություններ, որոնց մասին ինքս՝ նրա մայրը, մոռացել էի...

«Երբ արդեն սկսել էինք գրել այբուբենի տառերը, նկատեցի, որ տղան վարանում է շարժել գրիչը: Մյուսները վաղուց էին աշխատում, իսկ նա, հայացքը մի կետի՝ Ա-ի գլխապոչին հառած՝ մտածում էր: Մոտեցա հարցրի՝ ինչու՞ չես գրում, շիկնելով թե՛ բա որ ճիշտ չստացվի... Ասացի՝ տղաս, ձեռքինդ գրիչ է, հո հրացան չէ... Ծուռ կլինի՝ նորը կգրես, այնքան՝ մինչեւ ճիշտ ու գեղեցիկ ստացվի»: Զգիտեմ՝ ինչու հենց հրացանի մասին այդ համեմատությունն արեցի, հիմա շատ եմ տխրում, երբ հիշում եմ այդ մասին: Ինձնից անկախ՝ դրանում ճակատագրական ինչ-որ բան եմ տեսնում:

Շատ խոհեմ տղա էր Սպարտակը, շատ: Աչքերում մտածմունքի չափից ավելի շատ էիր հանդիպում, քան՝ ժպիտի: Մտքումս նրան «փոքրիկ մեծ մարդ» էի կոչել... Եթե չեմ սխալվում, երրորդ դասարանում էր՝ դասի ներկայացավ մթնդած, մեր բարբառով նման հոգեվիճակի մասին ասում ենք՝ հոնքից աղու էր կաթում... Մտածեցի՝ հրապարակման տալ դա դասարանի առջեւ գուցե

չարժե, վայ թե դրանից իրեն ավելի վատ զգաց, ու սկսեցի դասը: Ժամավարտին մոտ հանկարծ ուժեղ փղձկոց լսեցի թիկունքից, շրջվեցի՝ նա էր: Ինչպե՛ս էր հեկեկում: Ցավը ներսում այնքան էր կուտակվել, որ պիտի դուրս հորդեր... Մոտեցա, գրկեցի գլուխը՝ քեզ ի՞նչ է եղել, փոքրիկ, ինչու՞ ես լաց լինում: Եվ այնպիսի պատասխան լսեցի, որից մարմինս փշաքաղվեց: Ասաց՝ մամաս մեռնում է... Յանգաստացրի, հուսադրեցի՝ ինչպես կարող էի, դասերից հետո էլ երկարօրյայի ուսուցչուհուն հետս վերցրած գնացի նրանց տուն՝ ինչ տեսնեմ, մայրն իրոք որ մահվան շեմին է... Շատ ծանր մի վիրահատություն միայն կարող էր փրկել նրա կյանքը, այն էլ՝ մոսկովյան հայտնի կլինիկաներից մեկում: Տունը սգատան էր նման, պակասում էր լոկ մի եղերամայր... Ու մեր աչքի առջեւ մի պահ այդպիսին դարձավ Սպարտակի մայրն ինքը՝ հիվանդը: Ուժերը հավաքելով՝ նա ամուսնուն ասաց տառացիորեն հետեւյալը. «Շուրա, ես հույս չունեմ, թե այնտեղից ողջ կվերադառնամ... Տես, վկաների ներկայությամբ եմ ապսպրում. ինձ թաղելուց առաջ աջ դաստակս կկտրես՝ պահես: Մենակ չմնաս, ջահել ես, կամուսնանաս, բայց... Ես հարազատ մայր եմ, էլի տեղը եկած պահին, երբ չարություն է անում,, մի փոքր ապտակում եմ Սպարտակին: Ասում են՝ խորթ մոր ձեռքը ծանր է լինում... Ձեռքս կտաս նրան՝ իմ աջով հարվածի...»: Ազնիվ խոսք, ուղիղ երկու օր ուշքի չէի գալիս այդ պատկերավոր խոսքի ազդեցությունից: Ու վերջին տարիներս էլ, երբ կարդացիսք մեր աշակերտի մոր գրքերը, եղան զարմացողներ էլ, բայց ինձ բնական թվաց նման պոռթկումը, որովհետեւ մի անգամ արդեն տեսել էի դրա հիմքը... Մեծ վշտից մարդու մեջ բացվում են մինչ այդ անտեսանելի շատ կողմեր: Վիշտն, այո, բացում է մարդու լեզուն, նրան, մեր տատիկների կողմից դեռ օգտագործվող



պարսկերեն բառով ասեմ՝ խանանդա /երգիչ կամ երա-  
ժիշտ/ Է դարձնում...

Սպարտակին հատուկ էր պատասխանատվության  
զգացումը: Խոստման տերն էր մնում՝ որքան էլ որ դժվար  
լիներ դա անել: Մենք վստահ ենք, որ նա լավ զինվոր է  
եղել, այնպիսի զինվոր, որին հանգամանքների բերումով  
թշնամին միայն ծանր վիրավոր վիճակում կարող էր գե-  
րի վերցնել: Սպարտակի նմանները հենց այնպես ձեռքից  
չեն տա «վերջին գնդակի» «իրավունքը»... Երանի թե մի  
օր ետ գային մեր անհայտ կորածները՝ Սպարտակը,  
Անդրանիկը եւ մյուս բոլորն՝ ովքեր դեռ կենդանի են...-  
Գային մեր նախկին սաներն ու այցելեին իրենց հարա-  
զատ դպրոցը, մեզ՝ իրենց ուսուցիչներին: Եվ արդեն թե-  
թեւ սրտով վերհիշեինք մեզ ու նրանց հետ տարիներ  
առաջ պատահած ուրախ եւ տխուր դեպքերը»:

Դեռ չեմ վերջացրել, չէ: Թող օրհնվեն /եւ օրհնյալ են/  
բոլոր նրանք, մեծ թե փոքր, շարքային թե բարձրաշ-  
տոնյա , ում բարի խոսքով ու գործով, ուշադրության ան-  
գամ հյուլեի հատկացմամբ սատարել են մեզ: Ովքեր  
ապրելու են մղում մեր վիրավոր սրտերին: Մեծ ու առան-  
ձին տողով օրհնեմ եւ նրանց, ովքեր տեսնում ու գնահա-  
տում են մեր արածը՝ տղաների եւ, ի վերջո, հայրենիքի  
համար: Արդեն քանի՜-քանի տարի է,- անգամ հիմա՝ երբ  
ՀՀ պաշտպանության նախարարի բարձր պաշտոնն է  
զբաղեցնում,- Սեյրան Օհանյանը բոլոր տոների առթիվ,  
անգամ՝ ծննդյանս կապակցությամբ /ինչը կրկնակի է  
պարտավորեցնում ինձ/ շնորհավորական բացիկներով  
ուժ ու եռանդ է ներարկում մեզ, համբերության ու գործ-  
նականության նոր լիցքի մղում... Ինձ միշտ էլ ցնցել է  
նրա մարդկային ու քաղաքացիական նկարագիրը, հու-  
զել են կիրթ պահվածքն ու դիմացինին հասկանալու կա-  
րողությունը: Անչափ բազմազբաղ լինելով հանդերձ՝

մնալ այդչափ ուշադիր մեր կազմակերպության կարիքների ու ճակատագրի հանդեպ, ամեն մեկը չէ, որ կարող է եւ կուզենա, անել: Ես դա ասում եմ՝ ելնելով դառը փորձից... Ինձ համար անգնահատելի են այս բացիկները:

***տպարանում /Բացիկների ֆաբրիմիլեն՝ կարդացվող տեքստերով/:***

Տասնվեց տարի... 16 տարի՝ անագորույն վշտի ու ծանր սպասման մեջ. ի՞նչ եք կարծում՝ ինչպիսի՞ բեռ է: Տասնվեց տարի՝ բախտակիցներին հետ եւ... առանց նրանցից շատերի. կնքել են իրենց մահկանացուն՝ ուշքներն այնպես էլ կորած զավակների ճանապարհին: Աշխատել նմանների հետ դյուրի՞ն է, թե՞ դժվար: Տասնվեց տարի է՝ ժամապահ եմ՝ կանգնած անհայտ կորած ազատամարտիկների հիշատակի պահպանման դիրքում: Դա է իմ գործը, մեկ էլ նեցուկ կանգնելը նրանց ընտանիքներին: Եղած հնարավորությունների՝ եւ կարողացածիս չափ: Սիրտս ու հոգիս միշտ էլ ավելիի մասին են երագել՝ քան հասցրել եմ անել այս կոշտուղաժան աշխարհում... Եվ այն պատվոգրերը, որ կտեսնեք ստորեւ, գնահատականն է գործի համար իմ եւ... հոգնել եմ «բախտակից» ասելուց՝ թող հիմա էլ արտահայտվեմ կայտառ շրջանաձևով «նոր» բառով՝ «թիմակիցներին» թափած ջանքի: Երանի չէ՞ր՝ եղած չլիներ պատերազմը՝ այս ամենն էլ չլիներ... Ո՞վ գիտե, ինչպես կդասավորվեր մեզնից յուրաքանչյուրի կյանքը:

***տպարանում /Պատվոգրերի նկարները /ֆաբրիմիլեները/***

« Արցունքոտ է գիրս եւ գրիչս դողդոջ, զի նորեն եկավ աղետ ու թափվեց արյուն... Ցավ են սփռում զանգերը եւ մութից արյան հոտ է փչում... Երկրի հողը տնքում է չարի

ոտքերի տակ, երկինքը լցվում է նահատակների հառա-  
ջանքով: Մենք ի սկզբանե կյանքասեր՝ ինչո՞ւ եղանք այս-  
պես ողբասաց: Ինչո՞ւ, Տե՛ր: Նրա՞ համար, որ կարգասեր  
ենք եւ արդարապաշտ... Ահավասիկ, դարձյալ եկել է ար-  
յունարբուն՝ բերելով արցունք ու ավեր, ու նորեն պիտի  
գա, ու միշտ պիտի գա, զի կարեկից է ամենայն ոք, բայց  
ոչ օգնական...»,-այսպես կհառաչեր միջնադարի մեր  
տխրադեմ կենսագիրը՝ կանթեղի վիատ լույսի ներքո  
մատյանին հանձնելով հերթական գույժը, մեզ պատու-  
հասված, պարտադրված պատերազմը՝ իր քստմնելի ու  
դժոխային բազում զոհերի եւ բյուր-բազում վիրավորնե-  
րի, գերեվարված՝ անհայտ ճակատագրի տեր ազատա-  
մարտիկների տեսքով...

« Արցունքոտ է գիրս եւ գրիչս դողդոջ... Չի կարեկից է  
ամենայն ոք, բայց ոչ օգնական...»: Նույն անփարատելի  
ցավն ու կսկիծն է պատել հոգիս, ծանր ու թունավոր կա-  
պարի պես խառնվելով արյանս գնդիկներին՝ քսաներորդ  
դարավերջի քաղաքակիրթ համարվող միջազգային  
հանրության աչքին ի տես, ականջին ի լուր: Ողջամտու-  
թյունն ու արդար բանականությունը տեղի են տվել կեղ-  
ծուպատիր այլազան կարգախոսների առջեւ, եւ Մոլորա-  
կը վերածվել է անբարո եւ տմարդի ասպարեզի: Ահա թե  
ինչու եմ կրկնում միջնադարի մեր ցավեղբոր արյունալից  
հառաջանքը:

Խորքային ձեւակերպումներն էլ այս պարագայում ան-  
զոր են՝ տվայտանքներիս, մարմնակեղեք ու հոգեմաշ  
ալեկոծումներիս մասին լրիվ պատկերացում տալու,  
քանզի բարոյականությունն ու քաղաքակրթությունն  
օտարված են, իսկ հրոսակների բարբարոսական ոռնոց-  
ները, թալանն ու ավերը, արյունահեղությունը տիրել են  
աշխարհին: Դարերի հոլովույթում մեր մեջ շատ բան  
փոխվեց, աշխարհն էլ առաջընթաց արձանագրեց, բայց

մեր շուրջը, մեզ համար գրեթե ամեն ինչ նույնն է մնացել: Օտարի անբարոյականությունը, հարեւանի նենգադավ թշնամանքը, մեր արդար իղձերի ու ստեղծագործ արարումների դեմ մոլեգնող գազանային չարամտությունը արդ նույնն են՝ ինչ բազում դարեր առաջ: Աշխարհը լոկ թվացյալ արդարամտությամբ է փորձարարական նախաձեռնություններով հանդես գալիս, քաղաքակիրթ ու ժողովրդավար երեւալու կեցվածքով:

Թվում է՝ կարեկիցն է մեր / մերթ՝ ժպտալով, մերթել կոշտ կեցվածքով/, բայց իրականում նրա անդավաճան ուղեկիցն է քողարկված կամ բացահայտ շահը, շահախնդրությունը, քաղաքական ծխածածկույթն ընդհանրապես:

Իսկ ովքե՞ր են ոռնում-վայնասուն բարձրացնում մեր անկախության դեմ, սուր ճոճում մեր ճակատագրի վրա, կեղծում մեր պատմությունը, ոչնչացնում մեր դարավոր մշակույթը. ովքեր ո դարասկզբին իրագործեցին Յեղասպանություն, իսկ դարավերջին՝ պատերազմ...

Կայսրապետության բոլշեւիկ ջոջերն էլ պակաս թշնամանքով չէին տրամադրված մեր ազատագրական պայքարի «իններորդ ալիքի» դեմ: Պաշտոնական Կրեմլին թվաց, թե ահեղացունց երկրաշարժը մեկընդմիշտ պատմության վիհը նետեց հայ ժողովրդի, տվյալ պարագայում՝ Արցախ աշխարհի, արդարության կոչնակը, խաղաղ ու հավատավոր հանրահավաքների հուժկու եւ տեւական մակընթացությունը:

«Գենսեկը» եկավ ու տիրաբար կանգնեց հայոց հիւսվուրց հողի վրա, ականատես եղավ փլատակներին, լսեց աղետյալների ցավագին ճիչն ու լացուկոծը: Նրան թվաց՝ ամեն ինչ կործանված է, բնական, թե արհեստական աղետն ամեն ինչ գլխիվայր շուռ է տվել, բայց անգամ այդ օրհասական ու ողբերգական պայմաններում աղետ-

յալները «Ղարաբաղ» էին մրմնջում, վրեժի ու ցասման կոչ էին հնչեցնում: Միապետը վճռականություն նշմարեց աղետյալների շանթահար ու խելակորույս հայացքներում եւ զարմացավ, սարսռաց ու սաստեց... Բայց դարավոր իղձը, անկախության երազանքի իրականացումը տարրալուծված էր բոլորի արյան գնդիկներում, եւ լաբորատոր ոչ մի փորձարարություն չէր կարող նրանց միջից հանել ինքնության, ազատության, անկախության գաղափարը: Դա արդեն գաղափար չէր, այլ մաքառումի ուխտ, սրբազան պայքար, մարմնի ու հոգու ձուլը դաշնության մարտակոչ, բանականության զգացողություն, հավատավորի համոզվածություն, հայրենիքի սեր, ինքնավերածնման ու ինքնահաստատման ահեղաձայն շառաչ...

Այս ամենի մասին, արդարեւ, դեռ շատ ասքեր, երգեր ու վեպեր կգրվեն, քանզի մեր նոր ժամանակների էպոսային պատմությունն է Ղարաբաղյան շարժումը՝ իր բազում դավիթներով, փոքր միերներով... Ինչ այս կենսապատմանն է վերաբերում, մի վերջին անգամ եւս պիտի շեշտեմ, թեեւ անձնավորված է՝ կոնկրետ ինձ՝ անհայտ կորածի մոր՝ Վերա Գրիգորյանին է վերաբերում, բայց իմ ցավի եւ առ Աստված հառաչանքի, աղոթքի, հույսի ու խաբկանքի տեսիլներում բոլոր մայրերի ներկայությունը կա...

Չոգուս վերքն է ստիպել այս անգամ էլ գրիչ վերցնել, որպեսզի արյան հիշողությունը չմթազևի քաղաքական, սոցիալական վերուվարումներում... Քանի օր առաջ անհայտ կորած ազատամարտիկի մայր Վալյա Միրզոյանը եկել էր մեր միություն՝ դեռ մուտքի դռան մոտ՝ կորցրեց գիտակցությունը... Որքան հասկացա հետո՝ իր պատմած-մինչ վերջ չպատմածից, սովից էր: Առավոտյան տնից դուրս է եկել՝ առանց կոկորդով պատառ անցկաց-

նելու...Ի՞նչ անցկացներ: Երբ բացատրեց տան ու իր վիճակը, սիրոս այնաստիճան սեղմվեց՝ ասես մի պտղունց դարձավ: Նստեցի՝ իր հետ լաց բռնեցի: Նյութապես օգնելու բան չկար «պահեստում», ձեռքիս տասը հազար դրամը տվի իրեն: Ինձ հոգեհան արեց հուսահատության պատին սեղմված այդ կնոջ ուրախությունը, երբ իր ավիում տեսավ գումարը: Ինչպիսի՞, բա չասե՞մ, վիրավորական վիճակ: Ինչի՞ կամ ինչքա՞ն պիտի հերիքի տվածս... Ինձ համբուրում էր ու խոսու՛մ-խոսում. «Էդիկիս անհայտ կորչելը քիչ էր՝ 31 տարեկան աղջիկս էլ մահացավ... Չետո էլ կորցրի ամուսնուս. երեխայի՝ այդ տարիքում կորստին չդիմացավ: Չիմա մնացել եմ չորս պատի արանքում մենակ... Աստծո խիղճն ինչպե՞ս է տալիս՝ մի մարդու ուսերին այսքան շատ ու դաժան բեռ դնի, ու՞մ եմ ինչ արել: Դե, թող իմ հոգին էլ միանգամից վերցնի՝ ինձ ազատի ես խավար կյանքից»:

Կյա՛նքը... Մեր կյանքն այնպիսին դառնա՛ չխունանա հավատը մեր մեջ: Չեմ մանրում՝ ինչի հավատը: Չավատը մե՛ծ ուժ է, ապրել ցանկանալու կարելոր գումարելի... Իսկ Չավատի ու բարի վարքի, բարի արարքի, բարի կամեցողության հանդեպ մարդուս երախտագիտությունը՝ նր. հիմա էլ դրանից խոսեմ: Իմ բախտակիցներն այդ առումով գրեթե անհամեմատելի են: Նրանց ծառայելը, նրանց դարդին թեկուզ չնչին չափով դարման անելն ինձ համար «ի պաշտոնե» պարտականություն էլ է, բայց նախ եւ առաջ՝ պարտք է հոգու եւ հոգու կանչ, ցանկություն: Ինձնից շատ ո՞վ կարող է իմանալ նրանց կարիքների, հուզող՝ լուծելի կամ անլուծելի խնդիրների մասին: Չեմ մոռանում մի դեպք, որ պատահել է 2000 թվականին: Վարչության նիստի էինք, ներս մտավ խուրջինս ուսին մի գյուղացի՝ թարմ գոմահոտով... Նիհար էր, մորուքով: Աչքերում՝ ցավի անանց դաջվածք: Ասաց՝ Վերա

Գրիգորյանին է ուզում...Անհետաձգելի հարց էինք քննարկում, անդրադառնալի իրեն՝ նիստը պիտի ընդհատվեր, ինքս էլ չգիտեմ ինչպես խելքիս փչեց ասել՝ Վերան գնացել է ժողովի, չե՞ք կարող ավելի ուշ գալ... Ասաց՝ եղ դեպքում կարելի՞ է ձեզ առանձին մի բան ասեմ՝ իրեն հաղորդեք: Ինչու՞ չէ: Թե՛ ես անհայտ կորած Արամ Սահակյանի հայր Ռաշիդն եմ, գյուղ վերադառնալու համար ավտոբուսից չպետք է ուշանամ... շիքիլը ինձ ցույց չե՞ս տա: Առաջին պահ չհասկացա ինչ ասել է «շիքիլ», իսկ երբ ուղեղիս հասավ, հարցրի՝ ու՞մ շիքիլը: Թե՛ եղ Գրիգորյանի, էլի: Պատմեց.« Քանի վախտ առաջ նա օգնություն է ուղարկել մեր տուն՝ յուղ, ձեթ, շաքար, ամեն ինչ... Մեր ընտանիքի համար դա մի Էնպիսի ժամանակ էր, որ ոսկու տեղ անցավ ուղարկածը... Դե, մեր կնիկն էլ, ջանիդ մատաղ, ես խուրջինն ինձ տվեց, թե՛ տար, թող իմանա, որ շնորհակալ ենք ... Որ թողնեմ էստեղ՝ չե՞ք տա իրեն»: Ասացի՝ ոչ, Վերան կբարկանա, հետո էլ կատակեցի՝ թողնեք՝ ուտելու ենք... Թե՛ վնաս չունի, մի առանձին բան չէ, մի քիչ սեզն ա, մի քիչ գկեռ, մի բոթուլ էլ հունի արաղ, ես եմ քաշել: Լավ, որ Էդպես ա, ես գնամ, չխանգարեմ ձեր գործին»: Լիքը խուրջինով էլ հետ դարձավ: Տարիներ անց, երբ նա, արդեն գործնական խնդրով, այցելեց մեր գրասենյակ, նեղացած ասաց՝ Անհայտ կորած ազատամարտիկներին նվիրված օրացույցում հետո տեսել եմ շիքիլդ ու ճանաչել... Զիմա դո՛ւ ասա՝ ո՞րը կլինի տեղին՝ ճակատդ համբուրե՞մ, թե՞ մի լավ ծեծեմ... Նրա՛ հարազատի տոնով ասած այդ խոսքից ես ինձ վարձատրված զգացի: Լսու՞մ եք, մարդիկ, աջ ու ձախ անցնելիս մի պահ լավ նայեցեք ձեր շուրջը. գուցե ցավող սրտի տեր մարդ կա, որին ձեր մի խոսքը կարող է թեթևություն պարգևել՝ երախտագիտություն ծնելով հոգում:

Այնպիսի՛ն դառնա կյանքը՝ բարեգուրկ մարդ չլինի

մեր շուրջը: Մեր հույսը մարմին առնի, մեր վրեժի զգացումն ու ոգու կանչը փոխանցվեն սերնդեսերունդ, եւ լինի այնպես՝ տուն վերադառնան անհայտ կորած մեր զավակները:

**Ապրել ասվածը մեզ համար հենց այնպես ասված խոսք է... Այդուհանդերձ՝ մենք՝ անհայտ կորածների մանավանդ մայրերս, հուսախաբ էլ՝ քայլող հիշողություն ենք:**

**Հիշողություն՝ որը հրամայում է... խոսել:**

**Ուրեմն՝ մինչ նոր հանդիպում:**



ՎԵՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ԺԱՄԱՆԱԿԸ՝  
ԻՄ ՄՏԱՊԱՏԿԵՐՈՒՄ**

*Չեղիկնակն իր շնորհակալությունն ու երախտագիտությունն  
է հայտնում գրքի հովանավոր՝  
Արտեկ Ալեքսանդրի Մաղաքեյանին*

Խմբագիր՝  
Սրբագրիչ՝  
Շարվածքը՝  
Էջադրումը՝

Չենրի Առուշանյան  
Իրենա Մարտիրոսյան  
Գայանե Խաչատրյանի  
Լուսինե Բաղդասարյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84/16:  
Ծավալը՝ 8.5 տպ. մամուլ + 48 էջ ներդիր: Տպաքանակը՝ 250:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում  
Յ. Յակոբյան 25  
Ստեփանակերտ - 2011